



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17163.

Անխտագ-

Գաւառացաւէ Երզնէ

Ապր- Եւապր 1859թ.

891.99

Ա-39

2010

!


09/2006

1

ՀԱՐՔԱՆԵՐ



Ի Ե Յ Ը Ս Ը Ն Ի



ՏԵՏՐԱԿ Բ.



110508-42

-38123-

891.99

0-39.ՕՒՆԱՌՈՒՆ ԵՐԳԻՔ

Տ. ՊԵՏՐՈՍԻ Տ. ՅՈՎԱԿԻՓԵԱՆ ՄԱՒԱԹԵԱՆՑ

2

Հ Ա Մ Ա Խ Ե Ց Ի Ո Յ

Ս Է Յ Ն Ե Կ

Մ Ե Կ Ե Ն Ո Ւ Ե Ն Ե Լ Ո Յ

1008
38123

'ի լոյս ընծայեաց

ՈՍԿԱՆ Տ. ԳԻՈՐԳԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ

Ե Ր Ն Ի Ե Ն Ե Ց Ի

Լուսինքն Երևանի քաղաքում
և քաղաքում և քաղաքում Երևանի քաղաքում
Գիտությունների Գրականության Կոմիտեի 1.

Ի ՄՈՍԿՈՒԱ

Ի Գրականության Կոմիտեի Կառավարությունում

1859.

ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ,

на основании отзыва Г. Адъюнкта Профессора Бероева, съ
тѣмъ, чтобы по отпечатаніи было представлено въ Ценсурный
Комитетъ узаконенное число экземпляровъ. Санктпетербургъ.

14 Сентября 1857 года.

Ценсоръ В. Бекетовъ.



ՆՈՐԻՆ ԳՆԻՐԱՅԻՆՆԵՐԻՆ

ԴԵՅԻՍՏՎԻՏԵԿՆԻ ՍՏԸՏՍԿԻ ՍՈՎԵՏԵԿԻ

ԵԼ

ԶԱՆԱԶԱՆ ԿՇԱՆԱՑ ԱՍՊԵՏԻ

Տ. ՍԻՄԵՕՆԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍՈՒՎԹԻՆԵՇԱՆՆԵՐ

Ի նշան անկեղծ երախտադիտութեան
ջերմեռանդութեամբ և յարգանք նուիրել

՚ի լոյս ընծայողն:

ՀԱՄԱՌՈՑ ՏՆՂԱԿՈՒԹԻՒՆ

Զ Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ե Տ Ե Տ Ր Ա Կ Ի Ս



Հայոց Մենի մայրաքաղաքի վերջին աւերման
ժամանակն, երբ նորա բնակիչքն՝ զիւրեանց ըն-
տանիքն առած, փախչումէին խումբ խումբ յայլ
և այլ ծագս աշխարհի, խումբ մի ևս եկաւ Մը-
ցախայ երկիրն, որ այժմ Ղարա-բաղ¹ կոչի, 'ե
թիւս որոց էր ոմն յիշխանական տոհմէ Մեւիթ-
Մատթէոսն՝ Մեւիթ - Մադաթեան: Սա՛ հան-
դերձ իւր գերդաստանաւն, բնակեցաւ Մըցախայ
երկրի Աարանդ գաւառի Մետարանոց անուա-
նեալ գիւղաքաղաքումն, որ Տաճկերէն Չանախէ
կոչի: Սորա թոռն՝ Մայիլ - Մեկն, ամուսնա-
ցեալ ընդ Մարիամ անուն օրիորդի՝ քեռ Մեւիթ
Շահնազարայ 16րդի, ծնաւ զերկուս որդիս. յորոց
անդրանիկն Հախնազար - Մեկն էր, և կրտսերն՝
Մադաթ - Մեկն: Սոցանից առաջինն ծնաւ զհինգ

1. Սևոյ գիւղ:

որդիս, որք էն Մ. Բրահամ-Տէկ, Գասպար-Տէկ,
 Տաղդասար-Մ. Ղա, Սահակ-Մ. Ղա և Լսայի-Տէկ .
 իսկ երկրորդն (Մ. Գարսի-Տէկ) ծնաւ զերկուս որ-
 դիս՝ զՎեարոս - Տէկն և զՄ. Իրզա - Մ. Բրահամն :
 Արդի յիշատակեալ Հախնազար - Տէկի՝ Լսայի
 Տէկն 1796 թուին, երբ Պարսից Մ. Ղա - Մ. Բրահամ,
 մէդ-Շահի զօրքն յարձակեցան Մ. Բրահամ վերայ,
 կարի շատ վախենալով այս արիւնարբու Շահին՝
 առաւ զիւր կինն և զիւր միամօր որդի Յովսէփն
 ու փախաւ՝ գնաց Շիրուանայ երկիրն . ուրանօր
 էր յայնժամ Օսրովար Կոմսն Ռուսաց Ալեք-
 րիան Օբեքովն : Յետ վերադարձի Կոմսիս 'ի
 Ռուսաստան, յիշեալ Յովսէփն Մադաթեանց՝
 տեսանելով, որ Հայոց Իշխանական արտօնու-
 թիւնքն ու իրաւունքն բնաւին յարդի չէն Տաճկաց
 մէջ, և կամելով անկորուստ պահպանել գոնե
 զիւր նախնեաց պայազատութեան ստուերն, ըն-
 կալաւ աւագ քահանայի աստիճան : Շիրուանայ
 երկիրն Ռուսաց իշխանութեան տակը մտնելոյ
 ժամանակն, երբ Ռուսք և Պարսիկք պատերազ-
 մէին միմեանց հետ 1826 թուին, եցոյց նա զանա-
 զան ծառայութիւնս Ինքնակալ Այսեր Ռուսաց,
 և արժանապէս ստացաւ առատաձեռն Այսերէն
 մշտն ջեւաւոր հասոյթ (պէստիս) . զոր այժմ վա-
 յելումն նորա ընտանիքն՝ յետ նորա մահուան :
 Աոյն այս աւագ քահանայ Տ. Յովսէփն Մադա-

Թեանց ունէր զերկուս որդիս՝ զՊետրոսն և զՄի-
քայէլն . յորոց առաջինն՝ ծնեալ 'ի 1810 ամի,
ուսեալ 'ի 1822 ամէ մինչև ց1827 'ի ՆԵՐՍԻ-
ՍԵՆՆ պայծառակառոյց և ազգօգուտ Վարոցի, որ
'ի Տփլիս, առ ոտս 'ի Տէր հանգուցեալ գիտնա-
կան Յարութիւն Արդապետի Վլամբարեանց,
եմուտ 'ի ծառայութիւն Տէրութեանն Ռուսաց,
որ այժմ ունի զաստիճան Ռչաբէ - Ռօպիտիտէ՝ 'ի
կարգէ հեծելազօրաց: Սա՝ 'ի բնէ ունելով բա-
նաստեղծական ձիրս, պարապումէր միշտ ազգային
երգերի, խաղերի և մուխամմազների շարադրու-
թեան, գրելով՝ իւր իսկ անուան տեղը՝ զմակա-
նունդ Անյետ¹, որ ըստ Պարսից Արտուր կամ Արտու-
հան նշանակէ: Տայց՝ այն ինչ միամօր որդի սորին,
Վալերիան անուն, զրաւեցաւ 'ի կենաց, ութու-
տասնամեայ գոլով, 'ի 1848 ամի՝ Մայիսի 9 'ի
Ս-Պ-Տուրգ Ղուաջին կարէտսկի կորպուսումն,
դադարեցաւ նորա բանաստեղծական պարապմանց
ընթացքն և գրեթէ շիջաւ Արգէին առաջին
մեծաբորբոք աշխոյժն ու եւանդն: Յետ ժա-
մանակաց ինչ, որդիացուցեալ ինքեան զութու-
տասնամեայ Յովհաննէսն Տաբայեան Վղեքսան-
դրուպօլցի և նովաւ, իբր թէ, մուացման տուեալ

1. Յանկալի՝ երգեպէլ՝ ըէ որով արդէօր գիտաւորաւնէամբ
յարկացրել է ինքեան Տէմիտան Արգէին պայս Տանտետան:

զանմուսանալին կորուստ սիրելի որդւոյ իւրոյ,
 դարձեալ սկսեց ըստ առաջնոյն պարապել շարա-
 դրութեան ազգային երգերի, խաղերի և մու-
 խամմազների • որովհետև և ոմանք 'ի Հայազգի
 ազգասիրաց թախանձանօք յորդորումէին սու այս
 ձեռնարկութիւն բազմաշահ: Իսկ 'ի հայրենի լե-
 զուէն՝ գիտէ սա և օտար լեզուս, այսինքն՝ Ռու-
 սերէն, Ալբացերէն, Վարսկերէն և Լատւրաւա-
 կան բարբառը • որովք նոյնպէս ազատաբար խօ-
 սում է և գրում երգեր, խաղեր և մուխամմազներ •
 ինչպէս որ ինքն ևս հաստատումէ, ասելովն «Հա-
 յերէն, Ռուսերէն, Գարսի, Թատրի Բարբառեցի» — իւր
 մուխամմազի մէջ¹: Արոյ ճշդ տունն կարդալով՝
 տեսնումենք, որ սորա երկասիրութեանց թիւն
 մինչև 300ն է հասել • քանզի ասէ՝ «Սրտնով եմ
 խօսեցի երէտ հարեւրն լրացում»: Լոյս մուխամմազս,
 կարծեօք, գրած պիտի լինի երևելի Արգիշն դեռ
 1848 թուին, որպէս երևումէ նոյն իսկ ճշդ տան
 երկրորդ տողէն «Լոյս է ձեռնի գրած, չուն որպիսի հարեւր
 լրացում», որ պարզապէս ցոյց է տալիս Արգիշի որդ-
 ւոյ մահուան տարին, որպէս և նորա պարապմանց
 դադարման ժամանակը: Չիք կարծիք, որ բազ-
 մահամբաւ Արգիշն, արդի Արոյն Հայկազանց,

1. Տէն «Նոր Քնար Հայաստանի» փոխառ 'ի Մու-
 հրաւ 1857 տի, փոքրահ Մ. Երէն 87, փող 3.

1849 թուէն և այսր յօրինած լինի, եթէ ոչ աւել
 լի, գոնէ նոյնքան երգեր, խաղեր և մուխամմազ
 ներ, որքան որ յօրինել էր ցմահն որդւոյ իւրոյ:
 Բայց ասոնս, որ բոլորն չհասին մեր ձեռքն,
 որպէս զի տպագրութեամբ հաղորդէինք մերայ
 նոց, անմահացնելով միանգամայն մեր բազմաշխատ
 Արգի անունն: — Զառաջ էր սա Գաւառա
 պետ (Участковой Засѣдатель) Սարգսիւն ան
 ուանեալ գաւառումն. յետոյ Սարգսիւն. յե
 տոյ Մարտիրոսիւն. յետոյ Նին-Նախիջևա
 նի և Գարալագեազու նահանգաց. իսկ այժմ
 ունի թաղապետութեան պաշտօն (Приставъ)
 Արևան քաղաքի: Այլ որովհետև կարիճչմար
 տասէր ոմն է, որպէս և՛ անաչառ և՛ անկողմնասէր
 և՛ կաշառ չուտող և՛ իրաւադատ և՛ հասարակ ու
 զրկեալ ժողովրդեանը միշտ պաշտպան, որպէս
 պատկանի ճշմարիտ քրիստոնէի, վասն որոյ շատ
 անգամ քննիչ (ревизоръ) է կարգուել զանազան
 Գաւառապետների վերայ, և նոցա շատերին գոր
 ծից հրաժարել է տուել - նոցին անխղճմտութեան
 համար ու զրկողութեան, որպէս և նոցա օգնա
 կաններին ու թարգմաններին: Զոյր սակս՝ թէև
 սա ատելի է ոմանց, սակայն իւր ճշմարտութեան,
 իրաւասիրութեան ու կաշառ չուտելոյ համար ան
 չափ սիրելի է յաչս ժողովրդեան՝ անդր քան զկով
 կաս եղեալ նահանգաց: Աւստի և անմահ անուն

Եւ թողել Տէրութեան բիւրաւոր հպատակաց
 Եւրախտագէտ սրտովը, որք օրհնեն զսա'ի սուրբ
 Եւրտէ և զկարգիչ սորին: Այսպիսի պաշտօնատարք,
 Եւ հարկէ, դիւրաւ հակեցուցանեն անկիրթ ժողովրդեան
 միտքը դէպ'ի ջերմեւանդն ծառայու
 թիւն՝ Տէրութեանն, քան թէ միւսքն, որք իւր
 եանց կաշառաւութեամբն ու զրկողութեամբն
 զրգուեցնումեն զժողովուրդն և հարկադրումեն
 զնոսա՝ ոչ յուղիղ սրտէ՝ այլ համարեալ թէ առ
 երեսս միայն և ակամայ կամօք կալ'ի հպատակու
 թեան, մինչ ցյաջող դիպուածն. ինչպէս գործով
 իսկ ապացուցին խարդախ, տիրանենգ և դաւաճան
 Սահմետականք պատերազմի ժամանակն, որ եղև
 1853, — 54, — 55 և — 56 թուերին:

ՍԼՅՅԵՆՏԻ ԵՐԳԵՐՆ

Ը որ Էղտնաէի Էրգոյն « Երկու ձեռին երկու մում »
առաջէլոյ 'ի գիտնաւան Յարու-ըի-ն Ա, արդապէս
Մ, լաճարէանց :

Աշխարհն է քեզ օրինակ, դու ևս վարուիր նոյն գունակ,
Եթէ ներհակ ընթանաս, միշտ ապաքաղդ կու մնաս :

Դառն է աղքատաց լեզուն, յիմար հարուստն է գիտուն.
Փոխուելայ կերպն աշխարհի, դու ևս նրան խոնարհի :

Մէկն վատ՝ մէկն դոված, մէկն կուշտ՝ մէկն սոված,
Կամիս լինիլ Տրամաբան, ահա քեզ հակասական :

Աշխարհն է մէկ ետնահայր, ժամանակն՝ անգուծ մայր,
Թէ չի վարուիս ըստ կամաց, չէն տալ քեզ ուտելոյ հաց :

Սէյեադ, էնտուր չունիս հաց, որ չէս վարվում ըստ կամաց,
Եթէ միշտ այդպէս լինիս, իմացիր՝ կու փոշմանիս :

18³/₉57. 'ի Ա, այոյ Չարի Հայոց :

Լ. Երասի գէտն Հայաստանի

հանգոյն «Մղլամա, մարալ, գեալլրամ» Էրգոյն :

Մամաւիքէ քո խոյս աալն՝ էր մեր դժբաղդուծեան ֆալլն.
Դու խոյս ետուր՝ էհաս լալն, անյաղթ Երասիս, անբաղդ Երասիս.
Մարդ չկայ՝ որ օգնէ ցաւիդ, ծովի մէջ ընկղմեալ նաւիդ 1 :

Մեծ քաղաքներով զարդարուած, ափերիդ հարս աղջիկ շարուած.
Վերջն մնացիր մուրուած, անյաղթ Երասիս, անբաղդ Երասիս :

Եղերքիդ պայծառ այգիքն, որոց մէջն էր բարեօք լիքն,
Աւերեցին թշնամիքն, անյաղթ Երասիս, անբախտ Երասիս :

Զուրրդ Եդեմայ կենսաբեր, կ'յառնէր, թէ մեռեալ ըմպէր.
Այժմ լակեն մրոտ Քրդեր, անյաղթ Երասիս, անբաղդ Երասիս :

Ընկերացդ մէկն Ատուրեան, մէկն Կուր գետ և ջուխտ Արփան,
Կապուտ գետ, Աղսու, Գարդըման, անյաղթ Երասիս, և՛ն :

Գեանջայ, Զակամ՝, Թավուզ, Խրամ, Քիւրակ Չայ, Հասան,
Աւազան, Ախստափայ և Ալջիկան, անյաղթ Երասիս, և՛ն :

Ղոյսու, Ռուբաստ, Սամուր, Թանկի, Ղուդեալ, Ամուր,
Օզան, Խաչին, Թիւրդեան, Թառթառ, Կառկառ, Համքուր :

Զանգու, Քասախ, Աբերդ, Գեհան, Տիգրիս և Մժնկերթ,
Գայլ գետ, Գառնի, Սարղամ, Ճօրօխ, Բաբերթ, անյաղթ և՛ն :

Ղոզլու, Փիրսահաթ և Զըրմուտ, Կատեխ, Զանտանրուդ,
Թօնայ, Թալայ, Նէվայ, Էշել, Պրուտ, անյաղթ և՛ն :

Թէմզայ, Վեսլայ, Ռիօն, Նէման, Գանդէս, Ամուդարեան,
Եփրատ, Նեղոս, և սուրբն Յորդանան, անյաղթ Երասիս, և՛ն :

Ունեւով այսքան օգնական, չեղեր հայրենեաց պահապան,
Թադդ, Գահրդ դերի անկան, անյաղթ Երասիս, և՛ն :

1. Մ. Բեհայն գրանց Վերջումն էրէնէա՛ զայս գրող :

Ինչ եղենք թաղաւորքդ, մեծաշուք իշխանաւորքդ,
Ապարտելի զէնքդ՝ զօրքդ, անյաղթ Երասխ, ևն :

Փոխան կարմրոյ զգեցար թուին, կերար ամէնի գլուխն
Շիջաւ Հայաստանի մուխն, անյաղթ Երասխ, ևն :

Սէյեադն եմ՝ դարդերիդ վկայ, առողջանալոյդ ճար չկայ .
Իցէ թէ յերկնից բժիշկ դայ, անյաղթ Երասխ, ևն :

18⁶/₆ 57. 'Է Այսոյ Յորն Հայոյ :



Ըստ Էղանակի () Կանգնան («Սարի աշքն») Էրգոյն :

Սէր սոխակի առ կարմիր վարդ

Ե խղճալոյն անդերծ թակարդ . վայ ինձ, վայ ինձ .

Թշուառ վիճակ սիրահարին

Չէ լիովին ճառեալ մինչ ցարդ . վայ ինձ, վայ ինձ :

Սիրտ զայրացեալ է սգաւոր,

Որ ո՛չ կարէ զգենուլ զարդ . վայ ինձ, վայ ինձ .

Լացէք դուք զօր խեղճ սոխակի,

Անշահ տքնի նա՛ իբրև սարդ . վայ ինձ, վայ ինձ :

Կա անդադար այրի սիրով,

Խորն խտտէ վարդըն հանդարտ . վայ ինձ, վայ ինձ .

Ան վճիռ՝ ո՛չ յոյժ արդար,

Եթէ դավեմ, կուլիմ տմարդ . վայ ինձ, վայ ինձ :


Ի ձախ ժամու մաքուր սիրով,

Ճգնաւորն լինի կախարդ . վայ ինձ, վայ ինձ .

Սէյեադ, փախիր դու յայն սիրոյ,

Որ սիրտ չարին առնէ զուարթ . վայ ինձ, վայ ինձ :

18¹/₅ 57. 'Է Այսոյ Չորն Հայոյ :



Ի շէճաց այնպէ՛հ , որք զառամեալ գըլով՝ առնաւն
'ի հնաւիւտն ինքեանց զնորահառ աղջնաւն :

Դու նոր վարդ ես՝ տերև բացած ,

Ես ծեր ստիակ եմ՝ սառնացած .

Քոյ սիրտդ նոր է արթնացած ,

Իսկ իմն՝ վաղուց թալկացած .

Ե՛ր չի պիտու՛միր հասկացած ,

Որ մեք միմեանց հետ չեմք սաղիլ :

Ես զառամեալ մարդկան շարին ,

Դու նոր մտած քսան տարին .

Ես մեռելոց ճանապարհին ,

Դու զարդարեալ սենեակ շարին .

Ճնաղքդ քեզ իմաց չ'արին ,

Որ մեք միմեանց հետ չեմք սաղիլ :

Քոյ միտքդ պըռօշտում՝ պաքում ,

Իմ միտքս ժամ՝ պատարազում .

Քոյ կամքդ սէր է հուշակում ,

Իմ կամքս առ մահն է հակում .

Մնձ է սիրտդ չէր դուշակում ,

Որ մեք միմեանց հետ չեմք սաղիլ :

Ինձ եար է հարկաւոր նուաաս ,

Քեզ հարկաւոր է վեղը հաստ .

Ես մին խղճուկ և աննպաստ ,

Դու սիրոյ գինով արբեալ՝ մաստ .

Արի՛ , արա՛ զիս մուրախաստ ,

Որ մեք միմեանց հետ չեմք սաղիլ :

Ես Սէյեադն եմ՝ սրտումս դաղ ,

Դու սէյդն ես՝ դամաղդ չաղ .

Արի՛ , մանենք ծածուկ օթաղ ,

Խօսենք՝ մինչ երգի աքաղաղ .

Եւ ո՛վ կասի՛ շանիդ մատաղ ,

Թէ մեք միմեանց հետ չեմք սաղիլ :

11. անն այնպէս, որտ անհայ գնէլով և Քրիստոս-ընդէն
խօսէլով՝ զինքեանս գիտուն համարէն :

4

Քիթո թամբել ես չէշմակով,
Վարժ խօսումես Ֆռանդի լեզուն.
Մտօք յիմար ես՝ որպէս կով,
Բայց քեզ կարծումես իմաստուն :

Չէշմակն՝ թէ խելք ունենար,
Շինող Ջհուդներին կուտար.
Որ շրջում են իբրև օտար,
Չունեկով օթեան և տուն :

Նախնական ծէսը ատողին,
Հին ատաթից դանդաատողին,
Անծանօթ բան պառատողին,
Աշխարհն կու կոչէ մէյմուն :

Չէշմակն դիժին ինչ անի,
Որ իսկ նման է անբանի.
Նրանից լաւ է Շաբիանի,
Հաւատարիմ որսկան կատուն :

Մեծէ համայն Ֆռանդստան,
Ուր Ֆռանդերէն կու խօսան,
Երբէք յիմար մարդիկ չ'կան,
Որ ասես՝ է իսկ անասուն :

Յիմարն անտաշ արձան է,
Մարդոյ շարքին անարժան է.
Ինչ ազգ լինի նա՝ անբան է,
Իմացած լինիք հաստատուն :

1. Շաբիանն է՝ ի Շաբախա-Երէրէ գետը, յորում գտն
հասարակ յարկանդամս և անխնայօրէն ստորակէտ ճկանց :

Ինչ մեղաւոր է չէջմակն ,

Որ կոյր լինի մտաց ակն .

Մեթէ խօսելով թուրթակն

Ֆուանդաւոր , կուլի գիտուն :

Սէյեանդ , էր չես չէջմակ դնում ,

Գիտունների շարքն մտնում .

Խալխի միննաթից պրծընում .

Մեթէ լաւ է կոչվել նրկուն :

Պ. Ս. Սեւակեան

Ո՛վ որ բացաւրէ , նա լաւ պղայ է :

Լայնասարած ջուր , միտք չեն կարենում գտանել եզերք .

Խաւար աղջամուղջ , աչք ոնց են կարող շաւիղ տեսնել .

Այսպէս անդնդին , անհամար դնդին բաւ չեն տիեզերք .

Սոյնպիսեաց վերջին , առանց Արարչին , չէ մարթ հատանել :

Գիշեր և ցերեկ ո՛հ՝ ո՛հ կոչողին աւանդն ինչ անէ .

Այնպէս վատ ցաւին , ասումեն , բնաւին դեղուճար չկայ .

Մոծակն՝ թէ որ հողմոյ ձեռք անկաւ , յոյժ յայտնի բան է ,

Նորա փրկութեան , ՚ի ձեռն օգնութեան , էլ հնար չկայ :

Հողմն և հուրն , հողն և ջուրն միմեանց են ներհակ .

Եթէ միանան , աշխարհին համայն պատասխան կուտան .

Ի խաղաղութիւն մարդկային բնութեան նոքա զվիճակ

Հակառակութեան՝ երկպառակութեան գտին մըշտական :

Ո՛վ միտք , ո՛ւր փախար , արի՛ , զիս փրկեա՛կս ծանր գործից .

Ինքդ ըսկըսար , դժուար է տեսար , իմ վզիս թողար .

Դու ընդէր պիտես շուտով հրաժարիլ այսպիսի փորձից .

Լաւ է՝ մօտ արի՛ , գործդ կատարի , այդքան մի՛ դողար :

Սէյեանդ , քոյ սիրտդ՝ ձայնդ և լեզուդ չեն իսկ համաձայն ,

Թէ որն ինչ է կամենում , երբէք մարդ չի հասկանալ .

Կամքդ սնտի , ձայնդ աննշան , բառերդ ունայն ,

Այդպիսի հրէշեց , ահարկու դէշեց պարտ է ստականալ :

Այսին սահմանափակման ամենայն բանի :

Աշխարհումն ամենայն բան մին դատարի ձայն է, խմացէք 1
Դիտե՛ք անհիմն են, իսկ հիմնաւոր Աճ միայն է, խմացէք 2 :

Ութսուն տարի կեանք ունենաա՛ք քառասուն ամս դիշեր է .
Մինչ 'ի քսանն երեկոյ, վաթսունամեայն յատուկ ծեր է .
Ասէք՝ տեսնեմ, մարդն էլ այս աշխարհումն ինչի՞ տէր է .
Տասն տարուայ համար քաշած ջաֆան ունայն է, խմացէք :

Հաս մարդ կայ, որ յեսուն տարի չարչարվելով՝ փող է կուտել .
Յայանի դիտենք, որ կու մեռնի՝ չի՛ կարիլ այն փողը ուտել .
Այնպէս մարդոյ սրտի մէջ սատանան սենեակ է դտել .
Ին փողն դիտե՛ք, յեա ու առաջ, դժոխքի փայն է, խմացէք :

1001
38/23


Երդում ուտելն մեղ համար եղել է պարտաւորութիւն .
Ստութեամբ էլ է ուտում այն, որ ունի հարկաւորութիւն .
Եկեղեցի գնալ՝ դալն դարձեալ կեղծաւորութիւն .
Ում դործն երդումի անկաւ՝ էնպիսոյ վայն է, խմացէք :

Ինչ մեղք սիրումենք՝ թող անենք, վերջն առանց տեղ չենք մնալ .
Դժոխք էլայ խօմ՝ կու դնանք, թէ արքայութիւն չենք գնալ .
Մեր կամքերից երևումէ, որ սիրումենք գողնալ՝ շնալ .
Դարդ մէք անիլ՝ տարտարսն երկայն ու լայն է, խմացէք :

Թէ Հում, թէ Ռուս, թէ Յայն, թէ Թուրք, թէ Մօլթանի,
Մէկս մէկու օղնական են՝ իբրև իւրեանց ազգականի .
Այս կանոնս էլ չի՛ խախտվիլ, Սէյեադ, ցօրն դատաստանի .
Մէկ մէկու անհաշտ թշնամի միմիայն Հայն է, խմացէք :

18 ²⁵/₃ 57. 'ի Այսոյ 2որ :

1 և 2. Ընդհանուր հոգնեմը պայտառէկ պողո՛ :



Ս, անն անասի հմէամբար-ըննն Տարբար
ու շողալու-ն արմար :

Գիշեր՝ ցերեկ աշխատումեմ,
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում .

Չաշխատողից դանդառումեմ,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Եօթանասուն ամ կեանք ունիմ,

Բիւր տարեկանի ջանք ունիմ .

Տեսէք, սրջափ զրկանք ունիմ .

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Կսպիսի կեանքն նզոված,

Ջիբս լիքն, փորըս սոված .

Ճածուկ ժպիր՝ յայտնի գոված,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Ընթերցող, խօսքս լաւ իմաց ,

Կերակուրս սոխ է՝ չոր հաց .

Գդակս հին՝ ոտերս բաց,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Աշուն՝ դարուն՝ ձմեռ՝ ամառ

Փողի սէրն է սրտումս վառ .

Կամիմ կոչիլ ոսկւոյ տակառ ,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Ոմանց խիտ ահ եմ խոստանում,

Ոմանց սուտ մահ եմ խոստանում .

Էս դունով փող եմ ստանում,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Ոմանք արդար են, ծռումեմ .

Ոմանց ինքս գրրգրումեմ .

Հողիս ոսկւով կըրումեմ,

Ինչ է պատճառն՝ չեմ գիտում :

Մարդս, որ կարճ կենաց տէր է
Եւ կենաց կէսն էլ դիչեր է,
Միմիայն յոյժ փողատէր է,
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում:

Մարդ չկայ այս ցաւից ազատ,
Իշխան, ազնիւ, կամ պայազատ
Չեն սիրում անուանիլ ժլատ .
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում:

Սէյեադ, դու՛ որ փողն ատար,
Ղահ, նրանից ինչ գըտար .
Կեղուծեան մէջ ես անդադար,
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում:

Սէյեադ, քեզ ո՞վ է հաւանում,
Որ սչովից փող չես առնում .
Բաղմաց ատելի ես դառնում,
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում:

Սէյեադ, լաւ կուլի՛ փող առնես,
Որ քողցրանաս, զի յոյժ դառն ես .
Մի և նոյն է՝ առնես, չառնես,
Ինչ է պատճառն՝ չեմ գիտում:

Արամի հրաշքի Արժէպալ-Սարբ Խաչին :

Պատմեմ ձեզ հրաշքը Արդեազու խաչին,
Որ լսեն թշնամիք խաչին՝ ամաչին .

Պատմածս յետինն է, ո՛չ թէ առաջին,
Մատաղ ես այս Խաչին՝ բեւեռեալ աջին :

Տասն սւթ հարիւր յիսուն և երեք թուին
Դարալագեազու գաւառն ինձ տուին,
Որ Տաճիկք տեղւոյն գործով հանդարտուին,
Քանզի սկիզբն էր Օսմանեան կռուին :

Այս դաւառն է մեր հին Վայոց Չորն .

Աստ Վասակ ուրացաւ սուրբ անուն հօրն ,

Էհան սահմանից զարդիս եղբօրն ,

Հասոյց հայրենեաց դառնութեան օրն :

Տանուձէկ տարի էր՝ աչացս լոյսն

Չէր տեսնում՝ ՚ի հեռուստ չոր հողն ու բոյսն .

Գնացի ՚ի սուրբ Խաչ՝ յիշեալ սուրբ Վոյսն ,

Նոյն ժամայն առարկի՝ տեսի յեա կոյսն :

Թէ մասն խաչի հրաշք ունի այսքան ,

Տէ՛ս՝ սրչափ կունենայ խաչեալն կենդան .

Ես տեսեալ՝ հիացայ , աչօք խկահան ,

Սուրբ Խաչի ծառայն եմ՝ մինչ ցյաւխտեան :

Հայաստան սորա պէս շատ ուխտեր ունի ,

Ամենքն պաշտելոյ բնական սէր ունի .

Թէև Սէյեադին մեծ ցաւեր ունի ,

Ինչ շահ , որ պառաւեց , եղև ծերունի :

1853.

Բնական օրէնք ,

Համ ճշմարտանճան պարաւղ Էրն-տէտչաւ-բէտն :

Յաւուր միում մէկ քարահատ

Գնաց գործիքով յանապատ .

Որոնելով՝ դտաւ մէկ քար ,

Որ վասն արձանի էր յարմար :

Սկիզբն արար նրան տաշել ,

Այս կողմից միւս կողմ՝ քաշքաշել .

Երբ որ քարն յոյժ նեղացաւ ,

Կամաւ Տէրին լեզու ստացաւ ,

Ասաց քարհատին . ո՛վ տգէտ ,


Ի զուր են քեզ կոչում վարդեա .

Ընդէր ես չարչարում դու զիս ,
Ինձանից ինչ շինել կուզիս :
Քարհասն տուաւ պատասխան ,
Թէ սրբան որ արարածք կան ,
Ամենեքեան են պարտաւոր —
Լինիլ աշխարհին հարկաւոր :
Իսկ դու անկեալ ես սոսա անշահ ,
Իբրև յամառեցեալ ագահ .
Աստուած ո՛չ ստեղծ անշահ բան ,
Որ յաւերժ անպիտան մնան .
Վասն որոյ՝ երբ որ քեզ տեսայ ,
Ինքս ինձ խորհիլ սկսայ ,
Որ քեզնից մէկ արձան շինեմ ,
Քաղաքի հրապարակն դնեմ :
Յայնժամ քարի պէս անլեզուն՝
Իբրև լուսաւորեալ դիտուեմ ,
Ասաց . յիմար, դնա՛ բանիդ ,
Զուր նեղութիւն մի՛ տալ ջանիդ ,
Աւաջ քեզ շինի պիտանի ,
Դու ես գլուխ անպիտանի .
Քանզի արարածք ամենայն ,
Իրանց նախկին դրութեան կան .
Միայն մարդն իւր չարութեամբ ,
Իսկն ասեմ , յոյժ տգիտութեամբ
Յաւէա խոտորնակ հակելով ,
Բնական օրէնքն քակելով ,
Ստեղծողին սարջացոյց ,
Իւր երկար կեանքը կարճեցոյց :
Կախ կապրէին ամս հազար ,
Այժմ՝ հարիւր ամ էլ դժուար ,
Թէ մարդն կեանք ունիլ կարէ ,
Վասն զի միտքն տկար է :

Քարահաան՝ երբ այս լսեց ,
Քարին աղաչել սկսեց ,
Թէ արի՛, ինձի ողորմիր ,
Ասածներիդ միտքը պատմիր .
Մի՛ թէ մեր կենաց կարճութեան
Պատճառն է օրէնքն բնական :
Այո՛, պատասխան ետ քարն .
Մարդից խելօք է տաւարն ,
Կամ իւրաքանչիւր անբանն ,
Թռչունն՝ ձուկն՝ դազանն
Տարին մէկ ընդ իգականի
Պողաբերութեան սէր կանի .
Իսկ դուք դարձուցիք զայն՝ ի խաղ ,
Թէ ծեր և թէ տղայ մատաղ ,
Գիշեր՝ ցերեկ միշտ անդադար
Կրանով էք անուամ՝ մարդար :
Ինքան ճնշվումէք՝ թալկանում ,
Մինչ ձեր նիւթն ջուր է դառնում .
Մին պտուղ որ ջրից լինի ,
Կորա կեանքն ինչ կու լինի .
Տասն, քսան կամ երեսուն ,
Քառասուն , յիսուն կամ վաթսուն :
Ահա տեսնիր , որ ազգ մարդկան
Ի անբանից դուռի անբան .
Իսկ դու կամիս զիս տաշելով ,
Յայսկոյս յայնկոյս քաշքաշելով ,
Կանգնել հրապարակի մեծ արձան ,
Որ ինքդ ես կոճղ անպիտան :
Լաւ նայիր սերմանահանին ,
Տէս՝ սրբան զգատտ է բանին ,
Որ միշտ ցորենի լաւերն
Կընարէ , ո՛չ թէ որդնակերն .

Վասն զի սերմն որդեակեր
 Ո՛չ կարէ լինիլ սրազաբեր :
 Նայնալի թուլացեալ նիւթ մարդկան ,
 Պառզ կուտայ նուազական .
 Չի՛ լրացած հարիւր տարին ,
 Կըմնայ կենաց ճանապարհին :
 Թէ կատարէք կարգն բնական ,
 Կապրէք որպէս Մաթուսաղան .
 Սէյեադ , 'ի զուր մի բարբանջել ,
 Մարդեց ինչ կամիս սահանջել :

18²⁵/₅ 57. 'ի Սայայ Չարն Հայայ :



1. Վերայ այնպէ՛հ , որտ ո՛չ ճանաչէն զբարեհաճս և
 զըշխամս իւրեանց :

Արդար գիւղական մի ունէր երեսուն հատ երկար-ականջ¹,
 Նրանց երջանկուլթեան համար, համարեա՛ թէ, էր մշտապանջ²:

Այս էշերի մին քանիսն Համադանու էշեր էին ,
 Ոմանք էլ Պարնասից եկած՝ յոյժ քաղցրաճայն կու երգէին ,
 Ոմանք արժան էին այգոյ համար կրելոյ չոր փէյին ,
 Գիւղականի տնօրէնուլթեամբ դիփ մէկ կերակուր կ'ուտէին ,
 Այս պատճառաւ նրանց մէջ մտել էր արտունջ ու բարբանջ :
 Համադանցիք ասուամէին՝ մեր նախնիքն չեն կերել խոտ ,
 Պարնասացիք դուռուամէին՝ թէ դահ ունիմք մուզայից մօտ ,
 Հասարակ էշերն երբէք չէին խօսում՝ դուլով երկչոտ ,
 Վախուամէին՝ որ ծեծ ուտեն, քանզի խոցոտ էին՝ քոսոտ ,
 Գիշեր՝ ցերեկ աշխատելից ո՛չ սաղ մէջք ունէին, ո՛չ լանջ :

1 և 2. Մեծայն ասոնց վերջումն կրէնէն՝ զայստանիէ արդս :

Գիւղականն նկատելով՝ որ էշերն միշտ տրտամած են ,
Նրան էնպէս երևաց՝ թէ նոքա ամէնքն կրտած են ,
Եւ չիմացաւ , որ իրանից անգոհ եղեալ՝ խռոված են ,
Կամ թէ իրանց արտօնութեան նորոգմանը կու մտածեն ,
Ոնց կու կարծէր՝ թէ էշերն կարօղ են ունենալ պահանջ :

Խեղճ գիւղացին նրանց համար մէկ լիճ շինեց և մէկ մայրի ,
Որ լողանան և զովանան՝ արեգակն զնոսա չայրի ,
Էշերն այս լաւութիւնը թարգմանեցին երկօայրի ,
Ասացին . երևի սա մեզ կարծու՛մէ անասուն վայրի ,
Մեր գլուխը ցոյց տանք նրան՝ ձգենք այս մտքերից նահանջ :

Խորհուրդ արին՝ որ աղաչեն գայլին , իրանց մէկ ճար անի ,
Գիւղականի ձեռքից նա նոցա փրկման հնար անի ,
Իւրեանց վիճակները ուրիշ անասնոց հաւատար անի ,
Թէ կարող է , նրանցից էլ փոքր ինչ գերամեծար անի ,
Որ կարենան վտահ կոչել Հերկուլեսեան հարազատ մանջ 1 :

Գայլն ասաց՝ թէ էս գիշեր ես ձեր ամէնին կազատեմ ,
Լաւ գիտու՛մէք , որ 'ի բնէ ես մարդկային ազգին կատեմ ,
Դուք կացէք , ես ձեր մասին գնամ՝ չաստուծոյն դանգատեմ ,
Բարեգործութեան համար գայլ ազգի միջին մէկ հատ եմ ,
Էն աղազաւ Աստուծոն ինձ շնորհեց աչք լուսաճաճանջ :

Գայլն գնաց և իրանից բաշխայ երեսուն գայլ բերաւ ,
Նրանց հետ միացաւ , ապա ապերախտ էշերին կերաւ ,
Գիւղականն երբ իմացաւ՝ ինասին ուրախ համբերաւ ,
Սէյեանդ , էշին ոնց ես կարօղ հասկացնել աւաղներաւ ,
Որքան որ դու խրատ խօսես՝ նա շան նման կանի զանջղանջ :

18¹/₆ 57. 'ե Այսոց Չորն Հայոց :

1. () Եւստիւսի հայերն զարդայն մանջ կամ մանջ կու կոչեն :

Այսին « Եղբօր-Վրիւն » հազեցեալ ծաղկան, որ
' է Հայաստանի կեն բառանի, զոր և Տաճիկի հազեցե

« Ղարդաշ-Ղանի » :

Եղբօր արիւն կոչվող ծաղկից յայտնի է,
Ու Աբելն սպանվելայ Հայաստան .

Այս ծաղկին մարդկան մէջ շատ յարգի է,
Վասն զի է անմեղի արեան նշան :

Այս ծաղկին ունի առանձին նկար,
Կայէն կանգնած՝ մօտին շատ դայլախազ քար,
Աբելն առաջին անկեալ կայ խեղճ՝ տկար,
Երկու աղուաք թաղման ձևը ցոյց կըտան :

Գոյնն կարմիր՝ ինքն ունի չորս տերև,
Զեա ծնեքեկ հողից դուրս կուգայ վերև,
Մահն Աբելի ցոյց է տալիս ակներև,
Կերանց վերայ կըբուսնի՝ ի ժամ դարնան :

Հայաստանն որ այսպէս քայքայեցաւ,
Յայտնի է, որ Աստուած խեթիւ հայեցաւ,
Արիւնահոս երկրի օրն վայ է՝ ցաւ,
Ահանատես բանին զի՞ փոյթ է վկայն :

Երկու արիւն մեզ ձգելայ դետինն,
Կախ Աբելի՝ երկրորդն Կերսէսինն,
Մեր նորոգման յոյսըն է Միածինն,
Եւ չիք սրտաճառ՝ որ լինի մեզ ապաստան :

Այս է վճիռ նախադուշակ Կալվինի,
Ինչ մարդոյ որ տան հիմն արնոտ լինի,
Կու քակվի, նա թէկուզ պողպատից շինի,
Այս վճիռը Հայք իրանց աչօք տեսան :

Ինչ օրէնք է՝ որ նախնեաց մեղաց համար
Յետինք քաշեն ձմեռ, դարուն և ամառ,
Վիշտ, նեղութիւն, անբաղդութիւն անհամար՝
Եւ իրաւունք ազգային ստուերանան :

Սէյեա՛ղ , սա ո՛չ յեախնն է , ո՛չ նախկինն ,
 Մեր թշնամեաց Պապ նորն է , Կայէն հինն ,
 Կանանց մէկն մեզ ծախեց՝ դնեց մինն ,
 Մեր վիճակն է՝ ու՛մնից լինիմք ամբաստան :

18¹/₆ 57. 'Է Այսպէս Չորն Հայաց :



Այսին ճշտաց աղբիւղաւիճանն :

Կամիմ փոքր ինչ քեզնից խօսել՝ աշխարհաւեր դարչելի մեղք¹,
 Քեզանով մարդին սրատահեց անձար ցաւեր, դարչելի մեղք² :

Ազամ որ իւր նսրատակին չեհաս , դու եղեր սրատառն ,
 Անց չի ամաչար , խաբեցեր Եւայի սէս անմեղ դառն ,
 Նրանց լուսից զուրկ թողողն դու էիր , ո՛չ թէ չար ծառն ,
 Քոյ սկիզբդ շատ համեղ է՝ իսկ վերջդ մահաբեր դառն ,
 Դժոխքը քեզ վիճակ տուին՝ յոյժ սակաւ էր , դարչելի մեղք :

Թէ քո արարմունքդ պատմեմ՝ աշխարհի թուղթն չի տանիլ ,
 Էնքան ծանր ես , քո մողալըդ՝ թէ բեռնես , ուղտն չի տանիլ ,
 Քոյ քսած մուրը մարդից Աթօքնու ուխտն չի տանիլ ,
 Լուծդ թեթեւ կ'երեւայ , բայց գոմեշի ճուխտն չի տանիլ ,
 Նախահարց ոտին դրածդ վատ բըխաւ էր , դարչելի մեղք :

Քո գլխաւոր հնարներդ դինու՛մ և կինարմատու՛մ են ,
 Քեզանով թագաւորներին հպատակներն ատումեն ,
 Քոյ սիրականիդ ամենայն իրաւարանու՛մ դատումեն ,
 Մարդ չի տեսայ՝ որ քեզ գովի , դի՛մ ձեռնիցդ գանգատու՛մ են ,
 Էդ վատ անուներ ընտրեցիր՝ մի՛թէ լաւ էր , դարչելի մեղք :

Քեզ հետ բարեկամ լինողն կենաց մէջ դադար չի տեսաւ ,
 Նորա ատելի գործերն յաւիտեան կատար չի տեսաւ ,
 Մեղսագործութիւնից բաշխայ գովանի մադար չի տեսաւ ,


1 և 2. Այսպէս պատեց վերջաւիճանը հրէնէն պայտառիչ պարտ :

Անտառները ջուրն տարաւ՝ չոր հացի պատառ չի տեսաւ ,
Չի թողար՝ որ ողորմելին ապաշաւէր , դարչելի մեղք :

Մարդն՝ եթէ յոյս չունենար , նորա օրն ո՞նց կուլինէր ,
Քոյ ձեռնիցդ չէր զերծանիլ՝ անիրաւ տնտես կուլինէր ,
Վատ արարմանց կանոններն նորա համար ծէս կուլինէր ,
Կրփորէր մեղաց գեախնը՝ զզուելի մտղէս կուլինէր ,
Եթէ Քրիստոս չի դար , նրան ո՞վ կու քաւէր , դարչելի մեղք :

Սէյեադն եմ՝ առ ժամանակ ես էլ քեզ հետ ընկեր եղէ ,
Արդարութիւնը կորցրի՝ բազում յանցանաց տէր եղէ ,
Կարճն ասեմ՝ մեղք դործելում՝ սատանից գեր՝ ի վեր եղէ ,
Տեսի քեզ հոգւոյ թշնամի , դարձայ՝ նորա հետ սէր եղէ ,
Յետոյ խմացայ՝ որ նաւըդ կտարած նաւ էր , դարչելի մեղք :

18⁷/₉ 57. 'ե Ա. 1870 Չորս Գոյոյ :



9. ~~Ի վերայ Տէրտէյի երկրորդաց ամանց :~~

Մին քանի դարդիմանդ տղէք Օրթաճալայ քէփ՝ ինք անուամ՝¹,
Խորվածի հետ կարմիր գինին խմում՝ ինք՝ լազաթ՝ ինք տանում² :

Ընկերիս մէկն՝ Գլքօն էր , երկրորդն՝ զառափ Պէտանն ,
Երրորդն՝ գերձիկ Միխակն , չորրորդն՝ զազազ Իվանն ,
Հինգերորդն՝ մեր Գիդօլին , վեցերորդն՝ Ղարսեանն ,
Աղալոյենց տղայի հետ նստել՝ ինք բաղվանի տանն ,
Զան՝ ինք ասում , ջան՝ ինք լսում , օրներս լաւ էր անցանում :

Փլաւի բրինձն քցած , քափն քաշուել էր բողբաշի ,
Մեր Աղալոյն դառել էր մէջլիսումը տօլուբաշի ,
Տաք տաք պօռչափ անելով՝ քիչ մնաց սիրտներս խաշի ,
Մեր խմելոյ շրփշրփոցին թռչունքն՝ ին եկել թամաշի ,
Չեմ գիտում՝ էն հէյվաններն նրանից ինչ՝ ին հասկանում :

1 և 2. Ի վերայ ամանց վերջումն կրկնեմ պայտափէ պողս :

Վեց Թունդի գինի՝ ինք տարել՝ ամեններին քուացրուց ,
Առաւ խելքներս մեզանից՝ էշի նման դուացրուց ,
Աշխարհը դիմ մերը շինեց՝ դիւան դարէն մուացրուց ,
Եւ՛ վեր քցեց մեռելի պէս , եւ՛ ծուեց՝ աթուացրուց ,
Մեր մէջումն մին Պէտանի խելքն էր մնացել իրանում :

Մին ափիցար քանի մարդով գալիս է՝ տեսնում մեր հալն ,
Ասումէ . էս կէս գիշերին էր էք անում զաւմազալն ,
Ըսկսումէ մեր կռները իր մարդկանցը կապել տալն ,
Անիրաւն՝ տեսանելով խեղճ Ազալովի ողբալն ,
Չի՛ խնայում արտասուէքին՝ մեզի ողորմութիւն չ՛անում :

Քաշքաշելով մեզ տանումէ մինչև պօլիցիայի դուռն ,
Ին տեղ հրաման է տալիս մարդկանց՝ բացումեն մեր կուռն ,
Քցումէ էշի բաղնիքը՝ չի՛ պահպանում մեր աբուռն ,
Ասումէ . դուք առաւօտն կը յայանէք դրուստն ու ծուռն ,
Հիմա կիմանաք՝ ձեզ պէտն ինչպէս պատիժ է ստանում :

Ին գիշերն արիւններս ծրծեցին գազան լուերն ,
Բանտի պէս փիս տեղ չի՛ լինիլ՝ քանդի նրան միայն Տէրն ,
Կէս գիշերին սալգաթներն բըխովեցին մեր սաներն ,
Ամենքս մին բերան ասանք՝ խարաբայ լինի բաղերն ,
Որ նրանցում սէյր անողի բանն էստեղ է հասանում :

Առաւօտն ութ ժամին մեզ քաշեցին զերցալի տակ ,
Տերևի պէս դողում էինք՝ իբրև մարդասպան աւաղակ ,
Սեկրետարն ասեց . « Արմեա՛շկի, սը վամի նադօբնօ վօտ կակ » .
Ասեցի . « վաշէ բլղադօր » . ասեց՝ « մալչի՛ պօդլեց, դոււրանկ » .
Խօսքերիցն իմացայ , որ փողի Թամահ կայ նորանում :

Քաշեց մեզի մին շոկ սենեակ, հրամայեց՝ « ըստօյտէ տուտ » .
Թուղթն ու դրիչն հազիրեց՝ հարցրուց, թէ « կակ վաս զաւուտ » .
Ինքն մին չորչոր մարդ էր՝ հագի հանդերձն դիմ կապուտ ,
Ինպէս կարծեցի Նեմէց է՛ կամ թէ նոր մկրտուած Չհուտ ,
Որով՝ դէպ ՚ի մեր դրպանըն աչքերը խօշօռ էր բանում :

Քսակս հանեցի դրպանէս՝ ցոյց տուի սեկրետարին ,
Հենց գիտենաս՝ հաց ցոյց տուիր որք երեխին սովի տարին ,

Ափեցարն ու ինքն մնացին՝ մնացող մարդկանց դուրս արին ,
Մին դեր բերին՝ մեր առջևը դրին , մեզ համար բաց արին ,
Ասեցին . տեսէք , օրէնքն ձեզի Սեբիր է խոստանում :

Վերջապէս մենք տուինք նրանց ամէն մէկս երկու թուման ,
Երբ որ փողերն ստացան՝ մեզի ազատութիւն տուան ,
Գրեւները զրազ դրին՝ թուղթը պատրուտիլ սկսան ,
Կեանքիս մէջ չէի տեսած էլ հասիսի արդար դիւան ,
Սրանից լաւն էլ կուլինի՝ մեզի օրէնքն է պահպանում :

Երբ որ պօլիցից դուրս եկանք՝ ինքս ինձի բամբասեցի ,
Էս ինչ էր՝ մին սէհր անելոյ համար կորչում՝ ինք , ասեցի ,
Քաղաքի էս վատ աղաթն մանկուծեան կարգին դասեցի ,
Նոյն ժամայն հասէս բաներից հրաժարուիլ սկսեցի ,
Չենց հեռացայ նրանցից , որ շուաքն էլ չի կայ ինձանում :

Ինչ մեղաւորի փող ունի՝ վախենալն հարկուոր չի ,
Մին ժամանակ չեմ տեսած՝ որ փող ունեցող մարդն կորչի ,
Քրթամ՝ բառն միշտ էլէլայ , Սէյեադ , մի զորմանալ՝ նոր չի ,
Որ պատահի՝ ինքդ էլ կէր , հարը չ'իմանուալ՝ խոտոր չի ,
Ենպէս գիտես՝ մեծաւորքն դօնլուղով են հարստանում :

Գլ. 47-Գլ. մասնաբաժին

**Խօսակցաւընէն Գարգառ Տարգառ ընդ Գարգառի Ռայ
Կհարձակէցաւընէն Տարգառն :**

Քարտաշ մի գնաց քար հատանելոյ ,
Ճամփին պատահեց մին կոպիտ քարի ,
Սկսեց նորա վերայ բանելոյ ,
Որ ընկած էր անդ անհամար տարի :

Երբ որ չաքուջը քարին հասցրուց ,
Աբանն իսկոյն լեզու ստացաւ ,
Դարձաւ՝ քարտաշին սիրով հարցրուց ,
Թէ ո՞վ կարգեց քեզ վասն իմ սրտացաւ :

Որ կամիս շնորհք տալ ինձ՝ տաշեւով ,

Եւ անսխտանիս՝ անեւ պիտանի ,

Տանեւ քաղաքն՝ ինձ քաշքաշեւով ,

Ձիս զվայրենիս առնեւ ընտանի :

Խնդրեմ ես ՚ի քէն, ո՛վ արհեստաւոր ,

Դադար տո՛ւր ինձի՝ պարկեմ իմ տեղն ,

Ի՛նչ կայ մտքու՛մդ, ո՛վ մարդ կեղծաւոր ,

Գերան քո թողեալ՝ հանես իմ ձեղն :

Քարտաշն նմա ետ պատասխանի

Խորամտութեամբ՝ որպէս բանական ,

Ասաց . քեզ պիտի շինեմ պիտանի ,

Ձի Աստուած չի՛ արեւ անսխտան զբան :

Հրեշտակք և մարդիկ ընդ անբան նիւթոց

Հասարակօրէն ունին զպաշտօն .

Փառաբանեն Պատճառն արարածոց ,

Կատարեն Կմա պատարագ և տօն :

Արեգակն իրան տաքութիւնսիս

Տալիսէ երկրին պողաբերութիւն .

Եւ լուսինն թաց բնութիւնսիս

Չգուժէ հողի մէջ խոնաւութիւն :

Մոլորակք , աստեղք, ամսլըն և քամին

Ի սկզբանէ հաստատեալ կարգաւ

Խոնարհին իրանց Տէրի պատգամին ,

Կման ռամկաց կան միշտ ընդ հարկաւ .

Բայց դու անկեալ կաս այստեղ առանց շահ ,

Ո՛չ կինդանի ես և ո՛չ թէ մեռեալ .

Կման էն մարդոյն՝ որ ինքն է ագահ ,

Ո՛չ գիտէ ուտել և ո՛չ այլոց տալ :

Որովհետեւ ես քարտաշ եմ ճարտար ,

Շատ ամօթ է ինձ՝ թէ որ քեզանից

Ձի՛ շինեմ մին լաւ գերեզմանի քար

Եւ ՚ի գործ դնեմ քեզ հիմիկվանից :

Պատասխանի ետ քարն բարբառող
Քարտաշին՝ թէ հող լինի քո գլխիդ ,
Ուղումես լինիս դու խրատ տուող ,
Ինձանով ծածկես ապականեալ դիդ :

Երբ Աստուած տաին ու երկինքն ստեղծեց ,
Ամենին տուաւ օրէնք բնական .
Մարդն չ'ընդունեց նրան՝ դէն քցեց ,
Իսկ այլ արարածք նրանով գնան :

Մինթէ չես կարդել սուրբ գրքերումն ,
Որ մարդն յառաջ կապրէր հազար ամ .
Իսկ երբ փրտեցին չար կիրքերումն ,
Աստուած էլ թողեց նրանց անխնամ :

Հազար ամ կեանքը արարին հարիւր ,
Ինչպէս տեսանումես աչքերովդ .
Մինթէ չես դիտում՝ պատճառը էստուր
Էդ աստուածանման քո պատկերովդ :

Քարտաշն դարձաւ՝ քարին հարցրուց ,
Անր՝ մին տեսնեմ , ո՞վ հրաշքարբառ .
Մարդն՝ որ երկար կեանքը կարցրուց ,
Մինթէ բնական օրէնքն էր պատճառ :

Պատասխան տուաւ անբանն դիտուն ,
Թէ երբ ստեղծեց զաշխարհըն Աստուած ,
Զոկեց կենդանեաց էդն և արուն ,
Աճեցէք և բազմացարուք՝ ասաց :

Միտ բանին այն է՝ արուն ընդ իդի ,
Բնական օրինօք սահմանեալ կերպիւ ,
Պարտ է զուգակցիլ վասն զաւակի ,
Ո՛չ թէ խաղալիք աունել դիշեր՝ տիւ :

Սովաւ զօրութիւն մարդոյն կորնչի ,
Սերմ՝ նորա՝ նման օրդնակեր սերմանց .
Անշուշտ ստանայ վիճակ ոչնչի ,
Որով կրճատեն աւուրքն իւրեանց :

Յորժամ երկրագործ հնձէ ցորենն ,
Ընորէ զայնոսիկ՝ որ են յոյժ պարարտ .
Մարդոյ համար էլ նա է օրէնն ,
Որ պահէ սերմ՝ իւր զօրեղ և զուարթ :

Որպէս ուղտ և ձի և այլ անասուն
Ունին ժամանակ շաղաշարութեան .
Մարդն՝ նրանցից գուլով իմաստուն ,
Մուացեալ է զայս կանոն բնութեան :

Անուահուժեամբ սերմն իւր վատնէ ,
Դեռ չի մտեալ ՚ի հասակ այրութեան .
Փոքր միջոցում՝ նա ՚ի մահ մասնէ ,
Զստուղ սերման անայլայլութեան :

Ան ճիշդ պատճառ՝ զի աւուրք մարդկան
Կրճատեալ եղեն յայսմ աշխարհի ,
Ո՛վ ոք դարձցի առ կարգն բնական ,
Կարող է ապրել մինչ հազար տարի :

Այժմ՝ ո՛վ յիմար, մտօք մուտրեալ ,
Կամիս պիտանի լինել ինձի դու .
Ո՞նց է կարօղ էն մարդն խրատ աալ ,
Որ ինքն լինի անխրատ՝ քսու :


Տեսե՛ր՝ որ ամէն անչունչ ստեղծուած
Մարդից աւել է Արարչի համար ,
Կան ՚ի վիճակի՝ յորում եդ Ատուած ,
Իսկ դուք խաւարում շրջիք անդադար :

Վայ քեզ , կամահոր բնութիւն մարդկային ,
Տես՝ որ քարն էլայ վըրէդ ծիծաղում .
Անբանքն առ նըպատակն հային ,
Բայց դու չարութեան մէջ ես զբաղում :

Կոյրն՝ կուրին ո՞նց կ'աւաջնորդէ ,
Որ չի անկանին միատեղ փսն ,
Սէյեա՛դ , Քրիստոսի խօսքն ըզորդ է ,
Թէ ըզունկ ունիս՝ քորի՛ր քո քոսն :

24

~~Երգ:~~



Դիւի սուտ ասող՝ մարդ խաբօղ՝ աղքատ զրկող են փող ուտող,
 Դիւի մուրացող՝ ուրացող՝ լոյս ատող են խաւար սիրող,
 Դիւի արբեցող՝ սիրտ սրտող՝ շողքսրթող են փաստող,
 Դիւի ծուռ դատող՝ տուն քանդող՝ քրթամ ուղօղ են մուացող,
 Դիւի բամբասող՝ զուր խօսող՝ արիւն խրմող են վրդովող,
 Դիւի անյաջող դեղ տուող՝ բան չիմացող են յայտնի դող,
 Դիւի դանձկուտող՝ սուտ երգող՝ հաց չուտող են դատարկ մնացող,
 Դիւի տէր մանող՝ մեռանող՝ հող մանող են դժուխ դնացող :

Մին ժամանակ հողևոր անձանց քարոզներն լսամ,
 Ոստ աշխարհքից քաշամ՝ նրանց հետևիլ սկսամ,
 Վանքերումն չօքաչօք՝ երեսըս քարերին քսամ,
 Ինքս ինձի յոյս տուի՝ երկնային ժառանգ եմ, ասամ,
 Սրտներն մտանելով՝ նոցա ամէն սիրրին հասամ,
 Իմ նրանց մօտ կորցրած կեանքիս համար շատ ափսոսամ,
 Բացն ասեմ՝ նրանցանում աստուածակոյս բան չի՛ տեսամ,
 Դիւի սուտ ասող՝ մարդ խաբօղ՝ աղքատ զրկող են փող ուտող :

Թէ ասածներին նայես՝ կըտաս նրանց հաղիւղ շորըն,
 Աշխարհքըն որ կըլանեն՝ չի՛ յաղիլ նոցա որկորըն,
 Պատահի՛ աւաղակի նման կըմաշկեն եղբօրըն,
 Երեսօք պատիւ կըտան՝ չեն ճանաչիլ հօրն ու մօրն,
 Սոքա են Փրկչի ասած փարիսեցի՛ կեղծաւորն,
 Ահա՛ այսպէս է իլեւ յամենայն ժամ հողևորըն,
 Լաւ նայես՝ կհասկանաս, որ սե հաղնաղի բոլորն
 Դիւի մուրացող՝ ուրացող՝ լոյս ատող են խաւար սիրող :

Մինն դիչերվան կէսին զարթնանումէ՛ զանգ է տալիս,
 Մինն ատեան մէջումը ռամկաց խրատ է տալիս,
 Մինն իւր օթաղումը ընդ սիրելւոյն է տրփալիս,
 Մինն շուտ լուսածաղին ձեռքին աղօթք է կարդալիս,
 Մինն կերպն փոխելով՝ մարդասէր է երևալիս,
 Մինն՝ ում որ տեսնումէ, իւր մեղաց ձեռիցն է լալիս,

Էս թալաքներով նոքա միամիտ մարդ են որսալիս ,
Դի՛ք արբեցող՝ սիրտ որսող՝ շողոքորթող են վաասող :
 Հոգևորից փախչելով՝ դարձայ առ իշխանն աշխարհի ,
Տունից՝ տեղից հեռացեալ , ծառայեցի քանի՛ տարի ,
Տափն՝ դօշակ , երկինքն՝ լէհէբ , նազբալիչըս՝ քար՛ի ,
Ինչ դժուար բան յանձնեց ինձ , յաջողութեամբ գլուխ տարի ,
Որքան որ ծառայեցի՝ հաց էր տալիս մարդաւարի ,
Երբ ծերացայ՝ դուրս արաւ գործից , մնացի անձարի ,
Մէկ իշխան չի՛ տեսայ , որ առանց թամահ բան կատարի ,
Դի՛ք ծուռ դատող՝ տուն քանդող՝ քրթամ ուղող են մառացող :

 Չինաւորքն տեսայ , որ իրանց պէս մարդն են սպանում ,
Էնտուր համար՝ որ նոքա նրանով փառք են ստանում ,
Չրկողութեան բան չկայ՝ որ նրանք չի՛ լինին անում ,
Չեմ տեսած նրանց արած գործերը երբէք ինսանում ,
Իմ աչօքս եմ տեսել՝ զուր տեղից չեմ ամբաստանում ,
Նոցա վատ վատ գործերն ջան չի՛ թողեցին ինձանում ,
Չինաւոր բառիցն , դուք , չի՛ գիտեմ՝ ինչ էք հասկանում ,
Դի՛ք բամբասող՝ զուր խօսող՝ արիւն խմող են վրդովող :

 Բժիշկներն հիւանդի համար ցաւում են՝ եղբօր պէս ,
Երակն բռնումեն , յետոյ յոյս են տալիս նրան պէս պէս ,
Ասումեն՝ պիտի , Ֆլան խօւաին վաաս է , չուտես ,
Կերածըդ մին օրումն պիտի լինի մսխալ ու կէս ,
Եթէ փահրիդ չի՛ անես՝ չե՞ս լաւանալ , խարաբ կըլես ,
Երբ հիւանդն լաւացաւ , ե՛կ՝ նրա թալանվիլն տես ,
Իսկն ասեմ՝ նորանցում ճշմարիտ բան չեմ տեսել ես ,
Դի՛ք անյաջող դեղ տուող՝ բան չիմացող են յայտնի գող :

 Փոքր ինչ գովել կամիմ վաճառական մարդկանց դասն ,
Մին փող իրանք ունենան՝ ուրիշներից կառնեն տասն ,
Հարստանալոյ համար իրար հետ կըբռնեն բասն ,
Քօռի պէս չեն տեսանել իրանց առաջի վասն ,
Խրվումեն պարտքի միջնն՝ կսոր է մեռանում մեծ մասն ,
Հարստանալոյ մագեար չեն ճարում թանէ սըպասն ,

Իմանաս՝ աշխարհքումն ինչ դաս է այս դասն ,
 Դիմ գանձկուտող՝ սուտ երդուող՝ հաց չուտող են դատարկմնացող
 Մարդն՝ Ազամին նման , կինն՝ պատկեր է Եւայի ,
 Մինն՝ թէ դրուտ լինի , միւսն անպատճառ ծուռ կնայի ,
 Սէյեադին չի՛ հաւատա՞ք , տեսէք արարքն Յուդայի ,
 Իւր Արարչին մատնողն՝ ընկերին սնց կուխնայի ,
 Թէ մարդին դուլաբանեմ՝ կ'նմանիմ՝ երեսայի ,
 Որ դատողութիւն չունի՝ միմիայն աչօք կ'նայի ,
 Մարդին ես լաւ չեմ՝ ասիլ՝ թէ Տէրն ինքն էլ հրամայի ,
 Դիմ տէր մասնող՝ մեռանող՝ հող մանող են դժոխք գնացող :

Handwritten signature and decorative flourish

Այսին խոյնաւ ընտն տարիայէն սնտի կէնցաղայն :

- Այս բոպէին մին բացուած վարդ՝ միւս բոպէին զըզուելի դէշ¹,
- Այս բոպէին Արիստոտէլ՝ միւս բոպէին մին անբան էշ² :
- Այս բոպէին սիրտը անվախ՝ միւս բոպէին սենքերը կախ ,
- Այս բոպէին միտքը ուրախ՝ միւս բոպէին կու քաշէ անխ ,
- Այս բոպէին զուարթ և շախ՝ միւս բոպէին այրելոյ ցախ ,
- Այս բոպէին մարգարտածախ՝ միւս բոպէին առանց փափախ ,
- Այս բոպէին պատճառ սիրոյ՝ միւս բոպէին դազան հրէշ :
- Այս բոպէին սուրբ և արդար՝ միւս բոպէին աղտոտ՝ վատթար ,
- Այս բոպէին գերամեծար՝ միւս բոպէին ամենաչար ,
- Այս բոպէին ուրախարար՝ միւս բոպէին մահուան նկար ,
- Այս բոպէին բարեյարմար՝ միւս բոպէին խեղդուելոյ լար ,
- Այս բոպէին հացի կարօտ՝ միւս բոպէին մեծ քէշհաքէշ :
- Այս բոպէին սրայծու իշխան՝ միւս բոպէին անգործ՝ անբան ,
- Այս բոպէին մեծ ճարտասան՝ միւս բոպէին վատ քերական ,
- Այս բոպէին սէր բնական՝ միւս բոպէին ծարաւ արեան ,

1 և 2. Ընտնայն սոսնց վերջումն կը կնէն՝ պայտառիկ պարս :

Այս բոպէին հարսանեաց տան՝ միւս բոպէին ՚ի գերեզման ,

Այս բոպէին անմեղ հոգի՝ միւս բոպէին հարց և ֆուրսէչ :

Այս բոպէին հանդերձը նոր՝ միւս բոպէին մերկ և ակլօր ,

Այս բոպէին ամենազօր՝ միւս բոպէին մին նիւթ անզօր ,

Այս բոպէին սիրական հօր՝ միւս բոպէին յամօթանք մօր ,

Այս բոպէին ծառ պողաւոր՝ միւս բոպէին թղենի չոր ,

Այս բոպէին ահեղ հսկայ՝ միւս բոպէին մեռելոյ լէչ :

Այս բոպէին ջերմ՝ իբրև սէր , միւս բոպէին ցուրտ մահաբեր ,

Այս բոպէին քաշած պատկեր՝ միւս բոպէին խաւար մըթեր ,

Այս բոպէին գլխին սև հէր՝ միւս բոպէին զառամեալ ծեր ,

Այս բոպէին, Սէյեադ , տեսեր՝ միւս բոպէին ո՞նց մառացեր ,

Այս բոպէին անգին հոգիդ՝ միւս բոպէին կուտաս փէչքէչ :

Ն Ե Գ :

Պատկերդ՝ թէ արեգակ է , նորա շաֆաղն բաս ո՞ւր է ,

Եաւաղդ՝ թէ վարդ է բացուած , կանաչ եարփաղն բաս ո՞ւր է ,

Էդ ծոցիդ ջուխա շամամի պատուական թաղն բաս ո՞ւր է ,

Ասումեն՝ թէ մարդասպան ես , ձեռիդ ետրաղն բաս ո՞ւր է ,

Եթէ խալխն սուտ են ասում , մեր մէջն սաղն բաս ո՞ւր է :

Երեսիդ ջղկան ղօշուն քաշած՝ դէմքիդ թախտի համար ,

Չինաւորքն ֆալ են քըցում՝ ամէնքն իրանց բախտի համար ,

Հաս բազմութիւն կոտորվումէ ղօլթուղիդ դրախտի համար ,

Ասումես՝ թէ ուխտ են գալիս բազումք մազիդ լախտի համար ,

Թէ որ նրանք ուխտաւորք են՝ բերած մատաղն բաս ո՞ւր է :

Մեռանումեմ՝ երբ ասումես մօտ մի՛ գալ , սէրս քեզ կերի՛ ,

Բաս որ ես քեզ չի՛ մօտենամ՝ քո խաբարըդ ինձ ո՞վ բերի ,

Մի՛թէ դեռ ևս չես դիտում՝ որ հոգւով եմ ես քո դերի ,

Ողորմած ես՝ հոգւոյդ մատաղ , դու իմ սխալմունքս ների՛ ,

Ես ընկեւ եմ էշխիդ ծովն՝ սորա ղրաղն բաս ո՞ւր է :

Արա՛ արա՛ էղբան սիժամ, միժէ Տէրիցն չէս վախում,
Որ երբեմն չարչարումես, երբեմն մարթումես՝ կախում,
Կամ երբեմն բարկանալով՝ ինձի թշնամեաց ես ծախում,
Քո ինձ արած՝ նեղութիւնից՝ ամէն սոկերքս է լախում,
Թէ որ ասես՝ ինձ էրէլ ես, նշանց տուր՝ դաղն բաս ո՛ւր է :

Աչքերդ միշտ խօսք է տալիս՝ ունիքերդ էլ մաստ է անում,
Թերթեւուկդ սրախ միջին՝ ինչ Փայդայ, որ դաստ է անում,
Էս իմ հնուց եարայ թոքս՝ խառանկով շեքաստ է անում,
Քեզ շինումէ Սի միւնթանն՝ ինձի էլ էք դաստ է անում,
Չունիքի մենք որ այսպէս էլանք՝ Գարսն ու Սրաղն բաս ո՛ւր է :

Սարին սարին դիւլչանի մէջ ծաղկի նման բացուած՝ սանձամ,
Մայիս ամսոյ շաղի ջրով փափուկ մարմնով թացուած՝ սանձամ,
Ճածուկ բանդ աշխարհքի մէջ աշքարայ խմացուած՝ սանձամ,
Գեղեցկութիւնդ պարզեւ է երկնային ստացուած՝ սանձամ,
Դրան պայծառութիւն աւուղ սուրմայ դարաղն բաս ո՛ւր է :

Ինչի է քո առամներդ՝ թամամ չնդըստանից եկած,
Խալերդ սե շաւայ է՝ համարի՛ր Սիսթանից եկած,
Մէջքդ բարակ իշխանուհի՝ թազայ Գիւրջըստանից եկած,
Պատկերացոյց հայելի ես՝ ինքդ Մեքսիկանից եկած,
Թէ որ ուստի ձեռք ընկած ես՝ գեմքիդ վարաղն բաս ո՛ւր է :

Այն օրը՝ որ քեզ ստեղծեց, Աստուած ինքն էլ շատ զրմցւ,
Որ երկրային սե հողիցը քեզ պէս գեղեցիկ յատկացաւ,
Ե՛րբ որ տեսոյդ գովասանքը Յովսէփ գեղեցիկն խմացաւ,
Լոյս երեսիդ մտիկ տալոյ երկնի պատուհանն բացաւ,
Ասաց՝ Սէյեադ, այս հրեշտակի մարմար օթաղն բաս ո՛ւր է :

Ն Ե Գ :

Ո՞նց գովեմ՝ որ հազ անէք, Տփլիսու հրեշտակ աղջկերք,
Աշխարհքն լուսաւորող դուք էք, արեգակ աղջկերք,
Մարդկային ազդին եկած՝ երկնային կոնդակ աղջկերք,
Կամ ասաղ էք, կամ մուրրակ, կամ թէ լուսնիակ աղջկերք :

Գեղեցիկ շատ եմ տեսել , բայց ձեր նմանն չի լինիլ ,
Ձեր մարթած մարդոյ վերայ սրոյ նշանն չի լինիլ ,
Օրը հազարին սպանէք՝ ձեր դատաստանն չի լինիլ ,
Ձեզ սիրողների համար՝ յատուկ աւազակ աղջկերք :

Հագել էք Ֆռանգի ճոթեր՝ մէջքներդ բարակ մազի պէս ,
Դատայով ման էք գալիս՝ ջրից դուրս եկած զազի պէս ,
Ամէնքիդ ձեռքը արնոտ՝ որսից եկած Շահբազի պէս ,
Ձեր ձեռքից շատ եմ լուամ մարդկանց աղաղակ , աղջկերք :

Գիտումէք ինչո՞ւ է միշտ Տիկիսաւ երկինքն թխտած ,
Արեւը ամաչումէ՝ չի շրջում՝ ձեզ մօտ դէմքը բաց ,
Ձեզ չար աչք կու կտնի , թէ էստուր անէք այլոց խմաց ,
Փառք տուէք ձեր Արարչին՝ եղէք գոհունակ , աղջկերք :

Ինչ ժամ որ պատահումէ՝ դուք բաղերը սէյր էք գնում ,
Ծաղկանց մէջ ձեր աղաղակ մեծ խուսիւթիւն է ծնում ,
Ձեզանից չեն կուշտանում՝ սըրտներումը դարտ է մնում ,
Ձեր դէմքի մօտ ո՞չինչ է վարդ ու մանուշակ , աղջկերք :

Տօն օրերն ձեր քաղաքը լինումէ մին ծաղկած խաչխաչ ,
Մէկը հաստ՝ մէկը բարակ , մէկը բարձր և մէկը քաշ ,
Պատկերներըդ է փայլուն խալիս ալմաստ՝ մանր թրաշ ,
Անդամներդ տարեկան գառնուկի դրմակ , աղջկերք :

Գլուխներիդ շքեղը մարդարիտ է՝ սակով կարած ,
Դօշներիդ ամէն տեսակ թանգադին ահուէք է շարած ,
Ո՞վ չասիլ՝ թէ ձեզ Աստուած իրան ձեռքով է զարդարած ,
Հողեղէն նման չունէք՝ մին լուսեղէն թաղ , աղջկերք :

Աղաչումեմ չի նեղանաք՝ թէ խօսքումս տեսնէք հանաք ,
Ձեր գովեսար չի կարող գրել Սադի թե՛ սև թանաք ,
Ես վաղուց ձեզ օրհնող եմ՝ մէք մարթիլ ինձի անդանակ ,
Իմացէք , որ Սէյեադին ունի մին փափագ , աղջկերք :



Խօսուհոյս-ընեն

Սէյէադէ (որսորդի) ընդ Սէյդէ (որսոյն) :

Սէյէադէն .

Քսան ութ տարի է՝ որ ես որսահան եմ ,
Ինչ կուլէր՝ էս նեան քեզի չէր կպել .
Քս պէս սիրուն սրտին ես սնց սպանեմ
Ինչ կուլէր՝ էս նեան քեզի չէր կպել* :

Սէյդէն .

Երևի՛ երկնային վճիռն սա է ,
Մորթի՛ր ինձ՝ արիւնս քեզ հալալ լինի .
Աշխարհքի հանապազ արհեստն դա է ,
Մորթի՛ր ինձ՝ արիւնս քեզ հալալ լինի** :

Սէյէադէն .

Մի՛թէ ձեր միջումս մին բժիշկ չ'կայ ,
Որ կանչեմ՝ քս վերքիդ սպեղանի տայ .
Եթէ ս'չ՝ 'ի վերուստ ինձ պատիժ կուգայ ,

Սէյդէն .

Աշխարքիս մէջ , արդե՛ք, ո՛վ է մնացող ,
Որ ես առողջութեան լինիմ ցանկացող .
Հողիցը եկել ենք՝ պիտի դառնանք հող ,

Սէյէադէն .

Քեզանից յետոյ սնց կապրեն ճուտերըդ ,
Ան կու քաշեն՝ երբ կու յիշեն պատկերդ .
Ո՛վ է կարող նրանց ցոյց տալ քս սէրդ ,

* 1, 3, 5, 7 և 9 գրանց վերջումն հրկնէն՝ պայս փող :

** 2, 4, 6, 8 և 10 գրանց վերջումն հրկնէն՝ պայս փող :

Մէջոյն .

Ճուտերս պատկերս շուտ կու մուսնան ,
Սէր կըտան ուրիշի՝ կու հանդարտանան .
Մօր գինը սրդիքն ինչ կուհասկանան ,

Մէջեօրէն .

Գիտեմ՝ մարդդ պիտի ընկնի սարերն ,
Պըտըռտի դաշտերը՝ ճանապարհներն .
Ինձ տեղ չեն տալ նրա ահուզարերն ,

Մէջոյն .

Իմ մարդս էս ժամին կանգնած էր իմ մօտ ,
Բերանով քաղուձէր՝ տալիս էր ինձ խոտ .
Փախաւ՝ ինձ թողեց նետահար արնոտ .

Մէջեօրէն .

Սէյեադն եմ՝ չեմ մարթիլ քեզ , եթէ մեռնեմ .
Թէ մարթեմ , գիտեմ , ինձ մեղքով կու բեռնեմ .
Ես մարդ եմ , չի կարծես՝ անողորմ նեռնեմ .

Մէջոյն .

Սէյեադ , ինձ պէս Սէյդի խօսքին ահանջ դիր ,
Սուրբ Գրոց միջինն եմ խօսուձ առանց դիր .
Մի՛ թողուր՝ չարչարուեմ , շուտ արա՛ մարթիլ :

ԴՆԱԲԷՆԸ՝ ըստ Էղտնեակի « (՝ ման սիայ՝ բիդատ սիայ) »
Էշխան Չաւաւադդէի Էրգոյն :

Աշխարհքն ինձի ետը բռնեց՝ միւս ետերիս պաղացրուց ,
Տեսաւ՝ մեղքի հաւաս ունիմ , առաւ՝ ձեռքին խաղացրուց ,
Ինձի կապեց քաղցր խօսքի՝ յիմար ջաղացպանի նման ,
Մինչեւի սր իւր աղուձը ջաղացուձն աղացրուց .

Երբ որ տեսաւ՝ ջաղցիս ջուրն պակասելոյ , բան չի՛ անում ,
 Գնաց՝ ուրիշին ետր բռնեց , ինձի բիղամաղացրուց .
 Ուզեցի՝ որ իրան ձեռքից՝ էլի իրան դանգատ անեմ ,
 Թշնամույ պէս կռվեց հետս , տուաւ՝ ոտս կաղացրուց ,
 Չեմ գիտում՝ թէ այլոց հետն էլ աշխարհքն էսպէս է վարվել ,
 Թէ միմիայն խեղճ Սէյեադին խաբելով՝ ահմաղացրուց :



Ն ո շ :

Միշտ ընկերով եմ քեզ ման դալիս տեսել ,
 Էդ մինակ լինելդ ինչ բան է , տա՛տրակ .


Ասի՛ր ինձ պատճառը՝ իմանամ ես էլ ,
 Սա մին անբաղդութեան նշան է , տա՛տրակ :

Ասի՛ր ցաւըդ ինձի , դու , մի՛ ամաչիր ,
 Ցաւը շատ ծածկելով՝ սիրտդ մի՛ տանջիր ,
 Վըզումդ տեսնուամեմ ջուխտ օղակ զանջիր ,
 Երկի , փախած ես զընդանէ , տա՛տրակ :

Մարմնիդ մաշուած է՝ ոտերդ սառն է ,
 Աչքդ ցոյց է աալիս՝ որ սիրտդ դառն է ,
 Բէ՛ր , ցաւդ իմ՝ սրտի ցաւերին խառնէ՛ ,
 Թէ որ նեղացած ես մարդկանէ , տա՛տրակ :

Աշխարհք է , այդպիսի բաներ շատ կուլի ,
 Կենաց մին օրն լաւ՝ միւսն վատ կուլի ,
 Չարութեան մեքենայն միշտ հաստատ կուլի ,
 Սատանայն չի՛ մեռել՝ կենդանի է , տա՛տրակ :

Սէյեադն եմ , շատ ժուկ է՝ կարօտ եմ որսի ,
 Չեմ գիտում՝ ընչո՞ւ է բանս ընկել թարսի .
 Գիտեմ լեզուն՝ Թուրքի , Ռուսի , Ֆարսի ,
 Գիտութեան բաղարն էժան է , տա՛տրակ :



ՀԱԿԻԿԷ .

Մին աննման գեղեցիկ եար սրտով սիրել եմ՝ փառք Տէրին 1,
Որ մարմնաւոր աչքով երբէք չի՛ լինիլ նայիլ սրտիւրին 2 :

Իս իմ եարի գլխին է դիմ երկինք՝ երկիր բռնած կարար ,
Ո՛չ սք եարի համար չ՛անիլ էն բանը , որ նա ինձ արար ,
Սիրածին փառք՝ պատիւ կուտայ , ատելոյն էլ չի՛ տալ զարար ,
Նորա սէրն հոգւոյ դեղ է , իսկ նազ ու զամզէն կենարար ,
Աշխարհքն դիմ մատաղ լինի էնպէս եարի գլխի հէրին :

Նա լսելով՝ որ գերութեան մէջ եմ ընկել , օրս վատ է ,
Ինքն ինն ամիս բանա նստեց , որ ինձ զընդանից ազատէ ,
Բազում տարի ինձ պըտըռտեց , չասեց՝ դաշտ է , անապատ է ,
Ահանջըդ բաց պահի , լսող , դեռ չեմ՝ պրծել՝ կիտատ է ,
Նորա ոտի հողն չեմ՝ տալ սքանչելադործ սուրբերին :

Աչքն ճրագ , լեզուն կրակ , պատկերն արեգակ՝ զամար ,
Երբ որ ցաւիս տեղեկացաւ՝ ինքն իրան մատնեց ինձ համար ,
Աւազակքն նրան կալան՝ ծակոտեցին տամար տամար ,
Գոյնն փախաւ՝ միտքն կորաւ՝ կախ ընկաւ ունքերն կամար ,
Իս մեր սէրիցը զարմացաւ արդար Դատաւորն վերին :

Ո՛վ որ այս իմ խօսքս կարդայ՝ նա ինձ կուկոչէ հերձուածող ,
Որ մարմնաւոր սիրականիս դովուամեմ՝ իբրև ստեղծող ,
Նորա սէրն միտքս գալիս՝ որտիս մէջ ընկնումէ դող ,
Տեճեկք՝ ո՛վ իր սիրահարին էսքան սէրը կանի անխող ,
Մանաւանդ ինձ՝ որ եմ՝ պարագլուխըն մեղաւորներին :

Սէյեադն եմ , սիրականս շուշանի նման բացուած է ,
Ամէն մարդոյ ձեռք չի՛ ընկնիլ , զի Թանգազին ստացուած է ,
Կու մեղանչի՝ ո՛վ որ նրան ասի հողից ստեղծուած է ,
Թէկուզ աշխարհք ինձ բամբասէ , ես նրան կասեմ՝ Ատուած է ,
Ախ , երբ կուլի՝ արժանանայ երեսըս նորա ոտներին :



1 և 2. Մ. Բեհայնի գրած Վերջումն կրկնէմ զայստսիկ գրող :

Գեաֆ Հայերէն .

Հարց .

Ասամ՝ քեզ մատաղ, Բարբարէ ,
 Չայնդ սրտիս ցաւին ճար է .
 Ինչ կուլի՝ մի հետ մօտս դաս ,
 Ես խօ՛մ մեռայ՝ ինչ խաբար է :

Պատասխանի .

Ասաց՝ էդ բանն մի՛ ասիլ ,
 Կու լսեն տանն, մի՛ ասիլ .
 Գիտես՝ որ շուտուց եմ՝ տուել
 Քեզ էս իմ ջանն, մի՛ ասիլ :

Հարց .

Ասամ՝ լաւ օրերս անցաւ ,
 Սէրդ մինչ սիրտս թափանցաւ .
 Գերեզմանին մերձ եմ՝ անցաւ ,
 Ինչ որ ուզու՛մես՝ կատարէ՛ :

Պատասխանի .

Ասաց՝ համբերի՛ր, դեռ շուտ է ,
 Առանց համբեր սէրն սուտ է .
 Սէրն լոյս է, ո՛չ թէ պուտ է ,
 Սիրոյ փասն մի՛ ասիլ :

Հարց .

Ասամ՝ բաս էկ , քեզ նշանեմ՝
 Պսակեմ՝ իմ տու՛նս տանեմ .
 Զանս՝ ջանիդ մատաղ անեմ ,
 Որ վաղուց քեզ ինձիղար է :

Պատասխանի .

Ասաց՝ ասենք ինձ արի՛ր կին ,
 Արի՛ր քեզ համար տան արկին .

Բայց եար սիրելն է թանգադին ,
Չար իմ թիհանն մի ասիլ :

Հարց .

Ասամ՝ մեղք է եար սիրելն ,
Լաւ է հալալին տիրելն ,
Ընդունի իմ հրաւիրելն ,
Որ սրտիս իղձն դադարէ :

Պատասխանի .

Ասաց՝ մեղք չիլիլ սիրոյ մէջ ,
Հալալ սէրն չի տանիլ վէճ .
Ամուսնութիւնն է հուր անշէջ ,
Ե՛կ՝ անարժանն մի ասիլ :

Հարց .

Ասամ՝ քեզ մատաղ Սէյեադը ,
Ահանջիդ չի հասնում դադը .
Կրան թողիւր՝ սիրար եադը ,
Ել ո՞նց ասեմ՝ սա լաւ դար է :

Պատասխանի .

Ասաց՝ սիրաս սրտիդ խառն է ,
Իմ սէրն անթառամ ծառն է .
Գիտեմ՝ էդ սիրոյդ բարբառն է ,
Դու վատ նշանն մի ասիլ :

Ինչո՞ւ դու Գաղցր է՞ , է՞ դառն :

Երկուսս մէկ ծառի պտուղ ,
Ինչո՞ւ դու քաղցր ես , ես դառն .
Եդեմահան դրախտի ճուղ ,
Ինչո՞ւ ես դայլ եմ , դու դառն :

Երկօքեանս մէկ տեղից եմք ,
Գերազնուական ցեղից եմք .

Եթէ խորհիմք՝ կու մեղիցեմք ,
Թէ դու հալալ ես , ես խառն :

Ինչից է մարդ քեզ տեսնալիս ,
Էլ ինձի մտիկ չի տալիս .

Խեղքը կորցնումէ խալիս ,
Երբ լսումէ քո բարբառն :

Ազամս մեր հայր էր՝ դիտենք ,
Եւան էլ խօս՝ մայր էր՝ դիտենք .

Մէկ բնութիւն ունենալ պիտենք ,
Ընդէր դու տաք ես , ես սառն :

Բոլորովին դու մազնիս ես ,
Որ մարդոյ սիրտ քաշել դիտես .

Կամ ինքդ քաղցրութիւն պիտես ,
Կամ շաքար է բերնիդ բառն :

Բոյիդ մատաղ ես , Հեղինէ ,
Ի սիրոյդ դոյնս դեղին է .

Համարեա՛ , օձի լեղին է

Սէյեադի կերած պատառն :

(Ուշտէ և Թէջի) .

Ինչո՞ւ համար քօռացել ես , չար աչքեր ,
Սիրահանիդ քաղցր մտիկ չե՛ս տալիս .

Շում մուացար , սիլ բէ-էհտիբար աչքեր ,

Անմանիդ քաղցր մտիկ չե՛ս տալիս :

Ամէն օր անու՛միւր ահուղար , աչքեր ,


Սրտիդ ցաւին չէր գտանվում՝ ճար , աչքեր .

Ինչ պատահեց՝ սէրից հովացար , աչքեր ,

Բարեկամիդ քաղցր մտիկ չե՛ս տալիս :


Ինձ նեղու՛միր դու միշտ անդադար, աչքեր,
 Արտասուներով հանդերձրս թացար, աչքեր .
 Մուգ չե՛ս պահում՝ շուտ ուրախացար, աչքեր,
 Սիրուն ջանիդ քաղցր մտիկ չե՛ս տալիս :

Ինձ աւելի չի՛ տաս դարդուսար, աչքեր,
 Ո՛չ կամիմ քեզ պէս լինիլ յիմար, աչքեր .
 Սէյեադն եմ՝ աղեղիս ջունի լար, աչքեր,
 Զառնիչանիդ քաղցր մտիկ չե՛ս տալիս :



Ս, տան Կարգաւորութիւնն :

Մէկ օր սո՛ւսկն պարտիզի մէջ նոր բացուած վարդին ատաց .
 Քիչ նազ արա՛, որ էտեղ քեզպէսներն շատ են բացուած :
 Վարդն ծիծաղեց՝ ասեց, ես ճշմարտից չեմ նեղանալ,
 Բայց ո՛չ ոք սիրականին սյդպիսի կոշտ բան չի ասած .
 Սէյեադ, սա քո հանձարն է, թէ դու էլ այլոց նման՝
 Պատմու՛մես էն խօսքերը, որ ուրիշից ես հասկացած :



Ն, Ծանոթութիւնք :

Մաղերդ երկար հուսած՝ մարդ խեղդողութեան նշան է,
 Ճակատդ սպիտակ ու լայն՝ մեծ յաջողութեան նշան է .
 Ունքերդ թըթուացրած՝ մտածողութեան նշան է,
 Աչքերդ կրակ վառած՝ պահանջողութեան նշան է,
 Թուշերդ ա՛լ վարդի պէս՝ ամաչողութեան նշան է,
 Ականջդ նուրբ ու բարակ՝ սուր լսողութեան նշան է,
 Քիթդ կարմիր և միջակ՝ մեծ ուշեղութեան նշան է,
 Պռօշներդ կարմրած՝ արիւնհեղութեան նշան է,
 Բերանդ նարդիսի չափ՝ շառ խօսողութեան նշան է,
 Կըզուդ է քաղցրութեամբ լի՝ սիրտ շահողութեան նշան է :

Վիզըդ երկար սուրահի՝ ասեցողութեան նշան է ,
 Սիրող մարմարի հրապարակ՝ խնամողութեան նշան է ,
 Կռներըդ մինչ 'ի ծուռնիդ՝ մարդ զրկողութեան նշան է ,
 Ծիծերդ սպիտակ աթլաս՝ յուսողբողութեան նշան է ,
 Փորըդ լուսեղէն խորան՝ մեղքի թողութեան նշան է ,
 Մարմինդ մին կսկսն վարդ՝ ասն քանդողութեան նշան է ,
 Անդամդ աղուամաղ է՝ ուրացողութեան նշան է ,
 Ոտներդ փափուկ փափուկ՝ միշտ շարժողութեան նշան է ,
 Գերի ընկած եմ շէմքումդ , չասես՝ դողութեան նշան է ,
 Օտար չէ՛, այլ Սէյեադ է՝ ծառայողութեան նշան է :

Խրոսի .

Ամանց ահ է՝ ոմանց մահ ,
 Ամանց վնաս՝ ոմանց շահ :

Լուսնից պիտի մեք սովորեմք ետր սիրելոյ եղանակն ,
 Որ ամիսը երկու անգամ՝ փոխվումէ նորա վիճակն .
 Երբ տեսնումէ՝ չաղանումէ , երբ չի՛ տեսնում՝ մաշվումէ ,
 Երեսը իւր սիրականի , որ է պայծառ արեգակն :
 Ա՛յլ որ ուզումէ՝ սէր անի , պիտի անձն նեղացնի ,
 Քանզի ամէն տեղ դավաւած է սէր անելոյ էս տեսակն .
 Թէ մեք էլ մեր ետրի համար այս նեղութիւնը վնդ առնեմք ,
 Ոչ ոք մեզի չի՛ բամբասիլ՝ չի՛ ձգել չար լեզուի տակն .
 Ժամանակիս սիրուններն սիրով են անում առուտուր .
 Էն մարդին են ծախում իրանց՝ որ լէքն է փողի քսակն .
 Սէրը՝ սիրով պիտի փոխած՝ և ո՛չ թէ անկենդան փողով .
 Թէ փողով ծախեցիր նրան , շուտ կուհովանայ կրակն .
 Ա՛յլ չի գիտում՝ որ բաղդն սէր ունիող մարդին չի՛ սիրել ,
 Էն մարդոյ մօտ կուկենայ , որ մեռած է սրտի փափաղն .
 Ասէք՝ տեսնեմ , թէ մեռելի մատին դնես մէկ մատանի ,
 Ինչպէս կարող է խմանալ՝ սև քար է , թէ ադամանդ ակն .
 Չեղ եմ ասում , ո՛վ սիրուններ , ձեր կեանքը մէք փրչացնել :

Միշտ մըտնեցումդ պահեցէք այս խմտուած օրինակն .
Սերը՝ սիրահարին տուէք, որ խմանայ նորա գինն ,
Որ յաւիտեան չի թառամի, վառ մնայ նորա ճրագն .
Երկայն ակունքն չի կարօղ հասկանալ շաքարի համը ,
Չեղ պէս հաղարին չի փոխիլ իրան դարմանի տօսրակն .
Չեր տաք բնուիք մեք տալ՝ բնուիք սառած մարդոյ ձեռք ,
Թոյլ տուէք, որ տաք տաք ձեռքեր բանայ ձեր սրտի կոճակն .
Մէյեադն եմ՝ սիրտս մեռած, մէք նայիլ կենդան խօսքերիս ,
Խօսքիս հագի տուողն է խմ պահապան հրեշտակն :

Գ Ե Պ Ե Լ Ե :

Անշնորհք , քեզ ինչ եմ արել ,
Որ ինձ սպանել ես կամու՛մ .

Ես եմ քեզ եղբայր ել՝ ետր ել ,

Դու հագիս հանել ես կամու՛մ :

Էիք տանն ու չորս տարեկան ,

Որ քեզ ընտրեցի , սիրական ,

Ինչ մեղք ունիմ, որ դու եղբան

Վաստ տեսնել ես կամու՛մ :

Քս սիրով հեռացայ հօրից ,

Հովացայ եղբօրից՝ մօրից .

Չի դիտեմ՝ քեզ ո՞վ յորդորեց ,

Ինձ կորուսանել ես կամու՛մ :

Քս աչքովդ աշխարհ տեսայ ,

Քս մտքով խորհիլ սկսայ .

Վերջն ուրիշներեց լսայ ,

Որ ինձ կախ անել ես կամու՛մ :

Որով՝ ինձ ասել էր տէրտէրս ,

Էնտուր քեզ տալի սուրբ սէրըս .

Տեսայ՝ որ բարի գործերս —

Չօրով խափանել ես կամու՛մ :

Պատիւըդ ես եմ, գիտումես ,
Հողւոյդ չափ սիրել պիտուամես .

Զուր մեղք է , որ կիտուամես ,
Էր ինձ կործանել ես կամուամ :

Ես եղէ քեզնով արխային ,
Դու իմ մասին եղեր խային .

Ամէն աշխարհք կու վկային ,
Մերքիս թըքանել ես կամուամ :

Գնա՛ , Տէրն քեզ բարի տայ ,
Ապրելոյ բազում տարի տայ .

Ո՛վ ինձ ուզումէ քարի տայ ,
Կրան պահպանել ես կամուամ :

Սէյեադըն եմ՝ շատ եմ տեսել ,
Քեզանից լատ էլ՝ քեզ պէս էլ .

Կեզացել եմ քեզնից ես էլ ,
Գիտեմ՝ փոշմանել ես կամուամ :

Հանելուկ :

Մարտիրոսի .

Ապրելն ո՛րչափ որ լաւ ամիս է , բայց ես ատուամեմ
Էն պատճառաւ , որ նորա կերպն նման է ապրելին :

Պատասխանի .

Մարդկանց մէջ այսքան անգին չէր լինիլ երբէք ապրելն ,
Թէ նորա կերպն ու ձևն նման չի՛ լինէր ապրելին :

Տաճբասանի :

Ազնուութեան նշաններն լաւ բնութիւնն չէ՛ , փո՛ղն է ,
Ժամանակիս բարի մարդն յայտնապէս շնացողն է .
Ճշմարտախօս մարդիկն միշտ հանապաղ անընդունակ են ,
Աշխարհքի պատուաւորն դողն կամ սուտ ստողն է :

Առաքինասէր մարդիկն փորները սոված ման կուգան ,
Ո՛վ որ մեծ մեծ գործի մէջ է , իմացէ՛ք՝ արբեցողն է .
Խօսքին դրուստ մարդն այժմ մին փողի էհտիբար չունի ,
Էհտիբարը նա ունի , որ իւր ընկերին խաբողն է .
Բարի բնութիւն ունողներն ամենայն կերպիւ զրկուած են ,
Քանզի մարդոյ դատաւորն քարասիրտ տուն քանդողն է .
Շնորհալի մարդոյ խօսքին մին ազանջ դնող չե՛մ տեսել ,
Խնջոյքներումը պատուելին միշտ առասպել խօսողն է .
Առանց Աստուծոյ օգնութեան դժուար է փրկութիւն ճարել ,
Քանզի գառն դանգատ ունի , գայլն նորա դատողն է .
Սէյեա՛ղ , թէ հազար բան խօսես մարդկանց արարմունքի վերայ ,
Չես կարող գլուխ հանել , մարդ փորձողն սև հողն է :

Շ ա հ աւ է փ խ ր ա փ :

Թէ բարձրացար աշխարհքումս՝ մինչևի երկինքն հասար ,
Մի՛ վեր քաշիլ քո գլուխդ հպարտութեամբ՝ իբրև մեծ սար .
Թէ սխալվեցիր մաղի չափ՝ սարդ կարգիցը դուրս դրիր ,
Իմացի՛ր , որ էն բոպէին կուլինիս տափին հաւասար :

Եթէ փառքիցդ վայր ընկար , ո՛չ ոքից դանգատ մի՛ անիլ ,
Պարտաւոր ես շուտով դառնալ՝ քո հին վիճակն մտանել .
Աբաղդութեան ժամանակն՝ թէ դիտի աշխարհն պտոյտ դաս ,
Անչահ բան է , քեզի միայն անդ ես կարօղ դու գտանել :

Էնպէս վարուի՛ր , որ քեզ համար ամենայն վիճակ մին լինի ,
Լաւ օրիդ մի՛ դուռնողանալ , որ վատ օրըդ ուժգին լինի .
Ո՛վ հասարակ կեանք ունենայ՝ նա վատ օրից չի՛ նեղանալ ,
Ամէն հանդերձ կու հագնի , թէ՛ էժան՝ թէ՛ թանգագին լինի :

Աբաղդութեան սկզբիցն երբէք դառնագոյն բան չկայ ,
Որքան որ մարդ շատ համբերէ գործոյ վախճանն լաւ կուգայ .
Ամենայն բան սովորութեամբ հեշտ կերևի մարմնոյ աչքին ,
Հարկն մեզի միշտ հանապաղ էսպէս տեղերը սիրա կուտայ :

Պիտի անմուաց պահպանեմք մեք հին մարդկանցից ասուածն,
Ո՛վ որ որ առաւ ձեռքիցդ քո սեպհական ստացուածն,
Մարդն ո՛նց է կարող իւր պէս մարդոյ ձեռքից բան առնել,
Կա պատճառ է, այլ առնողն է՝ քեզ ստեղծող Աստուածն :

Թէ պատահեց քեզ չարութիւն՝ որ առաջուց՝ իր նախատես,
Ինչո՞ւ համար նեղանալով՝ դու քեզի չարչարել պիտես .
Գալացուկից փախել չիլիլ՝ ո՛վ որ խելք ունի՝ գիտումէ,
Բացի ժոյժից էլ ճար չկայ, եթէ որ հազար աշխատես :

Աշխարհումս բան չկայ, որ լինի ամէն ժամ անփոփոխ,
Թէ՛ ժամանակ, թէ՛ ստացուած, թէ՛ բարեկամ և թէ՛ սոսիս .
Մին բանի որ էհաիբարը մինչի գիշեր չի՛ երկարի,
Կնտուր համար ինչո՞ւ պիտի մեք մեզի անեմք ոտնակոխ :

Մարդոյ համար ձախորդութեան յաղթելն շատ գլուխ բան է,
Վատ օրերին համբերողի հոգին անվախճան կենդան է .
Չէ՛ հարկաւոր խելօք մարդին՝ ինքը իրան անյոյս անել,
Բաղդն մին էնպէս շրջան է, որ միշտ անդադար շարժական է :

Վատ օրն է մարդկան ազգի սահմանեցեալ փորձաքարն,
Նրանով եմք մեք խմանում քաջասիրտ մարդն ու տկարն,
Չախորդութեամբ՝ մեծահոգի մարդն հեշտութեամբ կու կրթուի,
Չի այն ժամանակ կու փախչի եղբօրից՝ վատ եղբայրն :

Տգէտ մարդն չի՛ բնակուիլ ո՛չինչ ժամ գիտուն մարդի մօտ,
Քանզի անհատ ծաղիկներն պատիւ չեն ճարիլ վարդի մօտ .
Իտուն մարդն է յամենայն ժամ հիմնաքարն իւր հայրենեաց,
Թէկուզ չունենայ նա պատիւ քանի անխելք տմարդի մօտ :

Չախորդութեան անցեալն և դալացուին չեն էնքան վատ,
Մարդոյ սիրան ներկայ չարից սովորաբար կանէ դանդաւտ .
Եթէ մին բոպէ համբերես՝ ներկայն էլ կու լինի անցեալ,
Կն ազագաւ համբերելը Փրկիչն մեզ թողեց խրատ :

Ո՛վ որ անկանի պատահմամբ ձախորդութեան ձեռն դերի,
Թէ կամենումէ նեղութեան նա արիաբար համբերի,
Ամէն չարութիւն կերևայ նորա աչքին թեթևադոյն,
Թէ իրանից յոյժ վատաբաղդ մարդոյ դրութիւն միտ բերի :

Եթէ էնչա՛մ երջանիկ չես՝ որչա՛մ որ սիրտդ կու տանի,
Որ հասնէիր իշխանութեան, կամ ծայրագոյն աստիճանի,
Փառք տո՛ւր Տէրին, որ քեզ էնքան թշուառուէ մէջ չի՛ քցել,
Որքան որ դու քո գործովդ կարծումէիր քեզ արժանի:

Մարդ չէ՛ր քաշիլ աշխարհումս այս բազմիմի տանջանքը,
Միանգամայն բաց կու թողէր ամենայն կերպ աշխատանքը,
Իրան կեանքը նա կու կարծէր՝ թէ մին անտանելի բեռն է,
Թէ չունենար աչքի առջին էն յաւիտենական կեանքը:

Սէյեա՛դ, թէ օրըդ անց կենայ մինչի մահըդ թշուառութե՛ք,
Փուչ աշխարհքն ո՛չինչ չ'անիլ քեզի նա իրան չարութեամբ:
Ղարագայ կեանքին վերջ չունի՛ վերջաւոր կեանքից մի՛ վախիլ,
Քաղցր է էն չարութիւնն՝ որ կու վերջանայ բարութեամբ:



Հանելուկ:

Պատմեմ՝ ձեզ մին աննման բան,
Որ դուք նորա միտքը բանաք.
Երբեք չի՛ լսել բանական,
Յայտնի ասեմ՝ որ իմանաք:

Մի ծառ տեսայ շինութեան մօտ,
Ինքն չոր էր, բայց պտղաբեր.
Պտուղն ունէր գլուխ և ոտ,
Եւ անթերի մարդոյ պատկեր:

Պտուղն մինչ անհաս է՝ խակ,
Յոյժ գեղեցիկ է և զուարթ.
Իսկ երբ որ եղև հասունակ,
Կը զըզուի, թէ տեսանէ մարդ:

Սէյեա՛դ ծառի պահապանն —
Ասաց քեզ արտասուլախան.
Երբ բազմանայ մարդասպանն,
Հատ պտուղ կու տայ էս ծառն:



Խ ր Թ Թ :

Ո՛վ որ ասի աշխարհիս մէջ չի՛ մնացել ամօթ՝ առ¹,
Ի՛նչ նայիր, ինչ որ ունես՝ վաճառի՛ր, քեզի ամօթ առ² :

Ամօթով կու հասնի մարդ իւր ցանկութեան և կամացը,
Ամօթն կու պահպանէ իւր կարգին կեանքի ընթացը.

Ո՛վ որ ամօթ չունենայ՝ անասուն է, ասեմ՝ բացը,

Ո՛չ նորա խօսքն պիտի ընդունես՝ ո՛չ աչքի լացը.

Ի՛նչ փող չէն արժիլ նորա տան ամէն էլածն ու հացը,

Ամէն տեղ մարդ չի՛ յիշուիլ, կհամարուի չոր սողաւառ :

Ամօթն չունենալ ո՛չ բարեկամ, ո՛չ թշնամի,

Լաւ մարդից կ'հեռանայ՝ կ'մօտենայ անզգամի.

Արարմունքին սո չի՛ ըլիլ խօսքն կըլի իբրև քամի,

Ինչ անեն՝ կ'ընդունի, միտքը չի՛ տալ ինթիկամի.

Լաւ ու վատ չի՛ հասկանալ՝ ուշ չի՛ դնիլ էյհամի,

Պատկերով մարդոյ նման՝ իսկ բնութեամբ է անբան ծառ :

Ինչ մարդ որ ամօթ չունի՝ ամենայն կերպիւ աղքատ է,

Անհաւատ լինելուց՝ անամօթ լինելն վատ է.

Անհաւատին՝ յայտնի է, որ միմիայն Աստուած կատէ,

Իսկ անամօթին՝ որպէս գրոց խօսքն հաստատէ,

Ո՛չ միայն մարդիկ կատեն, Աստուած ինքն էլ խիտա կու դատէ,

Կու ձգէ դժոխքի մէջ, որ յաւիտեան անչէջ է վառ :

Ամօթով են հասանում մարդիկ մեծ մեծ աստիճանի,

Զօրավարի, իշխանի, կամ թէ ազնուականի.

Ամօթն հարկատուին կարօղ է առնել անուանի.

Կեանքումս որատահել եմ՝ ես շատ անամօթ ինսանի,

Չեմ տեսել՝ որ մին բանի համար նա նստի, միտք անի.

Ինչ ճարեց՝ կուտի, կընկնի կողքի վերայ իբրև տակառ :

1 և 2. Ամօթայն արտնայ վերջումն կընեն՝ ու զայստակէ արտն :

Ամօթով մարդոյ մօտին շանից անամօթն վատ է,
Ամօթներն մէջ վատ գործից ամօթն վատ է.
Ինչպէս որ աչքացաւին արեգական լոյսն վատ է,
Կամ թէ մեղսագործաց մօտ արքայութեան յոյսն վատ է.
Սէյեանդ, ե՛վ որ քեզ ասի՝ թէ Աստուածակոյսն վատ է,
Դու քո բանիդ կ'աց, զի նա նոյնժամայն իւր սլաութն էառ:



Խորհրդանշանք

Տէ՛ս՝ սրչափ քաղցր է կենաց ճանապարհն,
Որ նորանով պարծենումէ արդարն.
Նորա գինը նա գիտէ՝ ո՛վ դիտուն է,
Ի՛նչ կիմանայ էն մարդն՝ որ միշտ քուն է.
Բաղդն իրան կու յայանի էն մարդուն,
Որ իրան յետքիցն շրջումէ արթուն.
Կեանքներս անց կացքինք իբրև շուաք,
Մին բոպէ քարոզի ահանջ չի՛ տուաք.
Կեանքդ յետունից անցաւ՝ դու մին մեղայ
Չասացի՛ր՝ արտասուելով, Թա՛ւրքի տղայ.
Գոնեա՛, այժմ՝ դարձի՛ր ծերունի սոխակ,
Քաշու՛ի՛ր աւանձին տեղ, արա՛ աղաղակ.
Որովհետև չարեցիք 'ի ժամ դարնան,
Անց մի՛ կացնիլ ժամանակը դու աչնան.
Ի՛նչ մեղքեր՝ որ գործեցիք, պահեցիք դաղտ,
Լաւ գործդ՝ նիսիա արի՛ր, մեղքդ՝ նաղդ.
Խրուել ես մեղաց ծովու՛մն՝ մինչի ե՛րբ,
Հայրապետաց նզովու՛մն՝ մինչի ե՛րբ.
Նախահայրդ Ագամ էր, տեղը դրախտ,
Երկնայինք նրան պաշտում՝ ին՛՞՞ն՛ ամէն վախտ.
Մին մեղք գործելոյ համար ամէնքն ասան՝
Դուրս արի՛ մեր միջիցն, ո՛վ անպիտան.


Մին տեղից՝ որ հայր Ադամին դուրս անեն,
 Կուլի՛ մեզ պէս անդգամին ներս տանեն.
 Սէյեանդ, թէ էս խօսքդ քեզ անեա խրատ,
 Իմացիր՝ որ կեանքիցդ կառնես միւրատ:



Ստան յանէրաւի ապուղացո

Սկիզբն խնաստութեան երկիւղ Տեառն է, սիրական,
 Ա՛չ սսկին, ո՛չ արծաթն և ո՛չ ահանքն պատուական.
 Կարելի է՝ որ ասես, թէ հարստութիւնն էնպէս բան է,
 Որ տիրոջը հեշտութեամբ արքայութեան որդի կանէ.
 Եթէ էդպէս ես կարծում, այո՛, հաշիւդ սխալուած է,
 Մեծատան հոգւոյ համար երկնքի դուռն կապուած է.
 Մինչի երբ տխարի հազնես պամոյր մուշտակը՝ մեծագլին չուխայն,
 Չանաղան կերակուրով զարդարես առաջիդ սեղան.
 Դու վերջ յանձնառու լեր՝ մի ուրանալ, ո՛վ բարեկամ,
 Որ տեղից կը ճարվի միշտ էսքան բանն առանց հարամ.
 Ինչ բանում որ հարամ եղև, նա կուկտրէ քունդ,
 Կամաց կամաց կոկսէ աւերել հոգևոր տունդ.
 Մին կտոր հացդ, եթէ պատահեց, որ հարամ եղև,
 Լաւ է, փոխանակ նրան, ուտես քար, կամ ծառոյ կեղև.
 Բանդի հարամ պատառն ամէն բանդ հարամ կանէ,
 Հարամի զօրութիւնը լաւ հասկացիր, որ մեծ բան է.
 Մին կտոր հացը՝ թէ որ համարեցիր կասկածելի,
 Եթէ հայր Աբրահամու սեղանից մնացած լինի,
 Թէ նորա ձեռօք լինի ցանած էն հացի թօխումը,
 Թէ երկնային եզներով ծրուած լինի նորա շումը,
 Թէ նոր լուսնի մանգաղով եղև նրա հասկն հնձած,
 Թէ Փրկչի դերեզմանի քարիւ լինի նա աղացած,
 Թէ որ նորա խմորի, յատուկ իմանաս, ունցողն
 Եղել է կոյս Մարիամն, որ է Յիսուսի ծնօղն,

Թէ դրախտի փայտիւ էրուած լինիցի Թանիրն,
Թէ հրեշտակ իրան ձեռօք վառած լինի նորա հուրն,
Թէ հազար անգամ վրէն ասած լինես դու Հայր մեր,
Հարամն չի սրբանալ, էն պատառը երբէք մի կէր.
Յետ ու յառաջ նորա վատ բնութիւնն չի մնալ ծածուկ,
Կանի քեզ դժոխային, հաւատն այս խօսքիս յատուկ,
Դարձիր հարամ ուտելուց՝ ազատիր քեզ, մարդ Աստուծոյ,
Եթէ ոչ՝ հարամն շուտ քամոյ կուտայ զհաւատն քո.
Ցանկութիւնը դէն ձգիր, մի՛ որոնիլ փառք ու պատիւ,
Աստուծոյ երկիւղից մի՛ հեռանալ դիշեր և տիւ.
Թէ չ'ունենաս հագնելոյ ոսկենկար բեհեզ պատմուճան,
Կաշիցից շորեր հագիր, որ է պինդ և դիմացական.
Թէ չի՛ դանես խմելոյ, ծարաւ ժամուդ, ջուր շաքարի,
Կարող ես գետի ջրով կառավարուիլ բազում տարի.
Թէ չի՛ լինի քեզ համար ջուր խմելոյ Սինէացի բաժակ,
Բան չկայ, երկու բուռդ մինչի մահդ. քեզի բաւ արկ.
Թէ չունենաս շրջելոյ համար երիվար զարդով,
Բան չկայ, լաւ կարող ես ամենայն տեղ դնալ ստով.
Թէ չի՛ լինի քեզ համար բնակուելոյ զարդարած սուռն,
Մի՛ նեղանալ, կարող ես սարի ձեղքում բնակուիլ դուն.
Թէ չունենաս տօտախի սանտր սանտրելոյ մազերդ,
Բան չկայ, լաւ սանտրն է էդ Աստուածատուր մատներդ.
Ամէն բան աշխարհքումն ունի միշտ իրան փոխանորդ,
Եթէ որ փոխանորդում լինի կամքդ՝ միտքդ ըղորդ.
Թէ ուզես իմանալն՝ անփոխանորդ ինչպէս բան կայ,
Հողիդ է, վատ գործերով մի՛ կորցնիլ, որ շատ թանկ ա.
Սէյեանդ, քո էս խօսքերդ մրով չի՛ ոսկւով գրած է,
Փրկիչ է էն մարդին, որ միշտ հարամի մէջ կորած է:



Ինչ Լինէն Բախտի և Չնախտի.

Մին օր՝ մէկ հարուստ մարդոյ տան
հասեալ՝ ուտէինք կերակուր.
Յանկարծ երկու մարդ ներս մտան,
Յորոց մին խուլ էր՝ միւսն կուր:
Տանուտէրն՝ երբ որ տեսաւ,
Նրանց գալուն ուրախացաւ.
Իւր տեղիցն շուտ վեր կացաւ,
Երկուսիցն էլ առաւ համբոյր:
Խնդրեց՝ որ նստեն, ուտեն հաց,
Կատարեցին կամաց կամաց.
Խուլն տան տիրոջն ասաց,
Թաաք լըքցրո՛ւ՝ ինձի տո՛ւր:
Տանուտէրն շուտ կատարեց,
Խուլն դինին ճանապարհեց.
Յետոյ երեսն ինձի արեց,
Ատեց. պարսն, իմ ձայնիս լո՛ւր:
Այս ընկերս կոյր է՝ ես խուլ,
Մեր մէջ կայ հրաշքի նշոյլ.
Ո՛վ որ իրան անի մեզ զուլ,
Աշխատանքն չի մնալ զուր:
Բաղդն՝ սա է, շինախտն ես,
Ո՛ւմ որ սիրենք՝ կանենք Վրէժ.
Մեր խղճմտանքն դու ան՛ս,
Թէ սրչափ արգար է՝ մաքուր:
Ես ջսկուժեմ մարդոյ լաւը,
Կա տարածումէ համբաւը.
Տալիս ենք փառաց հալաւը,
Լինումէ աշխարհքին մէջհուր:
Ամէն տեղ տղէտն է մերը,
Նրանց հետ կանենք սէրը.

Մինն է պարոն տանուտէրը,

Որ շինել եմք ոսկի բլուր:

Իմաստնոց հետ սէր չենք անում,

Ձի նրանք մեզ սուտ են հանում.

Կն մասին չեն փողովանում,

Եւ վիճակներն չէ՛ ամուր:

Երբ այս խօսքերն հասկացայ,

Եւ աւելի չի՛ դիմացայ,

Չայրացայ՝ բերանս բացայ,

Ասացի. լուարո՛ւք՝ քառ ու կուր:

Իմացայ կեանքիս լաւ վախտն,

Թէ ի՞նչ է բաղդն ու շինատն:

Որ մին փողով ծախէք բաղդն,

Ելի չեմ առնուլ ես կնդուր:

Յայտնի կասեմ, որ սուտ էք դուք,

Ձեր դոյուլթիւնն է դատարկ շուք.

Յիմարն է ձեզ կարծում յատուկ,

Իմաստնոց մօտ էք կեխտ ու մուր:

Ձի յիմարներին կընդունէք,

Իմաստնոց հետ սէր չունէք,

Հապ՝ դուք իշոյ բնուլթիւն ունէք,

Արժան է ձեզ համետ՝ մուր:

Կարծէի՛ թէ այս տանուտէր

Ե մին յայտնի իմաստասէր.

Իմացայ բեռնակիրն է ձեր,

Որ այսչափ սիրումէք էստուր:

Չայս ասացեալ՝ տեղից բարձրացայ,

Ասի. Պարոն, լաւ հասկացայ,

Հիմա քո ցաւդ իմացայ,

Որ պատշաճ հաց չունես և ջուր:

Սրանց հետն ես դու սէր անում,

Ի՞նչ լաւ բան կայ դորանցանում.

Մինն խուլ է՝ չի հասկանում,
Միւսի աչքումը չի կայ հուր:
Ին օրից ուխտ արարի,
Եթէ ապրիմ հազար տարի,
Չի մտանեմ տուն յիմարի,
Չի անեմ հեան առուտուր:
Յիմար մարդն բան խօսելիս,
Չըզվումեմ բառը լսելիս.
Թէկուզ ինձ փող լինի տալիս,
Կարծումեմ՝ թէ խփեց ինձ թուր:
Սէյեադն եմ՝ ես արժանին —
Ո՞նց կու փոխեմ անարժանին.
Հարկաւոր է միշտ անբանին —
Երկաթէ խթան ծայրն սուր:



4 ~~Ս. անն գինայ Տարմաւոր և հոգևոր նշարմաճք:~~

Պարտական մնայ նա օր դատաստանին,
Որ ծածկի՝ չի գովի պատուոյ արժանին.
Անդադար աշխարհքի վերայ ման եկայ՝
Տեսի, որ քեզանից արժան բան չ'կայ.
Ո՛վ գինի, որ արեան նման կարմիր ես,
Արդե՛օք մի բան կայ, որ նրան չ'տիրես.
Ո՛վ գինի, դու անհուն զօրութեան տէր ես,
Մանկանց հետ մանուկ ես՝ ծերոց հետ ծեր ես.
Ո՛վ գինի, քո թասը ո՛վ ձեռին պահի,
Նա տէր է, համարեա՛, կեանքի և մահի.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմէ սատանէն,
Չի վախիլ նա ահեղ սուրբ դատաստանէն.
Ո՛վ գինի, քեզանով շատերն մարդ եղեն,
Շատ մեռած կերպարանք լոյս զուարթ եղեն.

Ո՛վ գինի, թէ մանեա փոր չքաւորի,
Նա զինքն նման կանի մեծ թաղաւորի.
Ո՛վ գինի, թէ խմի քեզ իմաստունն,
Մեծ պատուոյ չի՛ հասած՝ չի՛ տանիլ քունն.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի յիմարն,
Եղքնգով կու քանդէ Կովկասու սարն.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի թշնամին,
Աշխարհքն աւեր կանի բերանոյ քամին.
Ո՛վ գինի, թէ խմի քեզի հպարտն,
Հազար գամ՝ կաւելնայ իւր սրտի դարդն,
Ո՛վ գինի, թէ խմի քեզ աւազակն,
Կու կամենայ գողանալ լոյս արեգակն.
Ո՛վ գինի, երբ խմեց քեզի սռասաց,
Պէտք է յաւիտեան խօսքին չի լսած.
Ո՛վ գինի, թէ խմի քեզ բամբասողն,
Թշնամի կու շինի մարդոյ հետ հողն.
Ո՛վ գինի, որ խմի քեզ բէ իկբալն,
Մտքից կու ձգի իրան ու՛հալն.
Ո՛վ գինի, թէ քեզի խմի սգաւոր,
Կասէ՛ թէ սա ի՛նչ լաւ օր է շնորհաւոր.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի պարտական,
Կուկարծի՛ թէ պրծա՛ւ պարտքերի տական.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի մահապարտ,
Գիտենայ՝ թէ կողանեն, չի՛ անիլ նա դարտ.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի զարգեարն,
Կասէ՛ իմ՝ ձեռքիս է երկնքի լարն.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի մաշկակար,
Ամենին իրանից կուկարծէ տկար.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի փինաչի,
Կուկարծի՛ թէ երբէք փինաչին նա չի.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի սովդաքար,
Դարեհին նա իրան կու կոչէ նօքար.

Ո՛վ գինի, եթէ քեզ խմէ բազազն,
Գայիսան կու կարծէ իրան կէս գազն.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի շիշասազ,
Ադամանդ տաշողին կանի նա տնազ.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի տան հաւն,
Աղուեօի հետ կանի համարձակ դաւն.
Ո՛վ գինի, եթէ քեզ խմի տաւարն,
Չի՛ թողուլ՝ որ մէջքին դնեն նաւարն.
Ո՛վ գինի, թէ որ քեզ խմի աւանակ,
Ճարտասան կուլինի անթուղթ՝ անթանաք.
Ո՛վ գինի, դեղերի գլուխն դու ես,
Տեսել եմ հրաշալի գործերդ քս ես.
Ո՛վ գինի, որ խմի քեզ կայրն աջօք,
Աչխարհքն ման կուգայ մին օր չոքէչոք.
Ո՛վ գինի, թէ հոտդ առնի չօլաղն,
Կասի՛ մի սչինչ մարդ էր թէյմուր կաղն.
Ո՛վ գինի, եթէ որ քեզ խմի քառն,
Կասի՛ լսումեմ հրեշտակաց բարբառն.
Ո՛վ գինի, եթէ որ քեզ խմի լալն,
Կսկսէ մարդկանց մէջ նա քարոզ տալն.
Ո՛վ գինի, եթէ որ էդքան ազդու ես,
Սրանից յետոյ իմ՝ ընկերս դու ես.
Ամէնէն կ'հրաժարիմ՝ քեզի կուբունեմ,
Արմուռնկա կարասիդ կուտամ՝ կուկունեմ.
Հանապազ քեզի հետ կսկսեմ խօսել,
Առանց քեզ անցուցած օրս ափսոսել,
Թէ ինչո՞ւ քեզ վաղուց ես ծանօթ չեղէ,
Որ դոյնդ անբժիշկ ցաւերի դեղ է.
Մեր մէջ կըկարգեմ մին տակառապետ պատանի,
Որ նա միշտ մեզ 'ի զուարճութիւն տանի.
Տակառապետի պաշտօնն պիտի նա լինի,
Որ ածի՛ տայ ինձի շուտափոյթ գինի.

Քեզանով լցնի՝ տայ ինձ բիւրեղի բաժակը,
Չ'Թողու բերնիցս գնայ քո ճաշակը.
Աճի՝ տայ էն գինին, զոր Աստուած սիրեց,
Նրանով հոգևոր աշխարհին տիրեց.
Աճի՝ տայ էն գինին, որ արեգակ է,
Անարժան տեղ մանի՝ անշէջ կրակ է.
Աճի՝ տայ էն գինին, որ հոգւոյ լոյս է,
Վատերին՝ պատիժ է, լաւերին՝ յոյս է.
Աճի՝ տայ էն գինին, որ միշտ սուրբերին
Ոչինչ տեղ չի՝ փոխիլ ընդ անսուրբերին.
Աճի՝ տայ էն գինին, որ առանց ջուր է,
Ո՛վ նրան ջուր խառնի՝ աչքերն կուր է.
Աճի՝ տայ էն գինին, որ 'ի վերնատան
Քրիստոս տէրն մեր տուաւ մեզ նշան.
Մատուակ՝ մին մօտս բեր դու գինւոյ կուլէն,
Որ հաճոյ է ինձ շատ նորա կուլկուլէն.
Մատուակ, մին մօտս բեր գինւոյ սպիտակը,
Որ գնամ՝ աւերեմ դժոխքի տակը.
Մատուակ, մին մօտս բեր գինին կարմրագունակ,
Որ լեզուս բացուի՝ լինիմ մին ճարտար ԹուԹակ.
Մատուակ, մին մօտս բեր գինին դառնահամ,
Իմ ցաւիս փրկիչն նա է յարաժամ.
Իմ մատուակ, մին մօտս բեր էն գինին ծածուկ,
Որ խմեմ՝ կուլլինիմ մին հրեշտակ յատուկ.
Մատուակ, մին մօտս բեր երկնային ջուրը,
Գուցէ՛, նա փարատէ սրտիս տխուրը.
Մատուակ, մին մօտս բեր ծերոց մահակը,
Կայսերաց աթուղ՝ իշխանաց Թագը.
Մատուակ, մին մօտս բեր խելքի բանալին,
Խմեմ և բաց անեմ անխմանալին.
Մատուակ, մին մօտս բեր փառքն աշխարհի,
Խմելով՝ զուարճանամ մին քանի տարի.

Մատուռակ, մին մօտս բեր Փրկչի արիւնը,
 Քաւարանը մեղաց՝ հաւատոյ սիւնը.
 Կուէն՝ Հայր Աստուած է, Մատուռակն՝ Սուրբ Հոգին,
 Գինին՝ Քրիստոս, որով հոգեքնորոգին.
 Սէյեազն խմէ և փառք տայ իւր Տէրին,
 Աղօրմի՛ ասի միշտ իւր հայր տէրտէրին:

Ի Վերայ ագահ Տարգոյ:

Փլաւ ուտելն լաւ բան է, մին օր մեր տան՝ մին օր ձեր տան 1,
 Եթէ որ միշտ մեր տանն ուտենք, լսողքն ինձ անէծք կուտան 2:

Իմ մանկութեան ժամանակը շատ եմ լսել ես ՚ի հօրէ,
 Որ աւանակն ընկերին յամենայն ժամ պարտք կը քորէ.
 Եթէ պատահեց՝ ստացար մին սև դրամ ՚ի յեղբօրէ,
 Ին դրամի փոխարէնն դարձուցանել հարկաւոր է.
 Թէ չի՛ հատուցիր, աչկարաց կուլիննիս մին զգուէլի բան:

Չեռնաբաց մարդոյ իլածն՝ ազահի համար քէսիք է,
 Ինչքան տաս նա չի՛ դոհանալ, կասի թէ ինձի նասիք է.
 Ամենայն ժամ տուող կուզայ, էնպէս իմանաս՝ թասիք է,
 Եթէ դանձարան ունենայ, էլի իմացէք՝ քասիք է.
 Որ լաւ նայես, նորանուժ միշտ կտեսնես աղքատի նշան:

Երբ ծխանից ծուխ դուրս եկաւ՝ ազահն մօտիդ պատրաստ է,
 Հրաւիրելոյ չի՛ սպասիլ՝ նա իրան գործին զգաստ է.
 Ինչ ժամ որ անուներ տաս, ծառայքն կասեն՝ թէ աստ է,
 Որ մարդի տան խորտիկ եփվեց, ազահն ծառայ նուաստ է.
 Ինչ որ տաս ձեռքն՝ կուլ կ'տայ, թէ որ լինի աղքն մկան:

Իմ կենաց մէջ ազահ մարդոյ տեսել եմ քանի տեսակն,
 Փողոցներումն ման կուզան՝ երբ որ ծագեց արեգակն.

1 և 2. 1՝, Դեռայն գտնեց Վերջումն կրկնէն պայտառիկ պաղս:

Հացի ժամուն միշտ պատրաստ են հարուստ մարդոց դրան տակն,
Խօսողի աչքին կու նային՝ գլխից վեր առած դտակն,
Ազահներն այս վիճակն խիստ նմանութիւն ունի շան:

Ինչ ժամանակ որ կոչեցիր ազահ մարդին տունդ հիւր,
Կսկսի լաւ ուրախանալ, նուազարանը կածի, կու երգի սուր,
Էնքան կուխմի ձրի գինին՝ որ կ'լինի բնական կուր,
Ազահն անյագ գազան է՝ նորա կանչողն է խելաթափուր,
Որ նորա պէս անարժանին տանումէ իր մօտ բողմական:

Օրը քոան հետ հաց ուտի՝ չի ասիլ. ես կուշտացել եմ,
Բաղնիք գնայ՝ նուրէ կուղի, էս ես վաղուց հասկացել եմ.
Որով՝ ազահութիւն չունիմ՝ նրանից ուրախացել եմ,
Ազահի հետ սէր անելուց՝ վաղուց ձեռքս լուացել եմ.
Որ արժանի մարդիկն իմ անուան չի դնեն անբան:

Ազահի հետ կեանք անցուցի՝ նորա տունը մին չի տեսայ,
Որ խմանամ ի՞նչ է ուտում՝ ընտանեաց կալն ի՞նչ պէս ա.
Կարծեօք, որ աշխարհքի մէջ նա հողում կենող մողէս ա,
Թէ չոր պանիր տեսնի՝ կասի, կերակւրի լաւն էս ա.
Սէյեանդ, միթէ ասիլ պըտես՝ որ ազահի դուրծը խմանան:

Արհարող տպանաւար:

Մ'նց չի դովեմ ես հազար ութ հարիւր յետուն ու մէկ թիւն,
որ նրանում պտոյտ եկաւ բաղդիս խանդարուած անիւն.

Ես այն տարին նման կանեմ աշխարհքի փրկութեան տարւոյն,
որ գիշերն սուրբ սեղան էր՝ սրբութիւն սրբոց էր տիւն.

Ո՛վ պատուելի հաւատակիցք, ես ձեզի տխուր եմ տեսնում,
միթէ լաւ օրիս չէք ուրախ՝ որ եղբայր եմք սուրբ խաչիւն.

Ինչու պիտի մէկմէկու հետ առանց պատճառ նենդ ունենանք,
գիտելով՝ որ այսօր ողջ եմք, կուլի՝ մեռանիմք վաղիւն.

Ձեր միջումը շատ մարդ կայ, որ եղբօր հետ խէթ ունենալով՝
չէ՛ն հշում, մինչ չէ՛ն կշտանում միմեանց թի՛մն բողբաչիւն.

Ասեմ ձեզ՝ որ անսէր ազգի մէջ Աստուած չի բնակուել,
 եւ վերջումը յոյժ խտուածեամբ կառնէ նրանից հաշիւն.
 Մին մարդ, որ իւր կենաց մէջ լաւն ու վատը չի հասկացաւ,
 Սէյեա՛դ, պարտիս գիտել՝ որ նա չի գիտում իրան պատիւն:

Յարգարտի.

Ո՛վ չար, մինչև ե՛րբ պիտի չար մնաս,
 Չար գործ գործելու միշտ յօժար մնաս.
 Ինքդ չար ես և միտքդ չարութիւն,
 Մի՛թէ չես սւղում, որ արդար մնաս:

Քեզ պէսի հողայ տէրն չար դեն է,
 Կորս հանգիստն դժօխքի աղբեն է.
 Մարդ Աստուծոյ չէ, որ՝ էլ՝ հիւն՝ էւն է,
 Մեռնիլն շահ է, մնալն փասս:

Թէպէտ ամէն օր ասումես՝ Հայր մեր,
 Երբէք չի գիտես սէրութիւն կամ սէր.
 Խորհի՛ր՝ որ ունես Աստուծոյ պատկեր,
 Գուցէ նրանով մեղքերդ զգաս:

Գործերդ, ասեմ, է միշտ գողութիւն,
 Գեղումես՝ չես անում յիշողութիւն.
 Կասէն՝ սուտ մեղին է սուտ թողութիւն,
 Սէյեա՛դ, խրատդ էլ մարդոյ չի տաս:

ՂԺԳԱԿԱՆՔԻՆ յԱԽԱՀԻ ՎՈՒՆ ԽՆԿԱՍՄԱՍԿԱՆՔԻՆ
 յԻՐԱՅԻ ՎԱՐՂԻ:

Ո՛վ կարմիր վարդ, երէկ էս ժամ ասումիր, դու ես իմ եարն¹,
 Հապ՝ ո՛նց էլաւ, որ էդպէս շուտ ինձ թողի՛ր, սիրեցիր խարն²:

1 և 2. Ղ, Բէնայի ասոնց վերջումին կրէնէմ՝ զայստոնիկ արդս :

Էն ի՛նչ ժամ էր, որ խօսքերիս ասումիր՝ մեզը են, կամ շաքար,
Մին նուազ ինձ տրամած տեսար՝ կարմիր շորերդ հանար, սև հիւր.
Հիմա քո մօտ՝ թէ՛ ես, թէ՛ մին անբանացեալ երկանաքար,
Մի՛թէ միշտ էդպէս կուլինի՛ հողիս, մտերմի տուած իկրարն:

Մտերմի մտերմին զրկելն չ'կայ մերվաթում՝ ինտաֆում,
Անգին կեանքս փչացրիր մինչև այսօր դառն ջաֆում,
Որ դու էդքան անհաւատարիմ՝ իր՝ ինչո՞ւ՛ իր ինձի խաբխաբում,
Ինձ արածդ՝ Աստուած ինքն բերի կեանքիդ ճանապարհն:

Գարնան խրախից ինձ զրկելով՝ քո կամքիդ հեռացրիր,
Ողջ սիրահար թուչնաց մէջ ինձ էսչափ թեթեւացրիր.
Տեսնեմ՝ կարմիր օր չի՛ տեսնես, որ իմ օրս սևացրիր,
Քո դադարդ կորվի, որ կորեցիր սրտիս դադարն:

Ինչո՞ւ պիտի էդպէս անես՝ որ մարդիկ քեզի վատ ասեն,
Ամենայն տեղ՝ հանդէսներում՝ քո արարմանցդ բամբասեն.
Թէպէտ քեզպէս անեմանին բամբասանք ի՛նչ կը փասեն,
Միայն վախս նա է՝ ընկնես անողորմների դաւթարն:

Սէյեանդ, եթէ խեղճ սոխակին դու հաւատարիմ աղբեր ես,
Վարդից էդքան մի դանդաաւեր, քանզի խղճմտանքի տէր ես.
Մին մարդոյ վատ բանն ասելիս՝ լաւ բանն էլ պիտի միտ բերես,
Որ քեզ չասեն վատ քննիչ է, չի՛ ջուկում ծուռն ու արդարն:

Աշխարհքիս մէջ տեսնուամե՛մ երբէք հաստատ բան չ'կայ,
Խղճմտանքը մաքուր պահող իսկի մին ինտան չ'կայ.
Հարուստին ահ, աղքատին շահ, կարգին դատաստան չ'կայ,
Աւքն ուղիղ, մայան արդար, լու վաճառական չ'կայ.
Ծերն շուայլ, մանուկն շուն, մէջները իման չ'կայ.
Բաս աշխարհքի վերջանալոյն, յայտնի է, դիւման չ'կայ:

Աշխարհից յառաջ քանի՛ կերպ ստեղծուած կար՝ վերջացան՝
Ամէն մին առարկայի ջուկ ջուկ Աստուած կար՝ վերջացան.
Ադամից յետ քանի՛ որ հողւով լցուած կար՝ վերջացան,
Հողեւոր՝ թէ՛ մարմնաւոր շատ սկսուած կար՝ վերջացան:

Գեղեցկութեան այդոյ մէջ դռնով բացուած կար՝ վերջացան,
Անարհքիս մէջ, տեսնուամբ, երբէք հաստատ բան չ'կայ:

Բանականին անբանից ջոկողն իւր հազուտան է,
Բարբին՝ վարբին չենք նայել, մեր լաւ մարդն հարուտան է.
Ի՛լ չենք գիտում, որ փողն մարդկան հոգւոյ կորուտան է,
Կնտուր անբան եմք կոչում՝ ով որ բնութեամբ սուտան է.
Չեմ կեղում՝ բաց եմ առում, քանզի խօսքիս դրուտան է,
Խղճմտանքը մաքուր պահող իսկի մին ինտան չ'կայ:

Խնդրադործին տեսնելիս՝ դատողն մտիկ է անում,
Որ իր սքանի ուզածը չի՛ կարող դանի նրանում,
Խօսքին մտիկ չի՛ տալիս, դատարանից դուրս է հանում,
Բայց՝ եթէ չար հարուտան պատահմամբ մարդ է սպանում,
Դատաւորին փող է տալիս, իւր մեղքից արդարանում,
Հարուտանն ահ, աղքատին շահ, կարգին դատատուան չ'կայ:

Ո՛վ որ մի հետ տեսելայ ապրանք առնող՝ վաճառողը,
Հողւով կու վկայէ, որ նրանից շատ լաւ է գողը.
Թէ մէկ փող ինաս անի, յանձն կնկնի մահուան դողը,
Նրան ջոկ հողի շունի, նորա հողին շահն է՝ փողը.
Թամահի ձեռքին դերի, կազատուի երբ մտնի հողը,
Աւքն ուղիղ, մայան արդար, լաւ վաճառական չ'կայ:

Չի՛ խաբուէք, երբ որ մարդի երեսում տեսնէք սպիտակ մազ,
Որովհետեւ ծեր մարդկանց միջի լաւն էլ է յոյժ նուազ.
Թէ հարամի ձայն լսեն, կու դնան վըրէն վազէվազ,
Պատանիքն հոգւոր արարմունքին կանեն տնազ.
Եկեղեցի չի՛ն դնալ, սազ կածեն և կասեն շահնազ,
Ծերն շուայլ, մանաւկն շուն, մէջները իման չ'կայ:

Ին մարդին լաւ կասեն՝ որ միշտ Աւետարան քարոզէ,
Չար ճանապարհ ընկածին՝ բարի խրատով համոզէ.
Չիմա է՛ն մարդն է լաւ, որ ինքն լօթի՛ կինն բող է,
Կամ թէ որ քարքին նայես, կասես՝ սա կատաղաց խող է.
Սէյեանդ, որին հաւանար՝ վերջը տեսար անպող է.
Բաա աշխարհքի վերջանալոյն, յայտնի է, դիւման չ'կայ:

Աստեղաց մէջ հազարի լայնն քիչ է, մէկինն շատ,
 Երևի, որ երկնքումն էլ, երկրի պէս, կայ հարուստ՝ աղքատ,
 Նախասահմանութեան միայն այս բանն է թվում մարդի վատ,
 Որ չար մարդին հաց է տուել, բարին թողել է առանց դատ,
 Չե՛մ գիտում սրանց պատճառը, որ նրանից անե՛մ դանդառ:

Կնայէս մարդ է իշխան կոչվում, որ չի՛ կարող պահել մին էլ,
 Թէ որ արարմունքին նայես, կասես, սա է մեռելոյ դէլ:

Տանից դուրս դալիս՝ մարդիկ պատվումեն նրան փէշհափէշ,
 Ինչ որ թանգադին բան ունեն՝ իրանց ձեռօք անեն փիշքէշ:
 Այս բանն ինձ ստիպումէ՝ աղաղակելով ասել դար:

Բաղդն էշերին է տուած, վայելչութիւնն շներին,
 Յոյս պակասումէ՝ նայելիս յիմարի բարձր տներին:


Մարդիկ պիտի լայնատարած սիրտ ունենան, որ համբերեն,
 Հապ՝ մեք նայելոյ եմք եկել աշխարհիս մէջ՝ փառք Տէրին:

Անչառ մարդոյ բան չի՛ սա, չարն է էս գործերին արմատ:

Թէպէտ աղքատներն էլ ունին հարուստ վիճակ, որ այժմ է դ՛իտ,
 Գրոց խօսքով են վիճակը նա կստանայ, ո՛վ ունի բաղդ:

Կն կեանքի բաներն երևոյթք են, էս աշխարհքի բարիքն է նաղդ,
 Կարծեօք՝ ո՛վ որ աստ աղքատ է, էլ նա աղքատ կուլի էն վախտ:

Սէյեա՛դ, ունայն բանի համար ե՛կ՝ մի՛ լինիլ թերահաւատ:



Գրագրաստութիւն

Մե միրուք, ստիտակ միրուք, կարմիր միրուք և չալ միրուք,
 Ինչ դատ ես՝ տեսնողն քեզ չի՛ ուղում բարե տալ, միրուք:

Դուրս եկիր՝ երեսումն ս՛չ գոյն թողիր, ս՛չ խալ, միրուք,
 Պատիւ չունես, եթէ որ հաղնուես թիրմա շալ, միրուք:

Ընկերներիս մեջումն արիւր ինձ բէիկբալ, միրուք:

Մինչի քս երևալն՝ կանանց մէջ ինձ համար դաւ էր,
 Ընկել եմ՝ նրանց աչքից՝ ասի՛ր, տեսնե՛մ, էս ինչ ցաւ էր:

Քս իմ՝ ձը դուրս դալեց՝ որ շահ բան դուրս դար, խիտա լաւ էր,

Ինչ 'ի քեզ' իմ երեսիս մին բաժակով ջուրն բաւ էր.

Հիմա մին կուժ ջրով էլ չեմ կարում լուանալ, միրուք:

Այն օր ես քեզ վերայ դուրժ եմ ածում մի ֆուռն սապուն, եթէ որ լաւ չեմ նայում, խկոյն լինումես ոչլի բուն.

Մազերիդ վերայ յայանի լարախաղաց է լինում լուն,

Սև երես լինիս, ինչպէս սև երես արիբ ինձի դուն,

Որ չեմ կարում համարձակ մին բերանս բանալ, միրուք:

Չի կանչած հիւրի պէս՝ քո գլխու եկիր իմ մօտս,

Դեռահասներն միջից սկսեցիր կարել սոս.

Ում որ ես մօտանումեմ, ինձ ասումեն՝ մազմազոտս (ֆմազոտ ես).

Ասիլներն էն է՝ թէ արջի նման բուրդբուրդոտս. (ֆ բրդոտ ես.)

Յայանի ասեմ՝ կամումեմ ես քեզ սափրել տալ, միրուք:

Եթէ որ պատահումէ մին անդ հարսանիք եմ դնում,

Երկու օր յաւաջվանից քեզ վերայ երանդ եմ դնում.

Ո՛րքան որ աշխատումեմ՝ մէջդ սպիտակ մազ է մնում.

Քո պակասութիւնները այլքն են ինձի հասկացրնում.

Սկսումեմ ամօթու խնձոյից դուրս դալ, միրուք:

Դեռ սև ես՝ էդպէս ես, գուցէ՛ թէ գոյնդ սպիտակեց,

Ենպէս խնացիր, որ իմ գլխիս Ատուած ձեռօք թակեց.

Ում երեսից համբուրեմ՝ կասի, վայ մազդ ծակեց,

Կը տեսնեմ՝ որ բարկացաւ, յանկարծ երեսիս սպտակեց.

Այնուհետև ո՞նց պարտիմ աշխարհքումը կենալ, միրուք:

Ինչ գեղեցիկ տեսնի ինձ՝ կասի, սա այժ է միրքաւոր

Կամ խուրձ կապած խոտ է ամենայն մարդոյ հարկաւոր.

Դու դուրս դալիս՝ ինձ արդեօք նախ ո՛վ ասեց շնորհաւոր,

Են շնորհաւոր բառն անէժք է եղէլ խորհրդաւոր.

Մատաղ կանեմ, թէ կարենան քեզ ինձնից գողանալ, միրուք:

Հազար տեսն՝ էս մարդն դիտութեամբ փիլիսոփայ է,

Հարստութեամբ աշխարհի վերայ կայ՝ չը կայ, մին սա է.

Փառքով՝ պատուով Աղեքոսանդը Մակեդոնացւոյն թայ է,

Քեզ տեսնող աղջիկն էլ ո՞նց պիտի ինձ սիրով նայէ.

Ի՞նչ ծածկեմ, ինձ արել ես ամենայն անդ լքեալ, միրուք:

Handwritten note at the bottom of the page.

Թէպէտ ես միշտ քսուամեմ՝ քեզ զանազան հասուիլ եղն,
Կարծելով՝ թէ կարող է եղն տանել քս տգեղն.

Հազար եփ տաս մեղրուամն ո՞նց կ' քաղցրանայ պաղլեղն.

Միրուք, դու էջի պուչ ես և նորա բաշն է քս բեղն.

Ինձ պէս ցաւակից մարդին արեցիր խուլ ու լալ, միրուք:

Սէյեանդ, քեզ միրուք չունես՝ էդ ո՞ւմ վերայ ես քար քցում,

Միրուքի պատիւը դու ի՞նչպէս ես դարիվեր քրցում.

Վասն էր ես միրքաւորաց սրտները ահ ու զար քցում,

Սպիտակին ասես՝ 'ի ճահ է, սեին՝ ինչո՞ւ ես շառ քցում.

Մօտիս կէս փող ես, թէ որ լինիս Ռուսթէմի Չալ, միրուք:

Handwritten signature and decorative flourish

Խօսակցութիւն Տարբայ ընդ Տանուշակի.

Ո՛վ անուշահոտ մանուշակ,

Յաւս իմն, գարնան դուշակ.

Մին մարդոյ ես ընկերացայ,

Ո՛չ մասն է տալիս՝ ո՞չ թուշակ:

Ինչ որ նրան ճանաչեցի,

Տուն չունէր, մեր տուն կանչեցի.

Աստեղի ամաչեցի,

Երբ որ տեսայ կօշիկքը ծակ:

Մին ջուխտ մաշիկ դրի ոտին,

Հաց տուի՝ պնդացաւ դօտին.

Երբ որ ընկաւ հացի հօտին,

Սկաւ խնդրել այս տեսակ:

Աաց. արի՛, լինեմք եղբայր,

Կամ՝ դու որդի, ես լինեմ հայր.

Աշխատանքն լինի մեր մայր,

Գուցէ՛, դնեմք դլխներիս թագ:

Աւուտուրը մեզ ծէս անեմք,

Հարազատ եղբօր պէս անեմք.

Ինչ որ վաստակեմք՝ կէս անեմք,

Թէ կայք լինի և թէ ստակ:

Էս դռնով հեան միացայ,

Եղբայրութիւնից լիացայ.

Ճշմարտութեանն հիացայ,

Զարմայրուց ինձի յստակ:

Մէջներս չ'կար չար խօսող,

Ո՛չ զրկող ունեինք, ո՛չ գող.

Աշխատեցինք և՛ կայք և՛ փող,

Լցուցինք անհամար քօակ:

Ճուշտութիւնը խիստ ատեցի,

Գիշեր՝ ցերեկ աշխատեցի.

Նա պարկեց, ես փող դատեցի,

Բացեցի մին ոսկւոյ վտակ:

Սոված էր, հացի տէր արի,

Մին տուն խեղանի հէր արի.

Ռամիկ էր, տէրտէր արի,

Գլխին դրի մախուր գտակ:

Երբ ստացաւ այս պատիւը,

Իմացաւ մեր փողի թիւը.

Ճաժուկ գողացաւ հաշիւը,

Ինձի անուանեց իւր մշակ:

Ինչպէս յառաջ ուրախացրուց,

Այժմ ինձ տանից փախցրուց.

Պօլիցի անուամբ վախցրուց,

Թէ որ խօսես, կուտես մահակ:

Ասացի. պատուարժան տէրտէր,

Բանի սկիզբը միտդ բեր.

Մենք չէինք, որ եղանք աղբեր.

Այսպէս տուիր բանին պակ:

Պատասխանեց. թէ ո՞վ ես դուն,

Քեզի բռնել կուտամ իսկուն.

Ես քահանայ, դու ռամիկ շուն,
Ո՛նց ես խօսում ինձի ներհակ:

Հնամիքդ ա՛ռ, դուրս արի՛,
Քաշու՛ր, կորի՛ր մարդավարի.
Եթէ ո՛չ, նման տաւարի —
Կ'տամ քեզ դաւազանաթակ:

Տէր հայրն ինձ էսպէս արեց,

Տանից դուրս ճանապարհեց.

Կենդանւոյն պատանս կարեց,

Աշխատանքս թողեց փուճ՝ լակ:

Մանուշակն պատասխան ետ,
Կորե՛ր՝ գնա՛, յիմար՝ տղէտ.
Ո՛չ թէ տէրտէր, այլ վարդապետ
Լինէր, կուժողնէր քեզ դարտակ:

Չէս իմացել՝ որ ազահն,

Երբ որ տեսաւ իրան շահն,

Կու մուանայ ահն ու մահն,

Հողին կ'ծախէ բացարձակ:

Սէյեանդ, խօսքդ խոտելի է,
Բայց միտքն հոտտելի է.
Հեռուստ դատարկ մտտելի է,
Մեծ խրատ է, ո՛չ թէ առակ:

Լ. Ռեծարոյ բժիշկն Տ. Գեորգ Թեոդորոսեան
Հանվերդեանց Տեետեցի:

Թանգազին բարեկամ իմ, Գեորգ Աղայ,

Չեզ նման Հայկազին անձնս մատաղ ա.


Ի՛նչ կուլէր՝ ձեզ նման քանի մի Հայ լինէր,

Որ մեր Ազգն էլ ազգասէր ազգաց թայ լինէր.

Մեր Ազգն սերեց էնչտի աղքատ է,

Մինչ ամէն ազգ նրան անչափ կուգատէ.
Ճշմարիտ է՝ ունիմք մին քանի իշխան,
Բայց մին վարդով չի՛ լինիլ եղանակ գարնան.
Հարուստ մարդ շատ ունիմք, հոգւոյ զարդ սակաւ,
Էն մասին՝ Տէրն մեզ այսպէս պատկաւ.
Այլ ազգի տասնից՝ մէկ տմարդ կուլի՛,
Մեր ազգի հնգից՝ մինն մարդ կուլի՛.
Կարելի է որ դուք յաջող էք կեցել,
Էս քանը իսկապէս չի՛ լինիք փորձել.
Ասողերի շարժմունքը նա լաւ կիմանայ,
Որ մինչեւ առաւօտ զարթունս կումնայ.
Կամ նա՝ որ ցաւն աչաց կարելայ քունն,
Եւ կամ թէ օդն ու երկինքն է տունն.
Կտորած նաւուսմ լինող խեղճ մարդկան ցաւը
Ի՞նչ գիտէ նա՝ որ չի՛ ճանաչում նաւը.
Ի՞նչ գիտէ անանկի ստամոքսի տողն,
Ո՛ւմ համար որ մէկ է փողն ու սե հողն.
Էս քաները տէտք է ինձնից հարցրած,
Որ մօր պէս շատ ցաւ եմ փորուսնս կրած.
Շատ մարդկան շեմքերում աղքատ եմ դառել,
Իսկ նոքա խնդիրքս յականջ չեն տուել.
Թէպէտ Փրկիչն ասաց՝ մէկ մէկին սիրէք,
Գիտեմ՝ այս պատուէրը դուք առանց գեր էք.
Աշխարհքի մէջ եմ քառասուն տարի,
Չ'տեսայ հինգ Հայ՝ որ սրան կատարի.
Աւ երես միմեանց եղբայր են կոչում,
Ժածուկ տեղ միմեանց լեզուաւ են խոջում.
Հայ կայ, որ իւր շեմքի ողջ ծառաներին
Ստախօս է արել վասն իրան խէյրին.
Թէ լոյսն բացուելից՝ մինչև դիշերն
Հարցանես, միշտ կասեն՝ տանը չէ տան տերն.
Գրել'իք ինձի՝ թէ եւ չի՛ տրտնջաս,

Մին ասիր, տեսնեմ, ո՞վ պատուելի Աղաս,
Ո՞նց կարէ սիրտ մարդոյ սրանց դիմանալ,
Թէ ծածկի՝ կուփտի, այլ պարտ է բանալ.
Եթէ որ ծուռ բանին չասացիր՝ ծուռ է,
Իմացիր՝ որ կասեն, չի՛ տեսնում՝ կուր է.
Լաւն այն է՝ երանք վատ կոչուին, քանց ես կուր,
Ո՞ւմ համար պիտի ես վիզ առնեմ էստուր.
Կաւ կան բազումք, որ ծնվելուց մինչ՝ ՚ի մահ
Մեր ազգին չե՛ն տուած մին սև փողի շահ.
Թէպէտ կեանք է տալիս արեգակն աշխարհին,
Բուն աչքը խփումէ՝ չի՛ տեսնում նրա բարին.
Յայտնի է՝ մեր մէջ էլ Բու թուչուն շատ կայ,
Գիտեմ, կասէք՝ ամէն ազգի մէջ էլ վատ կայ.
Ո՞վ որ լաւ է՝ լաւ է, ո՞վ որ վատ է՝ վատ,
Վատերի ձեռքիցն է տրանջում Սէյեադ:



Ի վերայ արեւնարբու աչաց երէրորդ «Էրի Տարդհան».

Մէկ նայելով՝ հոգիս աւին քո այդ մարդասպան աչքերդ,
արեւնահեղ Խան աչքերդ,
խումարլու մաստան աչքերդ,
յոյժ իմացական աչքերդ,
չաա բանի նշան աչքերդ,
ուղումնն ինձ դերի անեն՝ ծախսեն՝ Դաղստան աչքերդ:
Ասումեն՝ թէ այդ աչքերդ շատ անհամար ցաւի ճար են,
արեգական հաւասար են,
գեղեցկութեան սիրահար են,
անկիւնաւորեալ անգին քար են,
կարճն ասեմ՝ կենարար են,
Թէ ուղենան՝ մեռած մարդոյ կուտան կրկին ջան աչքերդ:
Ո՞վ լաւ նայի աչքիդ միջին, թէ՛ մասողաչ լինի և թէ՛ ծեր,
կու լինի մեծ իմաստասէր,

անասելի գիտութեան տէր,
այսինքն՝ վարդապետ, տէրաօր,
Նրանց մէջ կան շատ մտքեր,
որ ամէն լեզուով կոչվումեն հարուստ բառարան աչքերդ:
Աչքերիդ սուտ շարժմունքն ինձի ձգեց օտար աշխարհ,
չի՛ թողեց ինձանու՛մ դադար,
չի՛ դտայ օգնական՝ սատար,
կարվեց վասն իմ ամէն ճար,
եղէ թշուառ գերակատար,
վերջումն ինձի վատ մարդկան թողին ասպատան աչքերդ:
Թուխ աչքերդ սիրտ է քաշում, ինչպէ՞ս աղամանդն՝ երկաթ,
բնութեամբ են բաբաթ բաբաթ,
մին հետ արտասովումեն կաթ կաթ,
մին հետ ծիծաղումեն մաթ մաթ,
ինձի խորովել են դաթ դաթ
էդ սիրոյ հրով լցած՝ էրած վառարան աչքերդ:
Թերթեւունքիդ ամէն մազն հազարին անտուն է արել,
շատ մարդոյ սիրտ արիւն է արել,
արթուն մարդին քուն է արել,
քնածին զարթուն է արել,
անչա՛հ անձանց տուն է արել,
ինձանու՛մ երբէք չի՛ թողել հաւատ Դաւթական՝ աչքերդ:
Աչքերդ, ո՛վ նազելէ, կամենումեն ինձի խաբեն,
անխնամ արիւնս թափեն,
երեսի ուէ՞ս խելքս չափեն,
ո՛հ, թէ անիրաւ սրչափ են,
երկու մարդակեր վիշապ են,
աշխարհումս բան չե՛ն թողել՝ արել են կործան աչքերդ:
Աչքերիդ խրատ տո՛ւր, որ իրանց աչքերը լաւ բանան,
չարութիւնից հանդարտանան,
չա՛հն ու փնասը հասկանան,
սիրահարի ցաւն իմանան,

չուրախացնեն սատանան,
յանկարծ կուտեսնեն՝ մտել են կուակէ պատան աչքերդ:
Որովհետեւ բազմացելայ աչքերիցդ գանգատողը,
իլասատու չար խօսողը.
մին օր կու լսի Դատողը,
անձնդ կնկնի մահուան դողը,
քեզի կու ձգի սև հողը,
վերջն, իմացի՛ր, կ'լինին մըջիւնի հանքարան աչքերդ:
Թէ իմանաս՝ աչքերդ է մի միայն իմ սրտիս ցաւն,
կտորել են խեղճ բաղդիս նաւն,
մարթել են կեանքիս կաքաւն,
դրել են ոտիս բուխաւն,
ձգել են ինձ տղմուտ կաւն,
Սէյեադն եմ՝ չեմ գիտում, թէ երբ կուլին փոշիման աչքերդ:

Յանդի Տանու-Բիւն:


Ես միամիտ կանգնած տեղս՝ դու ինձ սիրահար արեցիր,
Կեղտոտ գործից փախչող էի՝ նրան հետ եղբայր արեցիր,
Հանգստութիւն ցանկացողիս՝ նեղութեան յօժար արեցիր,
Երեխայական մաքուր միաքս՝ սիրովդ խաւար արեցիր,
Ոտիս՝ ոտիսի չէր անիւ, ինչ դու ինձ համար արեցիր:

Քեզ ես ճանաչելուց յետոյ՝ ինձ ամէն բան սէր երևաց,
Ինչ առարկայի որ նայեցի՝ վարդագոյն թուշեր երևաց.
Ումնում որ գէշ երես տեսայ՝ մին քաշած պատկեր երևաց,
Քս անգին մտերիմդ իմ աչքիս անտէր երևաց,
Հրեշտակ էի, սատանայի դու ինձ հաւասար արեցիր:

Կարծեցի, թէ աշխարհքումս քո սէրից քաղցր բան չ'կայ,
Կուսնի տակին դու ես և ես՝ մեղնից ուրիշ ինտան չ'կայ.
Հէնց իմացայ՝ սիրահարի մեղքերին դատաստան չ'կայ,
Սերովդ գերի եմ եղել՝ ինձանում աղատ ջան չ'կայ,
Դու յայտնի էս անմեղ հողիս դժոխքի պաշար արեցիր:

Ամենայն կերպ զօրութիւնս աստիճանօք առ քեզ քաշար,
 Զուարթ մարմինս օրէ ցօր բարակ ցաւի նման մաշար.
 Ամէն օր մէկին սիրելով՝ լեարդս փորումս խաշար,
 Եթէ որ մին լաւ մտածես՝ ինքդ քեզ կուկոչես նաշար.
 Ես երկնային շաւիղ դուրով՝ մեղաց ճանապարհ արեցիր:

Սէյեադն եմ՝ հասկացել եմ, որ յատուկ խելքս թեթև ամ,
 Ո՛չ ոք իրան անխելք չ'ասիլ՝ սա էլ ինձանուամ մին ձև ամ.
 Քո համբոյրն կարծում էի ինձ համար անգին պարզև ամ,
 Չիմացայ՝ թէ Ադամայ պէս ինձ խաբումես, իբրև Եւայ.
 Երևի՛, որ իմ յոյսս էլ հաստատ չիմացար՝ արեցիր,



Խ Ր Պ Պ .

Երեսդ քեզ նայողի առջևիցը մի վախցնիլ,
 Ադամանդի գինն առանց դնողի ո՛նց կուբարձրանայ.
 Սէյեադ, այս խօսքով դու սիրուններին մի վախցնիլ,
 Լաւ բանն ծածուկ մնալով՝ մարդոյ աչքին կու քաղցրանայ:

Մ ասն Համանակի .

Մատուակ, գինի տո՛ւր, շրջանն էսպէս չի մնալ միշտ,
 Հողից ստեղծուած է, ինսանն էսպէս չի մնալ միշտ,
 Փոքր ինչ դիմանաս՝ դիւանն էսպէս չի մնալ միշտ,
 Ի հարկէ կուղղուի՝ միզանն էսպէս չի մնալ միշտ,
 Կու առանձնանայ՝ մէյդանն էսպէս չի մնալ միշտ:

Ո՛չ ոք չի կարող ինքն իրան անուանել անբաղդ՝
 Յայտնի գիտելով, որ շատ նուազք եղել են անյաղթ.
 Էշ պտուղն արքայ եղև՝ յայտնի նստաւ՝ տախտ,
 Ամօթ կու կրէ անհամբերն և՛ կու մնայ անբախտ.
 Ուժով չի լինիլ, ամէն բանին կարդած է մին վախտ,
 Մատուակ, գինի տո՛ւր, շրջանն էսպէս չի մնալ միշտ:
 Երկար չի մնալ էս աշխարհքի մէջ չար ու բարին,

Իմաստ է պէտք, որ մէկ լուսեից հասկանայ տարին,
 Խորատ առնելով՝ խեղճ գլուխը չի զարկի քարին,
 Ամէն բարիքն իսկի չարժի քաշած աղարին,
 Կենաց լաւ օրն՝ դառն ու լեղի է, վասն՝ արին,
 Հողից ստեղծուած է՝ ինասնն էօպէս չի մնալ միշտ:

Գիշեր ու ցերեկ մերձ՝ ի մահ առնուամէ ֆէրեադ,
 Ո՛չ ոք չի անում նորա ցաւերին ճար ու իմդադ,
 Թէև դնուամէ հօգևով նա միշտ առ Տէրն գանգատ,
 Յօժար չի լինում, նորա բանն որ լինի ապատ,
 Յայտնի երևի, խղճմտանքի հետ ընկել եև ի՛նստ,
 Փոքր ինչ դիմանաս՝ դիւանն էօպէս չի մնալ միշտ:

Անցաւ ամէնի ճշմարիտն, մին տուտն մնաց,
 Նախնիք լաւութեան իսկը տարին, մեզ տուտն մնաց,
 Բարեկամութեան մարմինն թափվեց, կուտն մնաց,
 Բարեգործութեան մեծերն կորան՝ ճուտն մնաց,
 Վերջն մօտեցաւ՝ տարիներն էլ մուտն մնաց,
 Ի հարկէ կուղղուի՝ միզանն էօպէս չի մնալ միշտ:

Սէյեադ, մի ասիլ՝ դէպ ժամ չկայ, բանս խարաք ա,
 Չէ հարկաւոր դէպ ժամս քեզ՝ գործդ շարաք ա,
 Կս կեանքումս, ինչ ունենաս, է փուչ՝ խաբեբայ,
 Հողին տատանից ազատողն միայն սէվաք ա,
 Կս ժամանակ լաւ մարդ ճարելն մեծ հիօաք ա,
 Կու առանձնանայ՝ մէյդանն էօպէս չի մնալ միշտ:



**Հանգստի «Վճան սիայ՝ բիդատ սիայ» Ալբայերէն
 Էրգոյն:**

Մէկ օր տեսայ՝ սրտիս կէսն կորելայ, չկայ ինձանում,
 Ասի՝ երևի բնութիւնն ինձ յերկուս է բաժանում.
 Մին էլ տեսայ սիրականս կորած մասը ձեռին բռնած,
 Ասացի՝ շատ սիրելուց իրան մօտումս է պահպանում.

Զգացող սիրտն՝ որ տեղ կայ, մին պատիժ է դժոխային,
 Սպանած օձի պոչի պէս մինչև դիշեր չի մեռանում.
 Սէրն դիժ երկու տեսակ է, մինն սուրբ է՝ միւսն կեխտոտ,
 Ո՛վ որ նրանց մէկը ունի, միւսի համը չի հասկանում.
 Սուրբ սէրն սոխակի սէրն ա, որ կեանքը տուելայ վարդին,
 Մինչև նորա անցանելը աղաղակից չէ դինջանում.
 Թիթեռն ճրագի սէրից՝ նորա դլխին պտըտվումէ,
 Թէպէտ էրվումէ նրանով՝ բայց թէ վասն էր, չի իմանում.
 Կեխտոտ սէրը աշխարհքումս, կամիք դիտել, ո՛վ է ընարել,
 Ո՛չինչ շնչաւորում չկայ՝ մի միայն կայ բանականում.
 Ո՛վ որ ասի ես կարող եմ սէրից փախչիլ, մէք հաւատալ,
 Սէրից փախչող՝ մինչև էսօր՝ երբէք չի էլած ինսանում.
 Իմ այս խօսքերիս իմաստը ամենայն մարդ չի հասկանալ,
 Լուսնի շաւիղը նա դիտէ, ով կէս դիշերին է զարթնանում.
 Հարցանող չկայ՝ թէ, Սէյեանդ, դու ինքդ ցաւագար գօլով,
 Սարերից ծանր ցաւերը շալակիդ ս՛նց ես դիմանում:



~~Աստուծոյ անհատականութեան աշխարհի և սիրայ ազգականաց.~~

Անցեալ օրն դու ման էիր գալիս —
 Մարդկանց միջում՝ առողջ և կենդան,
 Այժմ՝ կոչումեն, դու ձայն չես տալիս,
 Կամումես մանեւ մութն գերեզման:

Ազգականքդ քեզ անչափ սիրէին,
 Մանուշակի պէս մէկ մէկու տալով.
 Ընդ քեզ մեռնելոյ ուխտադիր էին,
 Հիմա թաղել են տանում՝ ողբալով:

Ժամհարն շուտ շուտ զքեզ լուանայ,
 Հիւսն զարդարէ փայտեայ դադաղն.
 Մայրդ գնացեալ՝ կոչէ քահանայ,
 Զի մի մնասցես տան մինչ՝ ի վաղն:

Ո՛ւմ դու հայր էիր՝ և նա քեզ որդի,
 Որ չէիր ուզել՝ աչքէդ հեռանայ.
 Այժմ՝ տեսնելով՝ քեզ մին անշարժ դի,
 Ո՛չ կամի վերէդ մէջքէն կեռանայ:

Ո՛ւր է, ո՛ւր կորաւ սէր ազգականաց,
 Որ նախ քեզանից նա անբաժան էր.
 Ողջ փախան՝ ի քէն՝ մօտդ ո՛վ մնաց,
 Տես, որ ամէնն էլ մին դատարկ բան էր:

Այս է բնական վարքն աշխարհի,
 Միշտ խմանումենք՝ միայն չէնք ատում.
 Սերումենք՝ իբրև աննման բարի,
 Մեռանելիս ենք նրանից դանդատում:

Աշխարհքն՝ բաժակ, հրեշտակն՝ մատուռակ,
 Մահն՝ գինի է, մենք՝ խրախ անողն.
 Պիտի խմենք, որ առնումք ճաշակ,
 Ո՛վ է նրանցից զերծ մնացողն:

Սէյեադ, կամուսես քո յօժար կամաւ
 Աշխարհքին քեզ հետ թշնամի անել.
 Տեսա՛ր, որ քեզի նուան պէս քամաւ,
 Այժմ՝ կ'սկսէ էդ հոգիդ հանել:

Մարդոց արարողութեան վերայ:

Փառք Գեղ, երկնյին թի՛ր, լաւ՝ որ մարդին խելք ես տուել,
 Եթէ ո՛չ՝ կուտէին միմեանց, որպէս կուտէ ոչխարին՝ դէլ²:

Անձեզի յայտնի վկայ, որով ճշմարտուի իմ բանն,
 Անչափ լաւ է՝ հարբած մարդից՝ իմ մօտիս վայրի դազանն,
 Ըորի, հացի հոգս չի՛ անիլ, որ խմիչք ունենայ տանն,
 Ոչ դատաստանից կ'վախէ, ո՛չ կ'ճանաչի իշխանն,
 Ո՛չինչ կերպիւ կարելի չէ՛ նրան խմելուց յետ ձգել:

1 և 2. Մեհայն ասոնց վերջումն չըհնէն՝ զայստուիչ ասողս:

Չորքոտանին տասը տարին մին հետ հազել է կատաղում,
Տարենը հազար կատաղած մարդ է լինում ամէն թաղում.
Կնչափ խմուսեն դինին, որ մեռելի պէս են դանդաղում,
Այսպիսի մարդագազանից հինգն կայ ամէն ցեղում,
Որ իրանց արած դործերն երեսին տաս՝ չեն ամուչել:

Մարդն՝ թէ հնարք ունենայ, ամէնին իւր ծառայ կանէ,
Սրան՝ անբանն էլ չի՛ անիլ, ուր մնայ՝ նա բանական է,
Մարդն՝ բնական օրինօք՝ որով՝ պատկեր Տէրուեական է,
Պիտի իմացած՝ ծառայ չէ, իւր անձին համար իշխան է.
Այլ մենք նրան կամենումենք անգթաբար սպանանել:

Բազում անգամ իմ աչօքս ես տեսել եմ պատերազմում,
Երբ որ մին մարդն միւս մարդին իւր սրով վայր է ձգում,
Չի՛ յադելով՝ մօտանումէ և նկատիլ է սկսում,
Թէ տեսնումէ՝ դեռ չի՛ մեռել, փոքր ինչ շունչ կայ նրանում,
Գազանաբար աշխատումէ էն մնացած շունչը կարել:

Մեռելոյ մարմին չուտելն հին օրինաց պատուիրանքն է,
Այս լաւ բանն աստուածախօս մարդարէի աշխատանքն է.
Եթէ ո՛չ, ինչպէս տեսնումեմ՝ էս ջանքն՝ որ մարդոյ ջանքն է,
Եւ էն անգութ գործերի տէր՝ որն որ մեր խղճմտանքն է,
Կանոն կանէինք հեշտութեամբ՝ մէկ մէկու մարմինը ուտել:

Լուծն իմ քաղցր է՝ բեռն իմ թեթեւ, ասաց մեզ Այ բանե,
Թէ որ մեկք իսկ բանական ենք, բաւական է մեզ էսքանն.
Ո՛վ կայ մեր մէջն, որ պահի մաքին ահեղ դատաստանն,
Որ սուրբ գրեանց ասելովս՝ յայանի տեսնումենք նշանն,
Մեր չար գործից երևումէ, որ վերջն շատ է մօտացել:

Յայանի տեսնելով՝ տմարդ ենք, էլի կարծումենք՝ թէ մարդ ենք,
Տգեղութեան մայրն գուլով, ասումենք՝ աշխարհի զարդ ենք.
Չաղբահոտուէ ազբիւր ենք, էնպէս գիտենք՝ հոտով վարդ ենք,
Յայանին այս է, ուրիշ բան չենք, այլ սառանայի թակարթ ենք,
Սէյեադ, քս կենաց միջում մին աստ ես ճշմարիտ խօսել:



Լ. հարազատ և հայրենասէր յօրինողն «Հրաւիրակ
Լրարատեան» գրութիւն:

Պարոն Մկրտիչ Խրըմեան,
Թէպէտ ծնեալ ես դու ի Վան.
Կամի քոյդ մտաց սրութիւն
Ածել յառաջին դրութիւն
Զամայացեալն Հայաստան,
Որ այժմ է մեզ ապաստան:

Զաւակք նորա զնա թողեալ,
Չնչին դործովք են զբաղեալ.
Որք ո՛չ մարթանան վերստին
Ծծել զհամեղ նորա ստին:

Անարժան ծնունդք ծնողաց —
Ծնողաց իւրանցվաստակեն լաց.
Պողովք է փառաւոր ծառն,
Բայց պտուղք սորա են դառն.
Ի թիւս որոց ես եմ, դու,
Ես՝ դառն եմ, իսկ դու՝ թըլթու:

Այս քո երազ, միով բանիւ,
Է սայլի ջախջախեալ անիւ.
Եթէ լծես հազար ձի վարժ,
Սայլն միշտ կու մնայ անշարժ:

Խօսքով փլաւ չի՛լիւ, դու ինձ
Լսի՛ր, պէտք է իւր և բրինձ.
Ինչ աղջիկ Հային կապի յոյս,
Մինչ մահն՝ ՚ի տան կու մնայ կոյս:

Հայն ունի բնութիւն Հրատի,
Ինչքան լաւ բան տեսնի՝ կատի.
Ես Սէյեադն եմ, շատ եմ փորձել,
Ասածս ինքս էլ եմ գործել:



Իմ սիրականիս արթուն ժամին դու 'ի զուր մի ծագիլ, լուսինս,
Նորա լոյսն քան զքոյդ շատ է, նախանձու մի ճաքիլ լուսինս:

Իմ սիրականս ջուխտ ծամ ունի, իսկ քո դուլտդ քաջալ է,
Քո երեսին նշան չունի, նորա նշանն ջուխտ խալ է.

Կա ունի հաստատ բնութիւն, քունն թեթև դնալ՝ դալ է,
Թէ մին կերպ նրան նմանիս, քեզ համար շատ մեծ իկբալ է.
Էսպէս աննմանին պիտիս միշտ երկրպագիլ, լուսինս:


Սիրականիս լոյսն սեպհական է, քո լոյսդ ուրիշից առած,
Նորա ծոցն տաք ամառն է, քունդ ձմերան պէս սառած.
Քո երեսդ ամպով թխպած, նրանն ջահ է նոր վառած,
Դու մին անբարբառ գոյութիւն, իսկ նա սոխակ է անտառաց.
Թէ իմ սիրականիս աչքով տեսնես՝ պիտիս ցամաքիլ, լուսինս:

Սիրականիս ծուռ մտիկ տալն է հոգէառ հրեշտակն,
Հազար սիրահար անկած են միշտ նորա տան դրան տակն.
Կու խաւարիս դու, որ մի ժամ չի տեսնես արուսեակն,
Աշխարհք նրան են փափագում, բայց արևն է քո փափաղն,
Թէ մինչ 'ի մահ մօտին լինիս, էլի չես յագիլ, լուսինս:

Թէ նա երկինքն համարէր իւրեան բնակուելոյ արժան,
Վաղուց նա կնտեղ կու լինէր և քեզի կ'թողէր անբան.
Աշխարհք նորանով կու վարուէր՝ ո՛չ թէ տապով արեգական,
Արեգակից շատ է նորա զօրութիւնն կենդանական.

Անչահ մտքեր գլխիդ մէջ դու մի հաւաքիլ, լուսինս:

Սէյեադն եմ, միաքը բարակ, կու հասկանամ վատն ու լաւը,
Թէպէտ չար մարդիկ խստուք կօտրել են իմ բաղդիս նաւը.
Գիտեմ՝ վաղուց լսած կուլիս իմ սիրականիս համբաւը,
Նորա փառքը վեզովդ առ, եկ ներհակութեան հալաւը
Էս պարզ բանումը անտեղի վերէդ մի հագնիլ, լուսինս:



Ս, ասն անորի հարցաբան հանանց:

Էդ հարտ մանդալուցդ ի՞նչ է նպատակ, աչքի լոյս 1,
Յայանիր ինձ, որ ես էլ քեզ լինիմ հպատակ, աչքի լոյս 2:

Թէ մազիդ երկարութիւնն է անում քեզ էդքան հարտ,
Մաղաւոր անտունքն էլ մի՞թէ հարտանալ են պարտ.

Աբանին նմանվելուց տէաք է որ դու միշտ անեո դարտ,
Ձեզ մազն անխելքութեան վաղուց է ցուցակ, աչքի լոյս:

Ճակասիդ սպիտակութեան պատճառն սպիտակ հողն է,
Թո՛ղ էն մարդն սարծենայ, ո՛վ որ նրան գանողն է.

Թէ մարմնիդ խոն կամիս գիտել՝ անարդ սև հողն է,

Սպիտակ գոյնն փառք իցէ՝ ձիւնն է յոյժ սպիտակ, աչքի լոյս:

Թէ ունքերիդ կամարն է քեզ էդչափ մեծամիտ անում,
Որ ոմանք ասումեն՝ թէ ծիածանի է նմանում,

Չի գիտեմ՝ ծիածանից դու ի՞նչ խորհուրդ ես հասկանում,
Որ սև ամպ է օգուճն՝ արևին ներհակ, աչքի լոյս:

Աչքերիդ խումար ասին, կարծեցիր՝ թէ մի մեծ բան է,
Խումար բառն՝ Թուրքերէն՝ գինեաւ արբածի նշան է.

Արբած բառիւ ցնծումես, երևի՛ խելքդ էդքան է.

Բաս Թուրքերէն չեո գիտում, էնտուր չիս տեղեակ, աչքի լոյս:

Թուշերիդ վարդ կոչեցին՝ էնդուր, որ կարմիր որդան է,
Աւանց որդան երեսիդ կարմիրն գիտե՛ս ո՛րքան է.

Տեսած կա՛ս դու որդանին էն ժամանակ, որ կենդան է,

Մին ոչինչ կենդանի է, ունի վատ տեսակ, աչքի լոյս:

Շրթունքիդ անգին յակինթ անուն դրին՝ ուրախացար,
Բայց միս և մարթուց երբէք յակինթ չի՛ լինիլ՝ չիմացար,

Չարմանումեմ, դու էսքան ծաղր խօսքին ո՞նց դիմացար,

Որ չ'արիր ընդդէմ նրանց աղմուկ՝ աղաղակ, աչքի լոյս:

Ատամքդ նման արին մարգարտի՝ ձգեցին ծով,

1 և 2. Մ. Բենայն ասանց Վերջու-ին կրկնէն՝ պայտասիկ ասող:

Եթէ որ վաճառ հանես, ո՞վ կառնի նրանց կուսկուլ,
Տես՝ սրբան թեթե ես, որ պարծենումես էս փուչ խօսքով,
Մարդութիւնից դուրս դալով՝ փչվումես խտակ, աչքի լոյս:

Լեզուիդ շաքար ասացին՝ դու էլ հաւանար էս բառն,
Որ լեզուի մասանց միջին մինն քաղցր է՝ հինգն դառն.
Հազար օձի թոյն ունի նորա իւրաքանչիւր տառն,
Լեզուից կայ հարիւր վերաւոր՝ մին գոհունակ, աչքի լոյս:

Վրդիդ մինայ ասացին, դօշիդ շողշողուն շիրմայի,
Համարիր, էս բառերն քեզ հասուցին մեծ գահի.
Քանի՞ շիրմայի կը տան, եթէ որ տաս մին սե շահի,
Շիրմային է մին էժան ոսկորի տախտակ, աչքի լոյս:

Ծրծերիդ մինը լուսին շինան՝ մինը լուսնի կտոր,
Էս սուտն քեզի համար եղև առարկայ պատուաւոր,
Գիտե՛լով՝ որ ծրծերդ է մին կաշեայ կաթնի տկճոր,
Ո՛չ ասող է, ո՛չ մուրրակ և ո՛չ լուսնիակ, աչքի լոյս:

Կունատակիդ Եդեմայ դրախդ կոչեցին՝ հազ արար,
Ո՞նց դրախտ է, որ մէջն կեխտն ու մազն է բռնել կարար,
Զարմանք է, որ քեզ էսքան տնազ արին՝ դու տազ արար,
Մազն ո՞նց կարէ լինիլ շուշան՝ մանուշակ, աչքի լոյս:

Քս էդչափ պարզմտութեան մեծ պատճառն Սէյեադն է,
Քեզ գովող՝ դարովոյն նորա երեք հատ մատն է.
Ուրիշներն միջակ են, խնացիր՝ սա շատ վատն է.
Կաշառք տուր, գուցէ՛ առնես լեզուիցը մուրհակ, աչքի լոյս:



Իշխան Չաւուսուդէի ասած «(Վ՝ման սխայ՝ բիդատ
սխայ)» երգի եղանակաւն:

Մե՛թէ, Սէյեադ, չես խրատուել՝ մարդին էլի հաւատումես,
Ի՞նչ բան աւնես դու նորա հետ, որ ծուռ դուրս դալիս դատումես.
Քանիսի՞ն հանել ես ցեխից, փառաց՝ պատուոյ ես հասցրել,
Աշխատանքդ ուրացել են, այժմ՝ նրանց նախատումես.

Քս խօսքդ շատ եմ կարգացել, համարեա՛, ամէն շարքի մէջ
Մարդի պահասներն ես ատում ե նրանից գանգատումես.
Ատումես՝ թէ մարդն ի՛նչ է, որ էհաիբարն ի՛նչ լինի,
Բնութիւնն իմանալով՝ էլի նրան նկատումես.
Կամ թո՛ղ այսուհետև մարդոյ ընդդէմ բան խօսելդ,
Եւ կամ խօսքիդ վերայ կանգնի՛ր, ատի՛ր նրան՝ որ ատումես.
Աշխարհքումը լինող մարդն աշխարհքի համար ջանք կանի,
Եդպէս որ քեզ եմ տեսնում ես, կարծեօք դու անսպասում ես

Խ ո շ .

Ո՛վ պատուական տակառապետ, դինիդ ինձի հարբացրաւ,
Յառաջ աչքիս քաղցր թուաց, յետոյ խկոյն ուշս տարաւ.
Նախաստեղծն էլ մեղաց պտուղ ուտելը ո՛չ ինչ էր կարծում,
Իսկ նա նրան զըկեց փառքից, դրախտի միջից դուրս արաւ.
Մեք տչս աշխարհքի մէջ շաղուած եմք մեղաց գործերով,
Մին էլ կ'տեսնեմք զանկակն մեզի մահուան լուրը բերաւ.
Ինքնահաւան լինելուցը մարդ իրան անպատիւ կանէ.
Չի՛ մնալ պատուով էն բանն, որ կասուի բարձր բարբառաւ.
Մու՛թն դիշեր՝ նաւը կտորած՝ ալէկոծեալ ծովի միջին
Ի՛նչ դիակ իմ ցաւը նա, որ դնումէ չոր ճանապարհաւ.
Սէ՛յեադ, աչքդ բաց արա՛, տե՛ս՝ քանի՛ կոյր մարդիկ են շրջում,
Որ փոխանակ Արևելքին՝ յայտնապէս դնումեն՝ Հարաւ:

Ս ան պահոց.

Այո՛ր պաս է, պարտաւոր եմք ուտել մսի տեղ բանջարն,
Չուն ատումեն՝ բանջարից է բղխում ամենայն հանձարն:
Ինչ մարդ պասն հաստատ պահէ, հաւատացէք, որ կարող է
Պղինձն ոսկի առնել՝ անգամանդ շինել սև քարն:

Գլխաւորքն հողեորաց քանի տարի աշխատելով,
Մեր հողւոյ փրկութեան համար դաին այս ազգու հնարն:
Էս պասը մին էնպէս բան է՝ ո՛վ որ նրան լաւ կատարի,
Յոյժ կարող է Փրկչի բանիւ տեղափոխ անել մեծ սարն:
Այս հնարն մեզի փրկեց ամենեայն կերպ փորձութիւնից,
Քանզի պաս պահող մարդիցը միշտ հեռու կու փախչի չարն:
Գիտեմ՝ ոմանք ասելոց են, որ եթէ մենք բանջար ուտենք,
Մեզ վերայ խնդրագործ կուլի Աստուծոյ մօտին տաւարն:
Յիմար կուլի էն մարդը, որ միայն էս պատճառի համար
Իրան կամաւ կ'ընդունի իւր անդին հողւոյ զարարն:
Ինչ որ ուտէք, խմացէք, որ նա ձեր փորումը չի մնալ,
Պատրաստէք ձեր հողւոյ համար յաւիտենական պաշարն:
Սէյեադն եմ՝ մարդ բանական, անբան տաւարի բողոքիւ
Բաց չեմ թողիլ մինչ 'ի մահս նախնեաց դրած ճանապարհն:

Ստան կէնաց Տարգման:

Ամէն օր էս փուլ աշխարհքի չարչարանքումն եմք, ինչ է սա,
Ամենաթշուառ դառնութեց միշտ արանքումն եմք, ինչ է սա.
Մէկս մէկու վնաս տալոյ հնարքումն եմք, ինչ է սա,
Կեանքներս կարճ՝ ինքներս շատ դժուարանքումն եմք, ինչ է սա:
Չեմ կարծում, որ մարդ կարենայ տեսնել իւր կենաց լազաթն,
Քանզի էնքան չարչարվումէ՝ քթիցն է թափվում մօր կաթն.
Նախնիքն այս ջափից սրծան՝ հիմա մեզ հասաւ նօբաթն,
Ցաւի ձեռից դիշեր՝ ցերեկ դեղորայքումն եմք, ինչ է սա:
Ո՛ւմ երեսին որ նայումես՝ տեսանումես դէմքը ուրախ,
Բայց՝ թշնամոյ աչքից հեռի, նորա արհեստն է ան ու վախ.
Էս բաներին լաւ նայողն կասէ՝ ունայն են և նըհախ,
Ներքուստ ցաւոտ՝ արաքւստ սուտ մեծ ընքումն եմք, ինչ է սա:
Մէկն իշխան, մէկն ազնիւ, մէկն ուամիկ, մէկն բազզաղ,
Մէկի մէջքին երկաթի սուր, մէկի ձեռին երկաթի գաղ.

Ո՛վ որ մեր վիճակին նայի, կ'հոչի մեզի օյուներազ,
Մեք բանական, բայց անբանի կերպարանքումն եմք, ի՞նչ է սա:
Նախահարքն պտուղ կերան, կրեցին իրանց պատիժն,
Դրախտի բարեաց փոխանակ ճաշակեցին կաթան խիժն.
Խեղօքն ի՞նչ մեղաւոր է, եթէ որ մեղք գործէ գիժն,
Նրանց մագեար հանապազ ապաշխարանքումն եմք, ի՞նչ է սա:
Սէյեադ, մօրից կոյր ծնածն ի՞նչ կիմանայ՝ լոյսն ինչ է,
Հոգին մեղօք կորցրածն ի՞նչ գիտէ՝ թէ յոյսն ինչ է.
Շնաբարոյ լրբացածն կասէ՝ մաքուր կոյսն ինչ է,
Եւ մի՛ ասիլ՝ էսպիսի վատ տեսարանքումն եմք, ի՞նչ է սա:



Մին գերեզմանի մօտով անց'ի կենում, սիրտս ուզեց՝
Հարցրի. քո մէջումը ո՞վ է լինում. պատասխանեց.
Եղբայրս օտար աշխարհ էր գնացել՝ քանի ժուկ էր —
Նրանից որպիսուժիւն չէի ստացել՝ օրս սուգ էր.
Ինձ նման եղբօր սէրը մուռացել էր անիրաւն,
Աշխարհքի մեղքերովն կուրացել էր վատհամբաւն.
Լաւ եղբայրն եղբօրն էսպէս կանի, կերպն էս ա,
Թէեւ լինի նորա հետ մերձ ընտանի, միշտ էսպէս ա.
Ես հող եմ, նա էլ հող էր՝ ինչպէս որ ես, շունչ ստացաւ,
Իւր բնական վիճակն, ո՞հ, թէ ի՞նչպէս շուտ մուռացաւ.
Սկսեց ուրանալ իւր հողուժիւնը այս անարգը,
Հրեշտակ էր յիշվում, բացվեց գողուժիւնը, աւին կարգը.
Հիմա՛ որ կորցրեւայ իւր պատիւն, մօտս է եկել.
Սկսել եմ ես նորա գիփ հաշիւն ինքս ջսկել.
Մարմինը դարձուցել եմ նախկին ձեն՝ որպէս որ էր,
Հոգին էլ առաքել եմ առ չար դէն, զոր յոյժ սիրէր.
Այսպէսին երբ որ Աստուած վճռահասէ դժոխք գնալ,
Կ'բամբասէ, ասելով՝ ծուռ կ'դատէ, կ'սկսէ ողբալ.
Սէյեադ, ինչո՞ւ ես մարդոյ վատն խօսում, ինքդ մարդ ես,
Ընկերիդ ինչաս տալուն չե՛ս ափսոսում, դու կախարդ ես:

Ամեն Շամախեցի Հանանց:

Ձեր տեսոյն կարօտ մեռայ, Շամախու ծածկուած նազելիք,
Չեմ դիտում թառամած էք, կամ թէ նոր բացուած, նազելիք,
Ատես՝ ձեր գովասանքը ո՞նց պիտի տսուած, նազելիք,
Չեզ Աստուած պիտի գովել՝ ո՞չ թէ ստեղծուած, նազելիք:

Չէք դիտում՝ ձեր աները քանդելայ անշահ չարսաւն.
Ծածուկ հագած զառ կտորից՝ գովական է խամ կտաւն.
Եթէ որ լաւ միտք անէք՝ ձեզնից ազատ է տան հաւն,
Չուն արձակ լինելն է անգին ստացուած, նազելիք:

Որովհետեւ մտել էք ամէնքդ չարսաւնի տակն,
Ին մասին չի խմացվում ձեր միջն սեն ու սպիտակն.
Կեանքներումդ չէք տեսել ի՞նչ է լուսին՝ արեգակն,
Եւայի պէս կեղուել էք, լուսնից մերկացած՝ նազելիք:

Արդե՛ք, սա ձեր ուզածն է, թէ մարդկանց կիցն էք նայում,
Որ ձեր աչքը կապել են, իրանցը բացել են՝ հայում.
Ինչպէս մարդիկ են, որ ձեր անգին կեանքին չեն խնայում,
Մեռելի պատանումը կարուած՝ փաթաթուած նազելիք:

Ձեր ծածկուած մանգալուցը չ'իմացվում՝ սիրուն էք, թէ դէշ,
Մարդ ձեզի պատահելիս՝ դիմաց ներհակն էք տամ փէշքէշ.
Եսպէս վարք կունենայ ո՞չ բանական, այլ անբան հրէշ,
Պէտք է, որ էս բաների միտքը խմացուած, նազելիք:

Սէյեադն քարոզիչ է, այս խօսքերն ձեր շահն է,
Երեսներդ բաց պահէք, չուն Աստուծոյ մատտահն է.
Որովհետեւ ամէնիս վերջն վիճակը մահն է,
Կենաց ճաշակն պիտի վախտին հասկացուած, նազելիք:



Եւ զապարտեալս Գրեգոր վարժապետն Փեշարճալճեան,
որ է շարադրող Լուսաշաւիղ գրտոյն:

Պարոն Գրեգոր Փեշարճալճե,
Քո միտքը մեզ խրատ տալ չի՝
Ասեմ քեզ՝ աղգասէր մարդն
Իւր աղգի վերայ խնդալ չի:

Մեծէ կոյր է աղգի ակն,
Որ չի տեսնի վառ ճրագն.
Կեկիոյ սուրբ հանգանակն
Ճրագի լուսից մնալ չի:

Ամէն մարդ ունի երկու աչք,
Մէկ լեզու և ջուխտ ականջք.
Հանգանակն հայաղգի մանջք
Անգիր են, իմա՛, սխալ չի:

Հաւատն միշտ՝ ինքն իրան՝
Է մին արժւոյ սուր ճիրան,
Թէ նշան եզ սրտի վերան,
Կ'մնայ, երբէք դնալ չի:

Վեր առ քո լուսաշաւիղն,
Ընդ նմա Դաւթի տաւիղն.
Ճանապարհ բեր մարդափիղն*,
Որ հազար ասես՝ զգալ չի:

Ամենին յայտնի բան է սա,
Ումնում հաւատոյ սէր չ'կայ,
Թէ Քրիստոսն յերկնից վայր գայ,
Կրան էլ նա հաւատալ չի:

* Մարդափիղն՝ է անչն Ռ, որ յոյժ հաւատից գուրտ
է և ինքն իղի նմանաւրիւն ունի՝ «գուրտաւրեանք ճար-
փայ և ճարայ:

Պ. Մ. (Սէյէադ):

Խօսքերիցս մի՛ նեղանալ.
 Ես կտաւ եմ՝ դու թիրմայ շալ.
 Տէս՝ որ առանց իմ փեշտումալ,
 Եփածո քեզնից օսալ չի՛:

Եւտեքէսն ու Արիսն,
 Թէկուզ ինքն տարտարոսն,
 Թէ հաւատ ունի Պետրոսն,
 Ո՛չ մէկն նրան որտալ չի՛:

ԳԵՓ Հայերէն .

Էս իմ խեղճ սրտիս հալը եարս դիտումէ, դիտումեմ.
 Մինչև լոյսը իմ արած զարը դիտումէ, դիտումեմ.
 Կաւքերը իմ էս ջանիս համար նա ուռկան է արել,
 Բայց միայն ես նրա հընարը, դիտումէ, դիտումեմ.
 Հարկաւոր չի ցաւերս տեղբատեղ նրան պատմելն,
 Ես չասած, ինքն նրանց ճարը դիտումէ, դիտումեմ.
 Թշնամին ինձ ատեց՝ թէ էս եարից քեզ եար չի լինիլ,
 Ինքս էլ՝ ինչ որ յիշեալ չարն դիտումէ, դիտումեմ.
 Սէյեադ, կուլի՛ որ եարն քեզ հետ առուլիս չի անի,
 Չէ՛ զարմանք, չունքի ծոցի խարը, դիտումէ, դիտումեմ,

Ի վերայ պէպիտան Տարբէային Բնաւնէան:

Ադամին օրինակ դնեմ, Եւային,
 Որ միտքս հասկանաք դուք լիակատար.
 Ձի նոքա լսելով խրատ դիւային,
 Դրախտէն փափկութեան անկան յայս աշխարհ:
 Նոքա՛ որ դործ ձեռաց էին Աստուծոյ,
 Չիմացան պատիւը անպատում լուսոյ,

~~Կոտրեցին անօթը մեր անգին յուսոյ.~~

~~ի հարկէ մեք պիտի լինիմք էլ վատթար:~~

Աննայն արարածք ունին աստիճան.

Նոյնպէս էլ աստիճան գոյ 'ի մէջ մարդկան.

Ոմն սուրբ, ոմն պիղծ, ոմն չար գազան.

Ոմն առողջ հոգևով և ոմն տկար:

Մարդ գոյ, որ սրբի պէս պէտք է որ պաշել,

Մարդ գոյ, որ խօսելիս կուզէ ամաչել.

Մարդ գոյ, որ կամենումէ շան նման հաջել,

Ձի վատ է խրատած, կամ թէ սեռն է չար:

Մարդ գոյ, որ աշխարհին տիրէ՝ չի՛ յագիլ,

Մարդ գոյ, որ ոչ ոքի խօսքով չի՛ ծակիլ.

Մարդ գոյ, որ չի՛ ուզիլ՝ իրան հռչակիլ,

Ամուռունչ կու շրջի՝ իբր հեղ ոչխար:

Մարդ գոյ, որ ամէնի հետ ունի նախանձ,

Մարդ գոյ, որ հոգին է իրան համար գանձ.

Մարդ գոյ, որ անխելք է, միայն սնապանծ,

Մինչի մահ չի՛ տեսնիլ նա հանգիստ՝ դադար.

Մարդ գոյ, որ աղքատ է, չի՛ սիրում կաշառ,

Մարդ գոյ, որ պատրաստ է ուտել ապաւառ.

Մարդ գոյ, որ թէ ձմրան խնդրես ձիւն, կամ սառ,

Կու կարծի, թէ սրով գլուխն հատար:

Մարդ գոյ, որ ինքն իրան խելօք է կարծում,

Մարդ գոյ, որ գոլորշոյ պէս է համբարձվում.

Մարդ գոյ, որ վատ ճամբից չի՛ ուզիլ դարձում

Եթէ որ խրատես, կասի՝ ծուռ խօսար:

Մարդ գոյ, որ յիմար է՝ բարձրաստիճան,

Մարդ գոյ, որ չ'իմանալ՝ թէ ի՞նչ գոյ իր տան.

Մարդ գոյ, որ չի՛ կարում սաստել մէկ կնկան,

Կոչվումէ ամենաքաջ սպասալար:

Մարդ գոյ, որ տիմար է՝ ինքն վարժապետ,

Մարդ գոյ, որ Յուդայ է՝ կոչմամբ վարդապետ.

Կ

Մարդ գոյ, որ յայտնի գող է՝ մեծ դանձապեւո,

Ան՝ քեզ ընարուծիւն ուղիղ և արդար:

Մարդ գոյ, որ բժիշկ է, բայց ինքն հիւանդ,

Մարդ գոյ, որ ինչ տեղ հաց ուտեն՝ նա է անդ.

Մարդ գոյ, որ էր սնայց նրան մօր արգանդ,

Այնպիսոյն արժան է խեղդուելոյ մէկ լար:

Մարդ գոյ, որ ստուծեամբ փառաց տէր եղև,

Մարդ գոյ, որ անտերև պտղաբեր եղև.

Մարդ գոյ, որ աւազակ էր՝ տէրտէր եղև,

Ո՛նց ասեմ էնպէսին ես գերամեծար:

Մարդ գոյ, որ մինչև մահ չ'խօսի՝ շահ է,

Մարդ գոյ, որ մարդկային բնուծեանը մահ է.

Մարդ գոյ, որ պատառող դայլից ազահ է,

Գիշատել կուզէ քեզ՝ թէ տուրքից խօսար:

Մարդ գոյ, որ ես նրան ի՛նչպէս մարդ ասեմ,

Մարդ գոյ, որ յաւիտեան պիտի բամբասեմ.

Մարդ գոյ, որ նրա հետ խօսելից պաս եմ,

Սուտ մեղայ կու կուչի՝ զեւ Չարմեան Աքար:

Մարդ գոյ, որ երեսօք է արդարադատ,

Մարդ գոյ, որ ՚ի ծածուկ է ամենավատ.

Մարդ գոյ, որ ձեռիցն դիփ կոչումեն դարդ,

Նոքա չէն բանական, այլ են անբան քար:

Մարդ գոյ, որ հայրենեաց ցաւը չիմանալ,

Մարդ գոյ, որ կու պահի ծածուկ՝ չի բանալ,

Մարդ գոյ, որ սրբուծիւն երբէք չի ստանալ,

Այնպիսին մարդ չի, այլ անասուն՝ տաւար:

Մարդ գոյ, որ ընտանեաց մէջ մինն է յոյսը,

Մարդ գոյ, որ կամ քոյրն, կամ կինն է յոյսը.

Մարդ գոյ, որ միայն Միածինն է յոյսը,

Ո՛նց անեմ Վերջինն աւաջնոց յարմար:

Մարդ գոյ, որ գազան էր՝ յետոյ մարդացաւ,

Մարդ գոյ, որ մարդ էր իսկ՝ բայց տմարդացաւ.

Մարդ դոյ, որ իրան մարդ աւնեւ լ մարթացաւ,
Մարդկային վարուցը չիք հաշիւ՝ դաւթար:

Մարդ դոյ, որ սիրուն էր՝ ախտաւորուեցաւ,

Մարդ դոյ, որ իւր դեղով բախտաւորեցաւ.

Մարդ դոյ, որ անառակ էր՝ յաղդաւորեցաւ,

Աշխարհի ո՞ր բանին ունի էհտիբար:

Մարդ դոյ, որ յայանադէս մեծ ստեղծուած է,

Մարդ դոյ, որ մտքերն փարդով ծածկուած է.

Մարդ դոյ, որ մարդ է՝ բայց յատուկ Աստուած է,

Սէյեադի հոգւոյն նա թո՛ղ լինի սատար:

Մ. Մարտիրոս Բարեպետ

Ն Ե Գ .

Հաս քո ձեռքից մարդկան մէջ արտասուելով՝ սիրտս ճաքեց,

Օրէ ցօր կեանքս յայտնի պահասուելով՝ սիրտս ճաքեց,

Չար՝ լեզու ոտխներից բամբասուելով՝ սիրտս ճաքեց՝

Սրտացաւ դուլով, օտարաց գասուելով՝ սիրտս ճաքեց,

Հա՛հ չի տեսայ քեզանից, ինասուելով՝ սիրտս ճաքեց:

Ամէ՛ն սիրունի քո պէս սիրան քա՛ր է, թէ մին դու ես,

Խօսքն ծուռ և անողորմ բէխըրա՛ր է, թէ մին դու ես,

Սերողի հոգին հանող՝ մտքն չա՛ր է, թէ մին դու ես,

Թերթեւունքն օխ՝ սէքերն քեմանդա՛ր է, թէ մին դու ես,

Աբարմուտնքդ երեսիդ պարզ չ՛ասելով՝ սիրտս ճաքեց:

Երբեմն ես քո վրդիդ մինա սուրահի եմ ասում,

Երբեմն զմահահանացուդ անսահահանաց եմ գասում.

Բայց քո ուղածդ նա է, որ ինձի խեխտես ինասում,

Իմ գրծութիւնիս նայի՛ր, քեզանից շահ եմ սպասում,

Քո ինձ արած զըրկանքդ ես ծածկելով՝ սիրտս ճաքեց:

Սիրահարն կանգնած է բարձր բարակ լարի վերայ,

Թէ կտրուի, կ'անկանի՝ կուփչրուի քարի վերայ,

Սիրոյ ճանապարհն խիտ անասելի դարուվեր ա,


Նրանից չի պրծնիլ, թէ վարդապետ, թէ տէրտէր ա,
Այս բանը ամենայն ժամ քարոզելով՝ սիրտս ճաքեց:

Առանց սիրոյ բան չկայ, արդեօք, էս սէրը ի՞նչ զատ է,
Ղմենեքեան դավուժեն՝ սիրուն պատկերն ի՞նչ զատ է,
Սպիտակ ճակատ, ա՛լ թուշեր, սև սև աչքերը ի՞նչ զատ է,
Թրաշ արած յակինթի պէս սուօշները ի՞նչ զատ է,
Որ գիշեր՝ ցերեկ նրանց ես դավելով՝ սիրտս ճաքեց:

Աշխարհքի մէջ, տեսնուժամ, մին անտէր բանական չկայ,
Նորա թուր վրդուժն չի լինող Սուլթան չկայ,
Սիրոյ համար մեռնողին, ասուժեն, դատաւորան չկայ,
Որով էդպէս ա, թէկու՛ղ հոգիս էլ առնեն՝ բան չկայ,
Սէրն ինձ չի մօտանում, շատ կանչելով՝ սիրտս ճաքեց:

Ինչպէս որ առիւծի ձեռք ընկնողն առիւծին է ասում,
Սիրոյ չարչարածն էլ միշտ նորա ձեռքից է գանդատում,
Էնտուր համար են շատուք ձգնում սարում՝ անապատում,
Սա է իմ հասկացածս, չի գիտեմ՝ այլք ո՞նց են դատում,
Մին անաչառ դատաւոր սրտնելով՝ սիրտս ճաքեց:

Նստե՛ն սէր, ննջե՛ն սէր, շրջե՛ն սէր մարդկային,
Ատե՛ն սէր, հայհոյե՛ն սէր, կուռե՛ն սէր է խային,
Պաչե՛ն սէր, մասնե՛ն սէր, խաչե՛ն սէր Յուդային,
Ցնծա՛ն սէր, խնդա՛ն սէր, երգե՛ն սէր երկնային,
Սէյեադն եմ, վերջի սիրոյն կարօտելով՝ սիրտս ճաքեց:



Ի վերայ նամարդ տնջանց:

Հազար նամարդին կուտես՝ 1

Ճախես, մին մարդի հետ ուտես՝ 2:

Նամարդից մարդ չի լինիլ, թէ որ աշխարհքի տէր լինի,
Անապատի ձգնաւոր, վարդապետ կամ տէրտէր լինի,

1 և 2. Ընթացիկ փոստից վերջումն կը հնչէ՛մ՝ զայստասիկ փողո՛ւ :

Բանահանաց մէջ ամէնէն նախահրաւէր լինի,
Տղայ կամ երիտասարդ, կամ հարիւրամեայ ծեր լինի,
Նամարդն շունից վատ է, կուզենայ ծնող հէր լինի:


Նամարդի յօնքի մէջ միշտ պղտորուած եղանակ է,
Խմիչքն աղբիւրի ջուր՝ հացն կորեկ նշանակէ,
Մին տեսակ կեանք ունի, որ տեսնես՝ կասես, աւանակ է,
Նրանից բան ուզելն նորա սրտին սուր դանակ է,
Նամարդ բառն խօսքի մէջ շատ ժամ դե կուշանակէ:

Որով՝ որ սկսել եմ ես այսօր նամարդին գովել,
Պակաս տեղ չեմ թողելոյ, թէկուզ կամենայ խռովել,
Ո՛չ թէ ծածուկ եմ խօսում, կամիք՝ ասեմ իրան քով էլ,
Միմիայն գիտեմ՝ նրան մարդ չեմ ճշնիլ ես հստով էլ,
Եթէ որ բաց ՚ի յինէն դուրս գայ հարիւր Մադաթով էլ:

Նամարդն ում պատահի՝ ամենեւին բարեւ չի տալ,
Կարծելով՝ որ բարեւ տայ, կսկսեն իւր մօտ դնալ՝ դալ.
Չմեռն որ ձիւն ուզես՝ չի տալ, կսկսանի ողբալ,
Երևումէ, որ նրան Տէրն է օտեղծել վատ իկբալ,
Աստուծոյ պատժածի վերայ հարկաւոր չէ խնդալ:

Նամարդի մօտին՝ եթէ գովեցիր մարդի անունն,
Հանց իմացիր՝ մորթել ես, կամ քանդել ես գլխին տունն,
Սև փող դուրս գայ գրպանէն՝ մին տարի չի տանիլ քունն,
Նամարդին իւր ազգովն չեմ փոխիլ ես մարդի շունն,
Կարճն ասեմ, նամարդն է մարդկան միջի անասունն:

Նամարդն երկրի վերայ, է մին անշահ՝ ծանր բեռն,
Որպէս որ ծաղկանց համար անարգանք է է... դ... ,
Ուլաղի պէս բան կանի, եթէ մին կոպէկ տաս ձեռն,
Որքան նամարդ կայ՝ նրանց ամէնի գլուխն է չար նեռն,
Սէյեադ, շատ տխուր կուլիս, որ կարվի նոցա սեռն:



Յանհարժախօս բան՝ ասացեալ յաւաւր գեորի գաճաւ
բանաց Սէճախաւ Իշխանացն արհմն () Եղէլեանց* :

Զարթիր զարթիր, ո՛վ դու վերին շնորհօք ուսեալ Նաւապետ,
Տես զ'ի քէն սոյժաւացեալ Հայաստան՝ եղեալն անհետ.
Ոմանք մարդարէ զխոն քեզ, ոմանք դուռն Նահապետ.
Ի քէն ծնան կայսր, արքայ, իշխան, ազնիւ, վարդապետ.
Արի ընդ իս ելցուք 'ի սուրբ Նորավանից Անապատ 1.
Տես ո՛վ կայ անդ, աչքն արտասուօք արքայն Հայոց սբ Սմբատ² :

Զարթիր զարթիր 'ի ներ՝ նէ, հիմնադիր Հայաստանի,
Տես ազգն քո՝ ազգ աւ ըն՝ սյժմ՝ զիւրդ դասնի:
Որ 'ի նախնուսն 'ի մէջ ազանց էր թանգագին մատանի,
Այժմ՝ իբրև ջախջախեալ նաւ յալիս ծփեալ տատանի:


Զարթիր զարթիր 'ի քնոյ մեղաց, ո՛վ Հայաստան մարդամեա,
Մինչ ցերբ այդպէս անբաղդութեամբ՝ կամիս շրջիլ կիտակեա:
Շնորհեալ է քեզ բնուի աւատ, հող, ջուր, անտառ, ազգ և սեռ.
Հաս յօգնուի թշուառ ազգիդ՝ կենդանութիւն դոյ մինչդեռ :

Զարթիր զարթիր, ո՛վ բարեպաշտ նախահաւատ արքայ մեր,
Քեզ ընծայեաց Աստուածորդին զկենսատուռն իւր սրտակեր:
Ազգ քո կորոյս զգահ, զթագ, այժմ՝ անկեալ կայ անտէր.
Ո՛չ յոյս ունի և ո՛չ գովեալն 'ի վերուստէ անկեղծ սէր:

Զարթիր զարթիր, ո՛վ զաւամնալ Կուսաւորիչ Գրեշորէ,
Զարթիր և անս՝ քո ազատած ազգիդ օրն ինչ օր է:
Զարթիր, քո անխիղճ Հայերիդ 'ի սէր միմեանց յորդորէ՛.
Զի հայր զորդին թողեալ փախեալ, քոյրն զզուեաց յեղբօրէ:

* Օրայսմանէ Լեւոնապարտ արեղեկաւորէն կհրատարակուի
Ղապաղ բարձաշահ Մ. մսարգի Ձեջ՝ 'ի գեորուրէն
Ձեր ամենատեքէլէ համարագեաց: Ո. Յ.


Որդիքն քո յայժմեան դարու միայն լոկ անուամբ են Հայ:
 Թէ մեք նրանց եմք ապաստան, վայ մեզ հազար անգամ վայ
 Մեր սուրբ նախնեաց փառաց մասին նոքա ևս են երկբայ:
 Սէյեադ, նրանց ի՛նչ փոյթ է այդ, միմիայն լինի զաֆայ՝ չայ:



Հող, որ Տաճկերէն Մուստազատ հուշէ:

- Ի՛նչ կուլի հեռանաս ինձանից, անպիտան թամաս
 և ատելի մատթաս.
- Ինձի քո արած չարութիւնն չի՛ անիւ բաղխաս
 զի կայ սրտի մէջն աս.
- Որ տեղ գեղեցիկ պատկեր տեսեր դու՝ ընկար յետներն
 կեանքդ էլ ձգար դէն.
- Սոված գազանի պէս վազեցիր յետնիցն անչաս
 մինչև էհաս քոյդ մաս.
- Սերտդ ուղումէ՛ ամէն կերակրոյ լաւը ուտես
 ի՛նչ փոյթ, անօգուտ ես.
- Մէրն առատ է, նա չի՛ սիրիւ քեզ նման ագաս
 հազար հեռ քաշես աս.
- Ում հեռ լինիս՝ նորա օրն վատ անց կուկենայ
 սա յայտնի բան աս.
- Ազահութիւնն, թէ որ նստի Վայսերական դաս
 էլի կու պըտուի շաս.
- Մ ի՛թէ, դարչելի, ինձ համար լաւ բան չունես պահած
 ասա՛ ինձ, անիծած.
- Եթէ դու ես իմ վիճակն, թո՛ղ՝ կաց անեմ զա՛ն զա՛ն
 կոչեմ քեզի ֆա՛ն ֆա՛ն.
- Երբեմն քո պէս չարութիւնից լաւ բան կու ծնէ
 փորձած է՛ ի բնէ.
- Յովսէփին՝ եթէ իւր եղբարքն չէին ձգել չաս
 նա ո՞նց կուլէր փաղիշաս.
- Մեծ պարգև ես, որ ընկել ես Սէյեադի, դու, ճանկը
 էրվի քո վատ հանգը.

Արդեօք, ի՞նչ օր էր, որ դու ինձի պատահար նազահ
բարբառեցի վահ վահ:



Եւ մե՛նաչառն Եւ պարտաճ՛
ըստ էղանաչի Եւ յգանայ ահա էրգոյն Յարտ-ըն-ն
Վարդապետի Եւ լամբարեանց:

Դու էից պատճառ, գիտութիւն անճառ,
Զքեզ գովելոյ ո՛չ գիր կայ, ո՛չ տառ:

Դու միայն Աստուած, իսկ մեք ստեղծուած,
Քո է ստացուած կոչումն անաչառ:


Դու ամէնիմաց, յոյս մահկանացուաց,
Անմահական հաց, կենդանութեան ծառ:

Դու բովանդակ սէր, կոչիս մարդասէր,
'Մեզ 'ի քո պատկեր ստեղծեր պայծառ:

Դու լոյս անմատոյց, մարգարէն ուսոյց,
'Մահուանէ կեցոյց, քո է պատիւ՝ փառ:

Դու արդարադատ, երեք դէմ՝ մի հատ,
Կոչեա՛ զիս, Սէյեադ, արի՛, մահիճդ առ:

18⁷/₁58. 'ի Ա. յոյց Չորն շոյց:



Այս ան Եւ դամայ եւ շոյց աղբի՛
ըստ էղանաչի Փաշ միգույեամ՝ զաղաւլին շոփելի:

Մեք 'ի շարս հրեշտակաց՝ դրախտն էր մեր վիճակն,
Ադամ իւր մեղօք զմեզ ձգեաց իւր բեռան տակն:

Երևի, Նախահայր մեր ընտրողութեան շնորհք չսւնէր,
Զի ճօկելով սև քարն՝ կորոյս աղամանդ ակն:

Զայն պատիւն, որոյ կորըստեան աշխարհ ափսոսաց,
Նա ընկեաց զնա, ընտրեաց իւր գերութեան մուրհակն:

Կենդանի պատկեր նորա է միմիայն խեղճ ազգն մեր,
Որ սնուտի գործերով վատնեաց իւր գահն ու թագն:
Համբերութեամբ, տես, քանի՞ անհոտ ծաղիկ հոտ ոտացաւ,
Ահատատութեամբ անհոտ եղև մեր մանուշակն:

Այլոց ագուաւն երկար կըթուլթեամբ քաղցրաձայն եղև,
Ահողութեամբ կորոյս մեր ստխակն իւր նուազն:

Յաշխարհէն ճենաց էհաս արքայն Սմբատ մեզ յօգնութիւն,
Իսկ մեք հեղգութեամբ ատեցինք նորա նպատակն:

Այսչափ անհաշտ և սնապաշտ, որ Հայոց ազգն է, Սէյեադ,
Լաւ է, մեզնից չի՛ գաղու՛մ իւր լոյսը արեգակն:

18 $\frac{6}{2}$ 58:

Ի գեճաց իւրադանչիւր Հայկազնայ:

Ես ինքս Հայկազն գուրով՝ գլուխ եմ ազնիւ բնութեան,
Ընտրեալ իշխանագն գուրով՝ ո՞նց ժուժեմ անարգ դրութեան:

Հայրենիքս Մեծ Հայաստան՝ է անուշահոտ բուրաստան,

Մնացի այլոց ասրաստան յաղագս սիրոյ թերութեան:

Արեգակն խեթիւ հայեց, բազդն աւ իս խստիւ նայեց,

Օրհանն ինձ չի՛ խնայեց. չեթող հասանեմ լրութեան:

Ամենեցուն յայտնի բան ա, ո՛ւմ վերայ Աստուած բարկանայ,

Ծառայի վիճակ կ'ստանայ, որ է խղիչ համբերութեան:

Պատճառն մեր վատ բազդն է, կամ ատելութեան ախտն է,

Աղաչաւելոյ վախտն է, զի չունիմք ձիրք բնկերութեան:

Ասեմ ձեզ խօսքի ուղղորդն, երբէք չի՛ մտասուիլ սրթն,

Մինչ իրանից չ'լինի սրդն, որ է ծնունդն դերութեան:

Սէյեազն որ այսքան խօսաց, ո՞ր Հայն ասածին անսաց,

Մեր յոյսն է ազգն Ռուսաց և՛ սուրբ Գլուխն տէրութեան:

18 $\frac{6}{3}$ 58.

Ի դէմաց Հայաստանի :

Գահըս փղոսկրեայ էր, ադամանդիւ զարդարած,
 Թագըս կ'արժէր աշխարհին, խոշոր մարդարտիւ կարած,
 Գայիսոնըս Եբենոս, խոր Ափրիկայից բերած,
 Սուրըս ընտիր պողպատից, թիւսիմի ջրով ջրած,
 Պալատներըս մարմարեայ, ոսկէզօծ՝ լայնատարած,
 Դատաստանաներըս՝ իբրև ժամացոյց լարած,
 Հարկըս՝ ռամկոց միջին անաչառ հաւասարած,
 Գանձատանըս սարտիքը ժամանակին վըճարած,
 Բանակներիս կարգերը իմաստուլթեամբ յարմարած,
 Թշնամեացըս ամէն տեղ քաջուլթեամբ յաղթահարած,
 Յանկարծ տեսի աղիքս թունաւորած՝ դաւարած,
 Բժիշկ չի մնաց՝ հարցրի, չիմացան ցաւիս դեղն,
 Ասացին. անծանօթ է մեզ դորա սեռն ու ցեղն:

Մինչ երկտասարդ էի, ես էի փառքն աշխարհի,
 Շատ տէրուլթիւնք հարկ տուին իմ զօրաց բազում տարի,
 Ոմանց գահ և թագ ետուլ յատկուլթեամբ բարերարի,
 Աշխարհիս մէջ երկու էր, կամ երեք, իմ համարի,
 Խաչապաշտ դրացեացըս՝ նման անմիտ յիմարի
 Հաւատալով՝ յուսացայ, գլուխըս կպաւ քարի,
 Իւրաքանչիւրըն կամեց ինձ որոգայթ հնարի,
 Խաբելով՝ իշխաններիս ձգեցին իւրեանց շարի.
 Ո՛վ է կարող նախառես լինիլ պատրանաց շարի,
 Որդեքըս զիս ուբացան, յոյս կապեցին օտարի,
 Վերջն ցիրուցան եղեն՝ զետ անհավիւ պաճարի,
 Անհաւատարմուլթիւնն է արատուլթեանց տըգեղն,
 Կովաւ յոյժ շուա կ'խաբուին միամիտն ու անմեղն:

Այլազգիք՝ տեսանելով մեր անհամաձայնուլթիւնն,
 Քրիստոնէից ունեցած սիրոյ ունայնուլթիւնն,
 Մոլեգնաբար խզեցին ազգիս փրկուլթեան սիւնն,
 Հիմնայատակ արարին վանքերիս շինուլթիւնն,

Քաղաքներըս մուսացան նախնական խնդուածիւնն,
Իմ յոյսըս միայն մնաց Սիւնեաց ամուր անկիւնն,
Կրան էլ խախտեց՝ ցրեց Վասակայ շքնուածիւնն,
Ամենեին ջնջեցին ազգիս արտօնուածիւնն,
Բարւոյ նշան չի՛ պահել անհաստատ բնուածիւնն,
Փառքն կորած մարդոյ ի՛նչ շահ է երկմտուածիւնն,
Միմիայն դեղն է նորա ուսմունքն ու գիտուածիւնն,
Անարդուածիւնն է յասուկ թշուառ վիճակի նեղն,
Իժբաղդուածեամբ կ'հալուի զգացող սրտի եղն:

Երբ որ ձեռնցըս գնաց դա՛, գոյխոնն և թագըս,


Աղօտացաւ լուսինըս, խաւարեց արեգակըս,
Գանձատունըս դատարկուեց, թեթևացաւ քսակըս,
Սև փոզով առնող չեղև արքայաշուք մուրհակըս,
Քաղցելով՝ հացի տուի աղանակուս կսճակըս,
Ատենադպիրներըս դողացան հաշիւ՝ ցուցակըս,
Խոտեալ առարկայ եղև քաղցրանուագ սոխակըս,
Թշուառուածեան չափն էանց կորստական վիճակըս,
Արբան խոտոյ նմանեցաւ կենսատու մանուշակըս,
Արքայուհիս սիրածին բաշխեց քառամանեակըս,
Ընտանիքս լրբացան, աչքերս անկաւ գըգակըս,
'Կորստական տուփանաց կ'փախնու միշտ ուշեղն,
Շատ տէրուածիւնք կործանեց անզգամ կանանց գեղն:

Ո՛վ որ ետես զիս տկար, ինձ վերայ փորձեց սուրըն,

Հարատակքս ցրուեցան, խափանուեց առուտուրըն,
Պտուղք դրախտին դառնացան, անհամեց քաղցր ջուրըն,
Ի միջի ազգիս մեքենայ չարեաց դարձաւ համբոյրըն,
Մինչ ցայսօր էլ չի՛ շինել ատելութեան վառ հուրըն,
Ազգըս իրան աւերեց, և ո՛չ թէ Լանդ թէյմուրըն,
Հազար ցնծուածիւն տեսնի՛ էլ չի՛ գնալ արխուրըն,
Ինքն իրան սևացրուց՝ ո՛չ թէ օտարաց մուրըն,
Ինչ պատահի՛ արժան է, ես ի՛նչպէս ատեմ զուրըն,
Մեռ՛ լի տէրն ո՛նց կուտէ իւր մեռ՛ լի կերակուրըն,

Ճառայական կերպասից լաւ է ազատ նաշուրըն,
Սէյեադ, իմա՛, անզօրին միշտ կ'յաղթէ ուժեղն,
Նեան երբ ինաս կ'տայ՝ մինչ չի՛ լինի աղեղն:

Handwritten signature and date:
18 ⁶/₄ 58:



Օ Ի գեճաց է-ըստան շէ-ը Զայհաշնաց:

Մեր ամսն այնքան թանձր է, որ ամէն հողմ՝ վանել չէ՛ կարող:
Մեր ցաւը ամենայն բժիշկ լաւ պարզաբանել չէ՛ կարող.
Ո՛չինչ վիճակ վատթարութեամբ մերին հասանել չէ՛ կարող.
Մեր հացի մէջ աղ չըկայ, ո՛վ ուտէ՝ մեղ ինաս կըտայ,
Այն պատճառի համար զմեզ ո՛չ ոք այտանել չէ՛ կարող:

Ո՛վ որ պատմութեան ծանօթ է՝ նա դիտէ մեր քաշած ցաւըն,
Պատմադիրք մեզ խնայելով՝ պատմել են նորա սակաւըն,
Ո՛չ ոք չուզեց ալեաց ձեռքից օգնել՝ ազատել մեր նաւըն,
Ո՛չինչ սրտում հայոց օգուտ՝ ո՛չ ողորմութիւն կայ, ո՛չ գուժ,
Անբաղդութեան բեռը ո՛չ ոք մեզ նման տանել չէ՛ կարող:

Քրիստոնեայք աւերեցին մեզ՝ ո՛չ թէ անօրէններն,
Անօրէնն չէր հասկանում մեր Քրիստոսի սուրբ պատուէրն,
Որ ասումէ՝ ձեր անձանց պէս պիտի սիրէք՝ զձեր ընկերն.
Ո՛վ որ ինաս է խեղճ Հային՝ նա իսկ պատկեր է Յուդային,
Նորա հողին դժսխքիցն երբէք ելանել չէ՛ կարող:

Հայ չի՛ տեսայ, որ սրտի մէջ սառուցեալ արիւն չունենայ,
Յայտնի բան է՝ արիւն կուլի այն սիրան, որ սիւն չունենայ,
Թշուառութեան մէջ կու մնայ՝ ինչ մարդ գիտուի չունենայ,
Հանգամանքից նկատումեմ՝ հառաչելով վհատումեմ,
Ո՛չինչ առիթ այս վիճակից մեզ շուտ բաժանել չէ՛ կարող:

Մեր ազգի ցաւն եմ արտասովում աւանց այլոց վասն ասելոյ,
Մեր խեղքից եմ դանդատ անում, որ արժան է բամբասելոյ,

Handwritten signature at the bottom of the page.

Կեանքիս շատն անց է կացել, էլ յոյս չունիմ սպասելոյ —
Համայն Հայոց երջանկուժեան, որ հիմն է սրտիս ցանկութեան,
Սէյեադին ճշմարտի համար ոչ ոք սպանել չէ կարող:

18⁶/₅ 58:

II. Իճուհ Իճուստութի:

Վայ քո օրիդ, խնաստումն մարդ, ես երբ քեզ ուրախ տեսայ,
Յամենայն ժամ դէմքդ տխուր և յօնքերըդ կախ տեսայ,
Ո՛ւմ հարցրի, դիմ քեզանից չարաչար բամբասեցին,
Դու մարդ գուլով, նաքա զքեզ դժոխայնաց դասեցին:

Ի էկն ասաց. »Սա չէ կարող ընկերանալ մարդոյ հետ,
Ո՛վ որ խօսի՝ չի՛ հաւանիլ, կասէ. յիմար է՛ տգէտ.
Ումանում որ պատահելով տեսանէ մէկ սուր բան,
Աւանց իրաւանց կ'կամի առնել նրան դատաստան.
Ո՛վ որ սորա հետ պատահամբ հեռի ճանապարհ գնայ,
Պիտի, մինչ ցտուն դառնալն, համբանայ՝ անխօս մնայ.
Թէ սխալմամբ բերան բանայ մարդ՝ նորա հեան խօսայ,
Հանց բան կասէ, որ խօսողն իւր ասածին կ'ափսոսայ.
Մարդ չկայ, որ կարողանայ լինիլ նրան արժանի,
Ո՛վ է կարող այսպիսի կոշտ մարդոյն լինիլ ընտանի »:

Երկրորդն ասաց. »Սորա նման չե՛մ տեսած ինքնահաւան,
Արարմունքից երևումէ՛ անհաւատ է, անդաւան,
Աւանց երես լուանալոյ սղօթք կանէ, հաց կուտէ,
Խոստացածը չի՛ կատարիլ, ինչ որ ասէ՛ դիմ սուտ է.
Ինքն հացի կարօտ գուլով՝ հարուստին անբան կասէ,
Ո՛րքան գիտուն մարդ տեսանէ, կասէ. խելքն պակաս է.
Ո՛վ որ սրան չի՛ ճանաչի՝ իւր տունն պատիւ տանէ,
Կա փոխանակ այն լաւութեան նրան անպատիւ կանէ.
Միշտ կու կամի իւր ասածը այլք անպատճառ կատարեն,

Ս՛իլ որ ասածը չի՛ արաւ, կասէ. դի՛փ անկատար են ու:

Երրորդն ասաց. » Սա՛ յան նստած՛ չի՛ հաւանիլ իշխանաց,

Միայն կասէ, զի իշխան է, ինչ անէ՛ պիտի տարած.

Կասէ. այս ինչ օրէնքն՛ որ դրված է, անյարմար է,

Կամ՝ թէ այն ինչ մեծ տէրութիւն լուսաւոր չէ, խաւար է.

Ընթեռնելով հին իմաստնոց շարագրած դրքերը,

Կասէ. տոքա անպիտան են, ընտիր է նորա տէրը.

Որքան հաստատ բան մտածես՛ իւր ասածը կ՛ընդունէ,

Ս՛ւմ ասութիւնը որ դուլես՛ կասէ, նա ի՛նչ գիտուն է.

Միով բանիւ ես այս մարդից չե՛մ կարու՛մ բան հասկանալ,

Ա՛յնքան ձախ է, որ չի՛ լինում առաջին բերան բանալ ա:

Կրկին վայ քեզ, իմաստուն մարդ, ս՛չ որ քեզ չի՛ հաւանում,

Քո թանդադին յատկութիւնքդ յեմարք չեն զանազանում.

Իմաստուն մարդն իսկապէս մէկ անչէ՛ճ վառած հուր է,

Նրան նա կու կառավարէ՛ ս՛իլ որ նրանից սուր է.

Իմաստունն եթէ անկաւ յիշխանութեամբ յեմարի,

Այն յեմարն պիտի նորա ձեռքիցն միշտ չարչարի.

Իմաստունին՝ եթէ եղև կառավարիչ գիտուն մարդ,

Նա աշխարհի լոյս կու լինի, ազգի համար յայանի զարդ.

Դու ե՛րբ պիտես, որսնելով, քեզ համար ընկեր ձարել,

Այսքան տառապանաց մէջ կեանքդ չես կարող երկարել.

Այս է պատճառ, որ յարաժամ տեսնու՛մք քեզ՝ տրամած ես,

Յիմարներին բաղդն սիրեց, իսկ դու աչքից ես ընկած.

Թո՛ւղ Սէյեադն էլ քեզ պէս լինէր լուսաւորեալ՝ իմաստուն,

Չէր հարկաւոր լինիլ նրան ս՛չ հաց, ս՛չ ջուր և ս՛չ տուն:

18⁶/₁ 58. 'Է Ա, այսպէս Չորն հայաց:



Ի Տակ Հայկազուն Իշխանաց:

Այս ինչ տարի է, որոյ գարունըն —
Երբէք չէ նման բարեբեր գարնան.

Տեսէք, թէ ո՞ր մէկ Հայ մեծատունըն —

Չէառ 'ի նմանէ կսկիծ անվախճան:

Կախ՝ անկաւ մեծ սիւն * պալատան Լազարեանց,

Որ էր հիմնաւոր վէմ Հայոց ազգին.

Ուրախութիւն մեր նովաւ իսկ էանց,

Ինչ կու դիմանայ օրհասի բազկին:

Երկրորդ՝ լուսափայլ ճրագ իշխանաց —

Բարսեղ Յովսէփեան յազգէ Բէհբուղեանց.

Արդեօք՝ զմեզ որք թողեալ, ո՞ւր գնաց —

Կա, որ փրկեաց մեզ 'ի որոյ Օսմանեանց:

Երրորդ՝ աննման ակն թանգագին —

Գրիգոր Մովսէսեան՝ Կերսէսեան տանէ.

Տուն ասեմ, իսկ դու իմն՝ դանձ անգին,

Բարեպաշտութեամբ անմահական է:

Եղբայր հօր նորա Պետրոս, որ է վէմ,

Կառոյց Համախառն մեծ տաճարըն.

Հայր նորա Մովսէս՝ իբրև երկրորդ Սեմ,

Իւր ձեռօք դնէր տաճարի քարըն:

Ո՛վ դու դառնաշունչ մահ աշխարհաւեր,

Արդեօք մարդ գո՞յ, որ խոցած չի լինիս դու.

Ո՛չ հաւատ ունիս, ո՞չ յոյս և ո՞չ սէր,

Միշտ չարախնդաց՝ բնութեամբ ես իսկ Բու,

* Այսինքն՝ Ալեհայն Յովհաննէս Յովսէփեան Լուսաւորեանց, որ հանգեալ է Տէր 'ի 6 Փետրուարի յամի 1858. որոյ յիշատակն օրհնութեամբ եղեցի:

Ասա՛ մէկ տեսնեմ, անբաղդ դերդաստան,
Հայրապետին ո՛նց դրիւր դագաղում.

Մահ Աղեքսանդրին մինչ ցայսօր կուլան,
Իսկ մահ Գրիգորին շատ սիրտ է դաղում:

Գրիգորի նման նոր բացուած վարդին —
Ո՞նց չի՛ բաշխեցիր իւր խեղճ ծնօղաց.

Թուփ լինի դիմաց քեզ պէս կախարդին —
Եւ իւրաքանչիւր քեզ հետևողաց:

Սէյեադն եմ, յանկարծ եղէ սգաւոր —
Կիսամեռ եղեալ Գրիգորիս մահուամբ.

Հայր նորա է իմ ազնիւ կնքաւոր,

Սիրտն դառնացեալ այս վատ պատահամբ:

6
18⁶/₇ 58:

Ա. — Հայաստան:

Եղ՞նէկ Հայաստան, ասա՛ մէկ տեսնեմ ի՛նչ է պատճառըն,

Որ քո օրերիդ մէկն թէ քաղցր է, հազարն է դառըն.

Մի՛թէ Արարչի բարի գործքերի շարքիցն չես դու,

Որ նոքա յաջող վիճակի մէջ են, քո օրըդ է կծու.

Ասա՛, ո՞ր արդիդ անվտանգ է հաս վախճանի կենաց,

Կամ թէ ո՞ր փառքդ երկար միջոցաւ անուստան մնաց.

Փլեալ վանքերըդ իրանց տեսնողին մահ են հրաւիրում,

Մեծ քաղաքներիդ նայող աչացն խաւարն է տիրում.

Ուր են քո մեծստիառ արքաներըդ, կորեան աննշան,

Ատերու՛նչ գառանց նման իշխանքդ՝ ի սպանդ մտան.

Ընտանիքդ քո ցիրուցան եղեն՝ անպլուխ մնացեալ,

Լերինք և բլուրք հալեալ մաշեցան՝ արտասուօք թացեալ.

Հազիւ մարթացար երկնիլ՝ ծնանիլ մէկ քանի իշխան,

Որովք սուրբ սիրտ քո ցնծութեամբ սլանայր, եղ՞նէկ Հայաստան.


Մէկն էր Արղուէց, մէկն Քէհրուգեանց, իսկ մէկն Լազարեանց,
Նոքա էլ գնացին, վերջն նշայլոգ նրանցով էանց:

Միթէ, Տէր Աստուած, Հայք միայն արժան են վատ վիճակին,
Կամ միթէ նոքա ընդդէմ քս կամաց քեզ երկրպագին:

Խնայիր Դու նրանց, քաղցր հայելով՝ արա՛ բարեբաղդ,
Թէ քաղցր նայես, նրանց չեն վնասիլ ո՛չ ոստիս՝ ո՛չ ակտ:

Լսիր մէկ անգամ Դու խեղճ Սէյեադի տաքտաք խնդիրը,
Որ Հայք էլ մէկ օր կարենան ասել՝ լըցուելայ գերը:

18 $\frac{6}{8}$ 58. 'Է Այսոց Չորն Հայոց:



Խորհարարութեան Երարարութեան:

Ողբամ զքեզ, խաւարամած Արարատեան խորխորատ,
Մի՛ բարկանար, Թո՛ղ քս ձեռնից փոքր քեզ անեմ՝ գանգատ,
Եթէ տեսար խօսքըս գուր է, դու բանն տեղ մի դնիր,
Իսկ թէ տեսար հիմնաւոր է, անուանեա՛ դիս հարազատ:

Ան տանուհինգ դարք անցին, որ դու զմեզ կլանես,
Ես չի՛ դիտեմ, թէ դու մեր խեղճ Հայ ազգին ի՛նչ շահ բան ես:
Մինչև ցայսօր նոքա քեզնից մէկ երախտիք չի՛ տեսան,
Որքան տուին, դու անտեղի դաղեցիր՝ իբրև ժլատ:

Փառք Արարչին, փորիդ մէջ շատ ունիս ուտող՝ խըմսդ,
Միայն նրանց մէջ չ'կայ ճշմարտութեան հետևող,
Աշխարհ համայն քնից զարթեալ, դու դեռ ևս նիրհած ես,
Անտանելի ծուլութիւնն էլ չի՛ լինիլ քեզ համեմատ:

Ո՛չ վարդապետ ես, որ ասեմ քեզ քարոզո՛ղ Սուրբ բանին,
Ո՛չ հեղինակ ես, սպասեմ քս հիւսած ճարտասանին:
Ուտել, ըմպել, յետոյ նընջելն ես ընտրել քեզ համար,
Հայոց ազգի վերջին ես դու սպասում, դիտեմ՝ հաստատ:

Թէ քս մէջ մըտածները՝ ի շահ ազգին դնիւր գործ,
Հաստատ իմա՛, որ դահ ազգին մինչ ցարդ կու լինէր անխորճ:

Դու լայնացար ազգի ընչեւք, գահն մնաց անսասար,
Թագն անկաւ ոսոխի ձեռք, Հայք անկան 'ի վիճակ վառ:

Մինչի ցայսօր Հայք չի' տեսին մէկ նոր դիւտ 'ի քէն ծնեալ,
Կրանց համար ժամավաճառ մշակ եղեր' Թանգ գնեալ:

Կամիս միայն փորըդ լնուլ' սր իրաւամբ' չ' դիտեմ',
Կողողաւել ես Հայաստանին' դեռ չես լցուել, ես կիսատ:

Արարմունքդ մինչի ցայսօր ս'չ մէկ Հայ չէր նըկատել,
Ձի քո բաղդդ նրանց միտքը աղջամղջով էր պատել:

Երկար անյայտ կուսնայր քո, խորխորատ, ինչ լինելըդ,
Թէ չէր տեսել քեզ իւր աչօք Երգիչն ազգի Սէյեադ:

18¹/₈ 58. 'Է ՍՍ, այսոյ չորն Հայոց :



Ե Ր Գ:

Վրացւոց շէնի ճէրիմէն յերկնից հրեշտակ վայր կու բերէ 1,
Մարդ նրան ս'նց դիմանայ, որ անհուն ցանկուլթեան տէր է²:

Հասակներն բանատեղծի մտաց նման բարակ' երկար,
Սև ծամերն' Թանձր հիւսած' գեղեցիկ հասակին յարմար,
Ճակատն տաշտ Եղիսական, ունքերն երկնային կամար,
Թերթուունքն սրած դաշոյն, աչքերն արբած սիրահար,
Թուռչերն կարմիր մախմարից տասնապատիկ գեր 'ի վեր է:

Որին խօսացնես' կասես, քաղցրախօս տատրակն սա է.
Էնքան աշխոյժ բնուի ունին, հարիւրամեայն' երեխայ է.
Յովսէփ գեղեցիկն սրանց վերջի գեղեցիկն Թայ է.

Գեղեցկուլթիւնն Վրացւոց երկնային տուած ընծայ է.
Նոցա մարմնոյ շարժմունքներին ո'վ նայի' կասէ, դիփ սէր է:
Մինչևի տասնուհինգ տարին չես ջոկիլ աղջիկ է' տղայ.

1 և 2. Մեծայն քանոց վերջուին կրկնէմ պայտտիկ փողս :

Որի երեւին որ նայես՝ ազամանդի պէս կ'ըողըողայ.
Ո՛վ կ'հաւատայ իմաստնոց, թէ որանց մարմինն հող ա.
Ո՞րքան անզգայ սիրտ պիտի, որ սոցա տեսնի՝ չի դողայ.
Որին լուռ ժամանակը տեսնես՝ կասես. սա քաջած սրտակեր է:


Խօսքը բերնեց ելանելիս՝ շարժումեն ամէն անդամքը,
Նոյնժամայն յափշտակումեն լսողների խելքն ու կամքը,
Հեշտասիրաց պարանոցին՝ ձիոյ պէս՝ դնումեն թամքը,
Մինչ 'ի վերջն անասնոց պէս չարչարումեն անխնամքը,
Չեն հարցանում՝ չաչարվողն Վ..... է, թէ Տ..... է:

Ամէն վահան սոցա սիրոյ նետին դիմանալ չի կարող.
Նորա ծածուկ թափանցումը մարդ շուտ իմանալ չի կարող.
Ո՛վ ոք սիրոյ վերք ունենայ՝ նա այլոց բանալ չի կարող.
Սերոյ վերաց դեղն սէրն է, այլ կերպ սաղանալ չի կարող.
Սերոյ վերօք մեռանելն ամենայն կերպ մահից խէյր է:

Լեզուներից ծնած բառն քաղցր է մեղրից և շաքարից.
Բերանների մաքուր շունչն լաւ է կենսատու Նեկտարից.
Թէ կամենան, ճգնաւորին կու հանեն յիւր ճանապարհից.
Այս դարու գեղեցկութիւնն գերազայն է ամէն դարից.
Գեղեցկութիւն չի լինիլ ասել, սա յայտնի աշխարհաւեր է:

Հայն ունի հարստութիւն, իսկ Վրացին անզուսպութիւն.
Հայն ունի հանգստութիւն, իսկ Վրացին զգատտութիւն.
Հայն ունի իմաստութիւն, իսկ Վրացին նպատտութիւն.
Հայն ունի կոշտ խստութիւն, իսկ Վրացին նուատտութիւն.
Տեսէք, որանց միջն ո՞րն գովելի բնութեան տէր է:

Սէյեադ, գոված սիրուեններդ՝ հրապարակի սիրուեններ են.
Տան անկիւնում նստածներն գիտե՞ս որչափ դեր 'ի վեր են.
Նրանց դու ո՞ր տեղ կ'տեսնես, գերաստիճան փառաց տէր են.
Սրանց դէմքին հայիլ չէ՛ մարթ, այնա արած սուր սուսեր են.
Սոցա գեղեցկութեան մօտին տեսածդ խաւար գիշեր է:



Ա. Ժբաջան Մէշուհն Հայաստանի:

Բարի եկեր, քաղցրիկ Մեղու,
Քեզ էր սպասում Հայաստան.
Յոյժ երկար թողեր նրան դու
Օտար մեղուաց սպաստան:

Գալըդ բարի և շնորհաւոր,
Մօտըս արի՛, որըդ պաշեմ.
Յուսամ լինիս աշխատաւոր,
Որ այլոց մօտին չամաշեմ:

Փառք Աստուծոյ, որ Հայաստան՝
Ուսուցեալն դեռովք դրախտին,
Է մին ծաղկալից բուրաստան
Եւ մեծ բանալի քո բաղդին:

Շնորհիւ Ռուսաց քո Հայերըդ
Խաղումեն ոսկում՝ արծաթում,
Երբ որ վայելեն սուրբ սէրըդ,
Քեզ կ'պահպանեն սպասում:

Աւատ արօք Ազուլեցուց՝
Մամիայն Սիւնեաց աշխարհըն՝
Որպէս օտար աղբաց եցոյց,
Կ'ճըղէ քեզ յոսկէ դարն:

Հասուց է՝ մեղրի կարօտ է
Քո Կովկասեան Հայաստանըն.
Ծաղկաբեր դարունն մօտ է,
Փուլթա՛, քաղցրացո՛ բերանըն:

* Այգառէր բարեճիտներ Աւետիս Աշայ Տէր Մը-
նրաչեանց Ագուլեցին Ռեչ ցայտօր առաւել Ժան 190
հազար Տանէլն ընծայեալ է 'ի պէս Աստուածահաճաց
Գործաց, վերաբերեալ ընդ առ հզօր Տէրութեանն Ռուս-
ոց և ընդ առ ազգն Հայոց: Պ. Ս. (Սէյէտ):

Հայք բանասիրութեան մասին
Ուրիշ ազգերից են աւել,
Դու էլ նրանց հետ 'միասին
Սկըսեա՛ ազգին համբաւել:

Ես ինքս ազգաւ բուն Հայ եմ,
Թէև անունըս Սէյեադ է.

Այս երգը քեզ կընծայեմ,
Սիրո՛ւն Մեղու, չասես՝ վատ է:

18¹⁰/₁58:

Ներգործութիւն էրևակայութեան:

Ի գիւղաքաղաքին ճահուկ
Մէկ մարդ գոյր, անուն Մանուկ.

Ամուսնոյ անունն էր Հուշան,
Որ չունէր բնաւ խելքի նշան:

Ունէին աղջիկ երեք հաա,
Ամենեքեան միմեանցից վաա.

Մեծն կոչելը Սալօ-խանոււմ,
Իսկ միջակն Բալա-խանոււմ.

Անուն փոքրին էր Նոր-բահար,
Խելքով դիմ միմեանց յարմար:

Պատմուք կասեն՝ Սալօն մէկ օր
Զուրը դնաց՝ ձեռին սափօր.

Սափօրը լքցըրուց ջրով,
Քաշուեց՝ նստեց աղբիւրի քով.

Սկսեց նայել ծառիլին,
Մերձակայ եղած սարերին.

Իւր բաղդից փոքր բամբասեց,
Յետոյ սրտի միջին ասեց.

Ունենայի ես մէկ լաւ այր,

Որդի ծնէի՝ նա կոչուէր հայր.

Անուն որդւոյս լինէր Մարգար,

Այս սարերի վերայ ման դար.

Մէկ բարձր տեղից անկանէր,

Աչքիս առաջին մեռանէր.

Ես սկսէի անդադար

Ճըչել և ասել. վայ Մարգար,

Աւանց քեզ ո՞նց կուլի օրըս,

Ո՞վ կուլի թուռն խեղճ հօրըս.

Եթէ հասկանայ քո հայրըդ,

Ի՞նչ պատասխան կուտայ մայրդ.

Սև ունքերիդ մատաղ լինիմ,

Վարդ թուշերիդ մատաղ լինիմ.

Արդեօք ո՞ւմ որդին էր քոյ թայ,

Սիրտս այրեցիր, Մարգար վայ:

Լայր և հոսէր արտասուքն,

Բազումք տեսին նորա սուգն.

Իսկ մեք թողցուք նորա լալըն,

Տեսցուք ընտանեաց ահվալըն.

Յանկարծ ծարաւեց Շուշանն,

Միտ բերաւ մեծ աղջըկանն,

Որ վաղուց ջուրն էր գնացել,

Անյայտ պառճառաւ յետացել,

Կոչեց. աղջիկ՝ Բալա-խանում,

Սալօն ուշացաւ, չէմ խմանում, —

Քանի ժուկ է ջուրը գնաց,

Չ'գիտեմ՝ ընդէր երկար մնաց.

Գնա՛, նրան վեր ա՛ռ, բէր տուն,

Զգաստ, որ քեզ չի՛ խածէ շուն:

Բալա-խանումն՝ մօր խօսքով,

Վազաւ՝ հասաւ աղբիւրի քով,

Տեսաւ Սալօյին անդ նստած,
Չորս կողմումը մարդիկ կանգնած,
Աչքից արտասուք թափելով,
Բարձրաձայն գոռումէր՝ լալով:
Սալօյի վեզովը անկաւ,
Հարցրուց որպէս սրասցաւ.
Ասա՛, քոյր իմ՛, ընդէ՛ր կուլաս,
Ո՛ւմանից քեզ էհասս ինասս:
Սալօն ասաց. Բալա-խանու՛մ,
Մե՛թէ դարդս չես իմանու՛մ.
Մարդոյ էի իբր գնացել,
Վիճակաւքս ուրախացել.
Որդի ծնայ մարդարտաշար,
Կերպիւ հրեշտակ՝ անուամբ Մարգար.
Երեխայս այս սարից անկաւ,
Մեռաւ, իմ՛ հօր տունը քանդաւ.
Ես ո՛նց ապրիմ՛ առանց Մարգար,
Վայ ինձ, Մարգար, վայ ինձ, Մարգար,
Որ ջահել կեանքս մաշեցի՛ր,
Սիրտս դանակով տաշեցի՛ր.
Դու էիր ծաղիկն մեր տան,
Թանկ առի, կորցրի էժան:
Բալա-խանումն զայս լուաւ,
Չայնը քեռ ձայնին տուաւ,
Կոչեց. քաղցրիկ քըւոր որդի,
Դու քաղցրութիւն իմ՛ կոկորդի,
Մօրաքոյրըդ հողը մանի,
Թէ քեզ պէսը էլ չի՛ դանի.
Եթէ հայր ու մայրս լըսեն,
Իրանց կարատել կըսկըսեն:
Սոքա մնան աստ ողբալով,
Մայրը ճամբին մտիկ տալով.

Տեսաւ՝ յեռացան դասերքը,
Ճարաւ չորացաւ լընտերքը,
Ասաց. նազելի Նոր-բահար,
Ճարաւ մեռայ, արա՛ մէկ ճար.

Քոյրքո՛ղ ջուրը գնացին,
Այոջա՛մի յեռացան՝ մնացին.
Երևի՛ մէկ բան պատահեց,
Որ նրանց արգելեալ՝ պահեց.

Ի՛մ սիրտս ճարաւ մի տանջիր,
Մէկ վաղէվազ գնա՛, կանչի՛ր,
Ասա՛. անամօթք, եկէ՛ք տունի,
Աչք թշնամոյն է միշտ արթուն.

Վաստ կու խօսին ձեր անուանը,
Յաւիտեան կու մնաք տանը:
Նոր-բահարն վաղվաղակի
Վազեց աղբիւրը ուղղակի.

Տեսաւ իւր քեռքը՝ անդ նստած,
Եղել են աղբիւր արտասուաց:
Բալա-խանու մին մօտացաւ,
Տխրութեան պատճառը իմացաւ.

Ի խոր սրտէ մէկ անի քաշեց,
Արտասուք թափեց՝ վաղվաշեց,
Ասաց. ո՛ւր ես դու, Մարդար ջան.
Սպանեցիր դու զիս կենդան.

Ի՛նչ կուլեր՝ փոքրը շատ գայի,
Քեզի մէկ կենդան անենայի.
Իսպառ կարար մեր համբերըն,
Ո՛վ կուլի մեր հարսնաղբերըն.

Երէք քոյր եմք առանց եղբայր,
Ունիմք դառամեալ հայր ու մայր.
Թէ մարդի գնանք ո՛չ բարով,
Նորա չեն ծիծաղիլ տարով,

Ի՞նչ կուլինէր՝ ապրէիր դու,
Նրանք չէ լինէին զեռ Բու:
Յետոյ սկսան երեք քոյր
Մէկ մէկու առ առ սոց համբոյր,
Կալ և ճչել աղերսագին,
Չարմացնել թէ՛ մարդ՝ թէ՛ կին:
Սալօն գողուամէր՝ վայ Մարգար,
Ինձ էլ քեզ հետ դերեզման տար:
Բալա-խանուամբ բարբառը,
Կացրուց դաշտն ու անտառը:
Աղեամնօք Նոր-բահարի
Չէր մտում քար ՚ի վերայ քարի:
Տան նեղանուամէր Շուշանն,
Չի չէ գիտէր դստերց բանն.
Երբ համբերու-թիւնն հատաւ,
Յարեաւ՝ մաշիկները հազաւ,
Գնաց դէպ ՚ի յաղբեր կողմը,
Որ այն կողմից ճնչէր հողմը,
Ականջին էհաս լալոյ ձայն,
Սիրար սառաւ միանգամայն,
Ասաց՝ կտորել են սափորըս,
Աւանց տափար ի՞նչ կուլի օրըս:
Հասաւ՝ տեսաւ աղջիկերքը
Արտասուքով թաց աչքերքը.
Սափորը սաղ՝ մէջ տեղ դրած,
Իրանք չորս կողմումը նստած,
Լալիս են և սուղ են անում՝,
Բայց պատճառը չէր հասկանում:
Հարցրուց Սալօ խանուամին.
Ամօթ չէ՞ սա մեր անուամին,
Որ դուք մատղաշ աղջիկ գողով,
Նստել էք աստ գողգողալով.

Չեզ տեսնօղը ի՞նչ կասէ,

Ո՞նց չի ձեզանից բամբասէ.

Ի՞նչ է ձեր սգոյ պատճառքն,

Որ դուք լաց էք իլում գառքն:

Սալօն ասաց. տեսէք մօրքս,

Որ չի՛ իմանում սև օրըս.

Ախրը գնացելի մարդի,

Տղայ ծնայ նման վարդի.

Անունը դրելի Մարգար,

Այս ապառաժից ընկաւ վար.

Մեռաւ, քանդեց մեր հօր աունը,

Յանդունդ ընկաւ մեր անունը.

Եւ քեզն ո՞վ մամ կու կուչի,

Յեաքիցըդ կուգայ դես պուչի.

Ո՞ւմ ման կածես դու շալակիդ,

Արժան կառնես համեղ պագիդ.

Թաւըն՝ դիտողին թանդ բան է,

Մեծ կորուստ է, երբ մեռանէ:

Հուշանն՝ երբ ոք զայս լսաւ,

Աղջկերքանց միջին նստաւ,

Կրանց պարագլուխ եղև,

Պսկեց մազը իբրև կեղև,

Ասաց. վայ, սիրուն թաւներս, վայ,

Չի՛ թողար տեսնեմ ծաւներս, վայ.

Ասաց. Սալօ, լի՛ր մօրըդ,

Սկանար քո ծնած օրըդ.

Երբ սարից անկաւ Մարգարըն,

Ո՞նց ներեց սրտիդ դադարըն,

Որ ինձ չի՛ յայտնեցիր շուտով,

Չի ես եկեալ բօբիկ ոտով,

Մարգարիս դերկս առնէի,

Հին ցաւըս նորին խառնէի.

Արտասովեցէք աղջիկերքս,

Փոքր խաղաղուին սսկերքս:

Յետոյ մէկ մայր՝ երեք աղջիկ,

Աղաղակ բարձին յոյժ սաստիկ:

Որովհետև այս պատահման

Ժամուև Մանուկն չէր 'ի տան,

Այլ դնացել էր նա ջաղաց

Իւր տան համար աղաւոյ հաց.

Երբ որ դարձաւ 'ի ջաղացէ,

Ետես՝ զի տան դուռն բաց է.

Կոչեց, պատասխան չի՛ ստացաւ,

Ճարահատեալ՝ նեքսև մտաւ.

Տեսաւ, որ մարդ չկայ տանը,

Ինաց առ մօտ հարեանը,

Հարցրուց ընտանեաց մասին.

Ասաց. աղբիւրը գնացին:

Յետոյ դարձաւ՝ կամաց կամաց

Դէպ 'ի յաղբեր կողմը գնաց.

Ի՞նչ տեսաւ. կինն ու դստերքը՝

Բաց արած գլուխն ու հերքը,

Լաց էն իլում մէկտեղ նստած.

Ասաց. սա ի՞նչ է, Տէր Աստուած,

Որ սոքա աղաղակումեն,

Սիրոս բևեռօք ծակումեն:

Երբ Մանուկին նոքա տեսան,

Վազելով՝ ոտները անկան.

Հուշանն ասաց՝ գլխիդ հողը,

Զանրդ ընկնի մահուան գողը.

Մաղ օրը ճչումենք՝ լալիս,

Դու դեռ ես նոր ես դալիս.

Մարդ կասի սիրտը քար կուլի,

Մարդ կասեն ի՞նչ չիւար կուլի:

Մանուկն ասաց. ասէք տեսնամ,
Չեր լացի պատճառն իմանամ:

Հուշանն ասաց. գլխիդ քարն,
Ո՛ր է Սալօյիդ Մարդարն,
Որ համարեա՛ մէկ հրեշտակ էր,
Մեր ասն համար վառ ճրագ էր.

Սարի գլխից անկաւ՝ մեռաւ,
Ատուած պատժեց մեզ իւր ձեռաւ.
Կորցրինք մեր ցնծութիւնը,
Կա էր մեր սրտներն սիւնը.

Աւանց Մարդար մեք ի՞նչ կանենք,
Մեռած ենք, ո՛չ թէ կենդան ենք:
Մանուկն այս բանին զարմացաւ,
Մարդարն ո՛վ է, չի՛ իմացաւ.

Այս մասին հարցուց Հուշանին,
Հուշանն ետ պատասխանին.
Թէ Սալօն տուել՛լինք մարդի,
Ճնեւ էր մէկ սիրուն որդի.

Գեղեցկութեամբ էր աննման,
Միանգամայն քեզ էր նման.
Այսօր յանկարծ սարկցն անկաւ,
Մեռաւ, մեզ կոտորեց անցաւ:

Մանուկն՝ երբ որ զայս լսեց,
Արտասուք թափել սկսեց,
Ասաց. լալով բան չի՛ դառնալ,
Սգով մեռեալ չի՛ համբառնալ.

Ելէ՛ք, ելէ՛ք դառնանք ՚ի տուն,
Հոգսը քաշենք մանկան հոգուն.
Լաւ է՝ ասենք միաբարբառ.,
Ատուած ետ և Ատուած էտ:

Մանուկն նրանց տուն տարաւ,
Չին հին խօսքով մխիթարաւ.

Մէկ եզն ունէր, բերաւ՝ մորթեց,

Ընտանեաց սուաը ուղղորդեց.

Ճահկեցոնց դիմ կանչեց 'ի տուն,

Մեծ հաց տուաւ մանկան հոգուն.

Գիւղականքը՝ երբ խնացան

Բանի միտքը, յոյժ զարմացան,

Հասկացան, որ դիմ յիմար են,

Ուղեցին սուտ մխկիթարեն.

Ըմպան հոգւոյ թատըն մանկան,

Տանկց ելին՝ ցքիւ անկան:

Մանուկն այս յիմար սգով —

Համ մարմնով կորեաւ, համ հոգւով.

Եզն չունէր, որ հաց վարէր,

Ընտանիքը կառավարէր.

Մնալով նորա անուաղ,

Յիւրաբուժեան եղեն մատաղ:

Ինչ տուն չունի խելօք գլուխ,

Նրանից չի ելանել ծուխ.

Յայտնիր՝ որ իմանամք, Սէյեա՛դ,

Սա պատմութիւն է, թէ իրատ:

18 ²⁵ 58:

1

Տե՛ն:

Անցեալ դիշերն երազում

Տեսի մեր Հայկ նախահօրը.

Որ յԷջմիածին էր վազում

Աւ Լուսաւորիչ Գրիգորը:

Երբ էհաս Տրդատայ դուռն,

Լուսաւորչին նստած տեսաւ,

Վիղովը ձգեց իւր կուռն,
Երեսը պաղեւ սկսաւ:

Լուսաւորիչն զարմացաւ,
Երբ որ ետես Հայկին ուրախ.
Երբէք պատճառը չիմացաւ,
Ձի իւր ունքերն էր տրտում, կախ:

Ասաց. ասա՛, հայր Դիւցազին,
Ուրախութեանդ պատճառն,
Որ ցնծասցուք 'ի միասին,
Ձի իմ սիրտըս է յոյժ դառն:

Պատասխանեց Նահապետն,
Թէ ուրախ եմ ո՛չ անպատճառ.
Մեր նախահօր որդին Սէթն
Իմ այգոյ մէջ ունէր մէկ ծառ:

Ձրհեղեղն այն խեղճ ծառին
Արարեալ էր արմատախիւ.
Բայց այս տարի Վարդավառին
Ոստք նոյն ծառոյ բերին տըխիւ:

Տեսեալ զայն ես խիտ հիացայ,
Ձի չոր ծառն պտուղ տուաւ.
Ես այն պտղովը լիացայ,
Եւ յոյժ ուրախացայ նովաւ:


Ձի եթէ չոր ծառոյն Ատուած
Ողորմութեամբ իւր անսահման
Պաղաքերութիւն է տուած,
Ո՞նց չի օգնիւ աղգիս սահման:

Լուսաւորիչն հարցրուց.
Մի՞թէ աղգ քո՛ 'ի ձեռն անկման՝
Իւր վիճակը չ'կորցրուց,
Որ կ'յուսաս կրկին կանգնման:

Նահապետն պատասխան ետ,
Թէ կ'յառնէ անկանողըն,

Թէև յիմար լինի՝ ազէտ,
Միայն չի կանգնիլ մեռնողըն:

Ես տեսնուամ՝ որ ազգիս մէջ
Իմաստն թանգ է քան փողըն.
Յառաջ քան զայս իմ ազգն հէջ
Չէր սիրիլ զիմաստ սրտուողըն:



Երբ որ իմաստուածեան սէրն
Մէկ ազգի միջնն տարածուեց,
Իմացի՛ր, երկնային Տէրն
Գթաց՝ նորա բաղդը բացուեց:

Քանի ժուկ է, որ ես զիտեմ՝
Չի ազգս իմաստ է սիրում.
Պատն որոյ յոյժ միամիտ եմ,
Որ սրահն սլուումն է տիրում:


Մի՛թէ չես տեսնում՝ քանի տեղ
Դպրոցներ, տպարաններ կան.
Կրանցանով շատ ազգ և ցեղ
Լուսաւորեալ՝ երջանկացան:

Տէս, ո՛նց զկնի քանի ամաց
Քս լուսաւորած Հայերըդ,
Հաւատարիմ, երախտիմաց,
Միտ կ'բերեն քոյ վայերըդ:

Լուսաւորիչն Տաճարի
Մէջը տարաւ Կահապետին,
Զուխտ չոքեցին 'ի վերայ քարի,
Աղաչեցին Սրտագիտին.

Թէ, Տէր, տուր դու ազգին Հայոց
Անքակտելի հաւատ, յոյս, սէր.
Սէյեաղն եմ՝ 'ի Չորըն Վայոց
Դեռ չեմ տեսնում սիրոյ սրտիկեր:

Ի Ա. այոց Չորն Հայոց:



Մօրութիւնք:

Եթէ սակեջրով եւ ջրած լինիս՝ բան չես, մօրութիւնք¹,

Եթէ սև Սաթի պէս եւ մրած լինիս՝ բան չես, մօրութիւնք²:

Մինչ ցքոյ երևելըդ մարդը մէկ մեծ պատուոյ տէր է,
Ո՛վ որ մտիկ տայ՝ կասէ, համարեա՛ քաշած պատկեր է,
Բանաստեղծներն համար յոյժ հազուագիւլա նիւթեր է,
Իսկ երբ դու երևեցար, քո տիրոջդ կասեն՝ ծեր է,
Եթէ ՚ի վերուստէ եւ ընտրած լինիս՝ բան չես, մօրութիւնք:

Գեղեցկութեան աստղն քեզ տեսեալ՝ կ'իջանի յանդունդն.
Քեզ պէս վատ բան չի՛ լինիլ, փչանայ քո չար ծնունդն,
Քո միջին է լինում միշտ սլոց և լուց դունդն.

Քոյ ձեռնից է դանդառում երկարամօրուս Ախունդն,
Եթէ սակեթելով եւ կարած լինիս՝ բան չես, մօրութիւնք:

Մինչդեռ սև ես՝ կարող է տէրըդ դնալ հարսանեաց տուն,
Ընդ տղայոց խաղալով՝ մինչ ցլոյսը մնալ արթուն,
Երբ սպտակար, տիրոջդ կասեն՝ ամաչի՛ր, սպտակ շուն,
Այնուհետև ծածուկ տեղ պիտի վարէ կեանքը բիթուն,
Եթէ մարդարտիւ զարդարած եւ լինիս՝ բան չես, մօրութիւնք:

Քոյ տէրըդ՝ եթէ մատղաշ կին ունենայ, մէկ մեծ ցաւ է,
Զի կինն որքան որ լաւ օր ունենայ՝ կ'ապաշաւէ.

Եթէ որ յանկարծ կըպնես վարդ երեսին, կ'պարսաւէ,
Այդպիտի անպատուութեամբ բնաւին կորնելըդ լաւ է,
Եթէ խմաստնոց մէջ եւ դոված լինիս՝ բան չես, մօրութիւնք:

Սէյեանդ, սիրեա՛ մօրութիւնքը, անմօրութիւնք ո՛չ ոք չի՛ մնալ,
Առանց մօրութեան մարդկային հասակն դուրս չի՛ դնալ,
Որքան ծեր մարդ տեսանես՝ մօրից անմօրուս են ծնեալ,
Մօրութեան շահն նա է, որ տէրն կամաչի՛ չի՛ շնալ,
Թո՛ղ, կաց ասեն՝ խինայ եւ դրած լինիս՝ բան չես, մօրութիւնք:

1 և 2. Մ. Բեհայնի գրած վերջաւոր իրենեան պայտառիկ գրքի:

Երգ «Երայ»

Դու ես մարդկային ազգի ցանկութեան վերի ծայրն,
 Բազմաց սրտումը ցըցուած է քոյ ունքերի ծայրն,
 Կարմիր եաղութին կտարելայ քոյ պաօշների ծայրն,
 Մարդկանց միատեղ կարելայ քոյ մազերի ծայրն.
 Թոյլ տուր, նազելի, մէկ քեզի պագնեմ՝ յետոյ մեռնեմ¹,
 Թոյլ տուր ծոցումդ մէկ գիշեր թաղնեմ՝ յետոյ մեռնեմ²:

Աշխարհի միջի կէս չարութեան պատճառը դու ես,
 Բայց քեզ տեսնողը կասէ, թէ անմեղ դառը դու ես,
 Եղեմական դրախտի մէջ տնկեալ դիտութեան ծառը դու ես,
 Սիրահարիդ համ ցուրտ ձմեռ՝ համ պողատու ամառը դու ես:

Ինչ սիրահար՝ որ չունի եար, չի եկել աշխարհ,
 Նրան չի լինիլ մարդ անուանել, այլ է անտաշ քար,
 Գործ չի դրած սէրըն է իսկ թաղուցեալ քանքար,
 Բայց ինձ առանց սէր մնալոյ չեք երբէք հնար:

Լաւ է սիրահար լինիլ, քան զանճառնի ճարտասան,
 Լաւ է սիրել եար, քան շաղակրատ տրամաբան,
 Հաստատ սիրահարն լաւ է, քան սուտ փիլիսոփայն,
 Սէրն չի լինի, ամենայն մարդ կ' լինի անբան:

Սէյեադի սէյդն քո նման սիրուն կաքաւն է,
 Ամենուրեք սէրն նորա փրկութեան նաւն է,
 Սէրն ամենայն բարեաց միջի ընտիրն ու լաւն է,
 Անսէր տէրութեան կործանվիլը պատշաճ համբաւն է:

❦

Երգ

Աչքս յանկարծ դեմքիդ ընկաւ՝ ուշս վերացաւ, Նազլու ջան.
 Անկայ սիրոյդ բեռան տակն՝ մէջքս կեռացաւ, Նազլու ջան.
 Անողորմաբար ձգեցիր ինձ ոսկորացաւ, Նազլու ջան.
 Հողիս հանեցիր՝ անդամիս մահն տիրացաւ, Նազլու ջան.
 Լաւ որ չի տեսաւ՝ ո՛վ ոք որ քեզ հետ սէրացաւ, Նազլու ջան:

1 և 2. 1՝, Թե՛նայն քանից վերջումն կը հնէն ո՛ր պայտանիկ քաղու:

Գլխիդ մաղերը նման են ճաճանչաւոր արեգակին,
Ճակատդ ո՛նց եմ կարող հաւասարել լուսնիակին,
Յօնքերըդ կոտր են քցել կանաչ-կարմիր տեսակին.

Աչքերըդ ջուխտ մուրակ՝ սպիտակ քիթըդ նրանց հաքին.
Աչքս յանկարծ դէմքիդ ընկաւ՝ ուշս վերացաւ, Նազու ջան:

Թուշերըդ կարմիր վարդին արել են իրանց զարաւաշ.

Պռօշդ նման եաղութի՝ չի գտանվիլ Հինդ ու Հաբաշ.

Բերանըդ է ակնի մադան, ատամըդ ալմաս անթրաշ,

Լեզուդ զանդի պէս քաղցր է՝ խօսած բաւերդ թըթուաշ.

Անկայ սիրոյդ բեռան տակըն՝ մէջքս կեռացաւ, Նազու ջան:

Բուխաղըդ բամբակի նման՝ նրա մօտին սև է ձիւնն.

Մինայ շըլինքդ տեսնողն ի՛նչ կանի լուսեղէն սիւնն.

Չեմ մեռանիլ, եթէ ծըծեմ մամաներիդ կարմիր հիւնն.

Ի՛նչ կուլի, մին ողորմաս՝ առնես ինձ ծոցիդ անկիւնն.

Անողորմաբար ձգեցիր ինձ ոսկորացաւ, Նազու ջան,

Ըստեանցդ շամամայ ասեմ, կամ լիսօն, կամ սպիտակ խնձոր,

Կամ կօլի կակող կարաք եղ՝ հանած թանի միջիցը նոր.

Սադափ փորըդ վառ կրակ է, չի դիմանալ ճսթեղէն չոր.

Մէկ բապէ կաթըդ ծըծողն արբած կուլի մինչև ութ օր.

Հողիս հանեցիր՝ անդամիս մահն տիրացաւ, Նազու ջան:

Մէկ նայելով՝ խեղճ Սէյեադի ջանը ձգար մահուան դողըն.

Թայըդ չ'կայ աշխարհքումս, Ատուած օրհնի քոյ ծնօղն.

Մերվաթ արան, ինձ տեսնելիս՝ յետ քաշիր երեսիդ քօղն.

Ասիր՝ տեսնեմ, ո՛նց կ'մեռնի մարմար պորտիցըդ կծողն.

Լաւ օր չի տեսաւ՝ ո՛վ ոք որ քեզ հետ սիրացաւ, Նազու ջան:

18 ¹⁰/₃ 58. 'ե Այսոյ Չորեկ հայտոյ:



Գ Ե Մ Փ.

Անդամըդ սպիտակ է, աչքերըդ ևս սև.

Գեղեցկութիւնն քեզ երկնային պարզև.

Եթէ դու հրեշտակ ես, ինչո՞ւ ես անթե.

Իսկ եթէ սր մարդ ես, ո՞նց արիւր ինձ խե:

Կըռներըդ բիւրեղ է, զօլբաղն մարջան.

Ճոցինդ լիսօն է, կամ մինայ Ֆինջան.

Կամուսեմ համբուրել, վախեմ տրանջան.

Մեր մէջը դու ձգի՛ր մին հաշտութեան ձև:

Սէյեադի հետը ե՛կ՝ խօսել սկսէ.

Էդ մախմար թուշերըդ աչքերին քսէ.

Անունը ա. ե. տ. ր. ո. և սէ.

Գերիդ է, իմացի՛ր, կենդան է մինչև:



Ե ր 4.

Քեզ հասկանալ չի՛ լիլ, ինչպիսի բան ես դու 1,

Մտաց տակ չես ընկնում, դերբնական ես դու 2:

Ահհուն արարածքն դիմ առ քեզ են նայում.

Կռապաշտք էլ մինչև քեզնից չեն երկբայում.

Ամէն ձեռագործիդ վիճակ ես ընծայում.

Լաւին՝ վատին դու միշտ մին աչօք ես հայում.

Քո էս արարմունքիդ աշխարհք է վկայում.

Երես պաշտիլ չունես, սուրբ դատաստան ես դու:

Աշխարհքի երեսին լոյսդ տիւուած է.

Որչափ արարած դոյ՝ դիմ քեզանից ցած է.

Տեղերքը քոյ սուրբ անուամբդ լցուած է.

Էս կարողութիւնը քեզնից քեզ տուած է.

Սրանց տեսնողն ո՞նց չասիլ քեզ Ատուած է.

Քեզ տեսանել չի՛ լիլ՝ իբր էական ես դու:

Քեզ պէս հրաշալի աչքս բան չի տեսած.

Գործերիդ պէս լաւ գործ ականջս չի լսած.

1 և 2. Մ. Բենամյե գրանց Վերջումն կրկնէմ պաշտաւի պաղատ

Մեր վերջացրածը՝ քեզ նոր է սկսած.
Սրանց սրտխուժեան երբէք միտք չէ հասած.
Քոյ սրտմուժիւնը մեզ մարդարէք են ասած.
Կեանքը քս ձեռիդ է, անմահական ես դու:
Դրախտուժը դրիր մեզ նման երկուսին,
Նրանց ճրագ եղեն արեգակն և լուսին.
Չարութեան արհեստը սատանայէն ուսին.
Պատուէրիցդ ելան, թուք նրանց նամուսին.
Մեզ ապաւէն արինք Մարիամ սուրբ կուսին.
Նորա երկուսքն մեզ եղև դեզ փրկական:
Վասն սիրոյդ առ մեզ մնացեր յարգանալի.
Ամենազօր Տէրըդ մտեր 'ի մէջ բանալի.
Քս մին բարբառըդ է փրկութիւն հիւանդի՝
Մի՛ կտորիլ դու սիրտը Սէյեադ դարդիմանդի.
Ողորմութեամբ նորա մեզաց հիմը քանդի՛,
Որովհետև 'ի բնէ չարեաց խափան ես դու:

Գ. է. Փ.

Ողորմիր, ո՛վ Տէր եմ, ես բի-իկբալիս,
Ինչ մեղք սր գործել եմ՝ մեղայ եմ դալիս.
Երբ մեղքը միտքս է ընկնում՝ խնդալիս,
Ամենայն սակերքս սգումեն՝ լալիս:
Աւանց մեղք չի՛ լինիլ հողեղէն մարդը,
Քանզի տեսանումէ աշխարհի զարդը.
Գանձն՝ ուռկանն է, կինն՝ կախարդը,
Սրանք են մեր հոգւոյն միշտ մասս տալիս:
Աւանց մեղք դու մեզի ո՛նց կու փորձէիր.
Նա չի՛ լինէր, բաս դու ի՛նչ կու գործէիր.
Չուզէիր սուռնըկին՝ կու քարկոծէիր,
Սէյեադին թողութիւն տուր՝ բաց խօսալիս:

Մատնութիւնք

Ո՛ր դիտէ, ի՛նչ է պառճառն Հայաստանի փոփոխութեան,
Այլազգեաց արհաւիրքն է, թէ կայծն իրան ոխութեան.

Ահադին լերինք կ'հարթէ շնչին կնջիուն ոտխութեան.

Կամ անտէրութեան բերքն է, կամ հետեւանքն ճոխութեան,

Զի շատ ժամ է՝ Հայաստանի սրճակն կարգին չի խօսում :

Հայաստանի լաւ օրերը Հայք ժիր էին՝ մըջման նման,

Ամենայն դարձում սուր էին՝ սեւ արծուի թռչման նման,

Սարսեցուցին տիեզերքը՝ աւիւծոյ մալնչման նման,

Յետոյ յղփացան ծուլութեամբ՝ բաղդի դահն շրջման նման,

Կորա աւեր բուրաստանի սոխակն կարգին չի խօսում :

Անշաղկապ աւաղոյ նման փչմամբ հողմոյ ցիրուցան եղեն,

Մէկ մէկու ձայնը չի լուան՝ այլ աղգերի կցան եղեն,

Իրանց հայրենեաց բարեօքն այլոց համար թացան եղեն.

Ոմանք դիտութեամբ արարին, իսկ ոմանք չիմացան՝ եղեն.

Կնսուր ընծայն Հնդկաստանի թուլթակն կարգին չի խօսում :

Կախնեաց ճանապարհից ելեալ՝ ամենեկն մալորուած եմք.

Ինչ աղգի որ ծառայել եմք՝ նորա վարմունքը սորուած եմք.

Կայն և նման Հրէից աղգին՝ աշխարհի վերայ ցրուած եմք.

Մեր յարութիւնը դժուար է՝ բարձր սարից դլորուած եմք.

Ին է, որ մեր Յունաստանի ջուլթակն կարգին չի խօսում :


Սէյեա՛դ, ի՛նչ կուլի՝ մէկ անգամ դու ել բերանդ լաւ բանաս,

Աղգիդ դառնութեան օրերի վախճանը մարդարէանաս,

Հայաստանը՝ նախկին դրութեան կենդանի տենետա՛ լիանաս.

Այժմ՝ պիտի գիշեր՝ ցերեկ ափսոսաս, լաս և հիանաս,

Զի մեր դուտանաց ժողովոյ՝ նուազն կարգին չի խօսում :



Մատնութիւնք

Ո՛հ, նազելի, անբաղդութեամբ անկար դու մասն անբանի,

Աբանն քեզ պէս աննման թրաշ ալման ի՛նչ կանի.

Ափսոսումեմ՝, զի ես եղէ պատճառ. քո այժմեան վիճակիդ,
Գիտեմ՝ պատասխան պիտի տամ ես յաւուրն դատաստանի:

Ի՛նչ իմանամ, ես կարծեցի՝ թէ մարդ է, մարդոյ զաւակ է.
Մարդոյ պատկեր ունեցողին ո՞նց կասուի՝ թէ աւանակ է.

Արժանաւորութիւն մարդոյ ծածկած է՝ մարմնոյ ծածկոցիւ,
Երկար չի՛ փորձած մարդն միշտ երկմտութեան քօղի տակ է:

Քո հիմնիկան դրութիւնը ապաշխարութիւն համարիր.
Ի վերուստէ եղած բանը դու արդարութիւն համարիր,

Քեզ այդ վիճակը ձգողն կարող է փութով աղատել.

Ատուծոյ ձեռքին դիւրին է, մի՛ դժուարութիւն համարիր:

Քոյ հայրդ մէկ աղնիւ մարդ է՝ յոյժ հմուտ և աշխարհատես,
Նորա զաւակն ես, յայտնի է՝ անարժան բաներին կ'ատես,

Ճակատագրին չի՛ լինիլ հակառակիլ, սիրուն դուտարիկ,

Լաւը վատին՝ վատը լաւին կ'տայ միշտ նա, ո՞ւմ դանգատես:

Թէև առակն ասումէ, լաւ պատուը արջն կուտէ,

Ընտրողութեան թերութիւնն է, առակն դիտովին սուտ է,

Եթէ լաւ փորձած լինէինք, երբ կտայինք զակն չ'ակին,


Արժանին անարժանի մօտ լինելից մեռնիլն օգուտ է:

Վասն նազելոյդ փրկութեան, Սէյեա՛դ, աղօթի՛ր առ Աճ,

Զի աշխարհն՝ լրիւ իւրով՝ համայն նորա է ստացուած.

Երկար չի՛ մնալ անկատար, եթէ ուղիղ սրտիւ աղաչես,

Ինչ որ մեզ համար ծածուկ է, նորա համար մերկ է՝ բացուած:



Ս Է Ժ ա է.

Հայք պիտին այն մասին միշտ կոծալ՝ ողբալ,

Որ նրանց ճրագն տակին լոյս չի՛ տալ.

Նրանց լուսովը շատ մարդ ճամբայ դտաւ,

Իրանք մնացել են մըթնու՛մ մուրեալ:

Որ Հայն պատուի էհաս՝ օտարին սիրեց,

Իւր ազգին միշտ նայեց դիմօք խոժուեալ:

Այս է մեծ պատճառն, որով մեր ազգն

Չի կարուժ այլոց պէս սուր յառաջ գնալ:

Հայ եղբարք, հեռացէք անհագուժիւնից,

Անտանեւի ծաղու տակին մէք մընալ:

Ինչ Հայ՝ որ իւր Հային թիւր աչօք հայի,

Կա փութով իւր պատուից կ'լինի գլորեալ:

Անանոյ խրատն անլեզու փայան է,

Մարդ պիտի վատ բանից խրատու հեռանալ:

Հստ Հայ կայ, որ կասէ՝ ես ազգասէր եմ:

Այնպիսին սիրումէ միշտ դատարկ խօսալ:

Ազգասէր մարդոյն իւր դործն ցոյց կըտայ,

Ազգասիրի լեզուն երբէք չի գուալ:

Այժմեան ազգասէրքն չէն իսկ ազգասէրք,

Այլ կամողք նայն կոչմամբ պատիւ ստանալ:

Ազգասիրի աջոյ ձեռաց տուածըն

Չի պիտի նորա ձախ ձեռքն իմանալ:

Ո՛վ մէկ փող իւր ազգի շահին տալիս է,

Զուռնայիւ՝ կամուժէ երկրին իմաց տալ:

Սէյեա՛դ, դու անդադար հնչեա՛ զեա քնար,

Թէև բազումք խօսքիդ չուզեն հաւատալ:



Հոնգոյն «Ինչպէս քեամարչին օղլանն» Տաճկէտէ

հաղէն:


Ան, ի՛նչ էլաւ էն օրն, որ լեքն էր Վայոց Չորը:

Հինը աղքատաց տային, իրանք սւտէին նորը:

* Լեւոն:

Գարունն էհաս, վայ բեւբեւլին¹,
 Ան ու վա՛նն է փայ բեւբեւլին²,
 Վիճակաւ իսկ Հայ բեւբեւլին³,
 Մինչի երբ պիտիմք այսպէս մնալ⁴,
 Կեղութիւն կրել, կոծալ, սգալ⁵,
 Ո՛հ, արտասուել՝ լալ⁶:

Անունըս Հայ, օրըս վայ, մօրըս վայ և հօրըս վայ,
 Թէ լաւ լինիմ՝ իմ շահն է, իսկ թէ վատ՝ եղբօրըս վայ:
 Գայլն ասաց սջխարին՝ ո՛չ յեմար ես, ո՛չ խորին.
 Սոխակն չի՛ հաւատալ ո՛չ բօղ վարդին, ո՛չ խա՛րին:
 Ոջխարն պատկեր Հային, դայլն ստուեր Յուդային.
 Բաղումք տեսեալ մեր օրը՝ ողբային, կամ՝ խնդային:
 Հայի յոյսն Աստուած է, սա՛ ՚ի վերուստ աղղուած է.
 Անն աղղաց լաւ վիճակ, մեր աղղին ալ ա՛ս տուած է.
 Սէյեաղի դառը լալը՝ ի՞նչպէս ափսոսայ լալը,
 Սարրաֆ չ՛կայ՝ ճանաչէ անպիտան քարն ու լա՛լը:



Լեւոնդեան սուրբ Խաչ, որ է ՚ի Առաջոյ Չորն Հայոց:

Բազմահրաշ սուրբ քառաթեւ Արկազեան,
 Դու փառք, պատիւ և յոյս աղղի Հայկազեան.
 Ի վերայ քոյ մեռաւ Փրկիչն աշխարհի,
 Քեզ զինեցան սուրբ նահատակք Արտազեան:
 Դու փոխանորդ դրախտի ծառոյն դիտութեան,
 Կոյլաւ անկաք ՚ի խաւար արդիտութեան.
 Դու կանգնեցեր զանկեալ բնութիւն մարդկային.
 Քեզ յաղթեցինք դժոխային պետութեան:
 Զքեզ առեալ բարեպաշտ Տիկին Սիւնեաց,
 Ի յԱրկազեան սուրբ սենեկի ամփոփեաց,

1, 2, 3, 4, 5 և 6. ասոնց վերջումն կը կենտո՛ւ պայս" . արդու:

Երկար միջոց անյայտ մնացեր յաշխարհի,

Նշոյլ քոյ միշտ զսիրտ Հայոց սփոփեաց:

Ամենայն ազգ ունի հաստատ տէրութիւն,

Հայոց սրտին դու ես միայն զօրութիւն.

Ո՛վ քեզ ունի, նա բնաւին ցաւ չունի,

Քեզ պաշտողն չի՛ տեսանել չօրութիւն:

Քե բժշկին դիւահարք և ախտաժեպք,

Ի քէն սարսին թերահաւատք և տգէպք.

Սէյեադն քոյ պատուանդանիդ փոշին է

Մինչ ցօրն՝ յոր հալին լերինք, այրին գեպք.

Սարգ աշխարհի:

Ո՛վ մարդ, էն օրը կորար դու՛ ինչ օր որ մտար աշխարհն 1,

Ոչ ովին գլուխ չի՛ հանած այս բնութեամբ չար աշխարհն²:

Սադայէլին ասաց՝ դու ես երկնայնոց միջին նախադաս,

Հահաւէտ խրատ կ'տամ՝ քեզ, եթէ կատարել կարենաս,

Ծայրագոյն աստիճանի դու կ'հասնես, թէ որ կամենաս,

Աթուրդ Տէրի աթոռին մօտ դնես՝ կու աստուածանաս,

Այս խրատով լոյս հրեշտակին տուաւ անտանելի մաս,

Երկնքից յանդունդը ձգեց նրան ապիկար աշխարհն:

Ինչ օր որ Ադամ Եւային դրախտի մեջումը տեսաւ.

Նրանց կորստեան ձևերը այն օրից սարքել սկսաւ,

Սադայէլին կոչեց իւր մօտ՝ դրդուեց նրան և ասաւ.

Քոյ ցանկացած աստիճանին այս անպիտան մարդն հասաւ,

Նա էլ այս չարի խրատն շահաւէտ կարծելով՝ լսաւ.

Խաբեց նրանց չար ստղովը, քցեց ցաւագար աշխարհն:

Յորժամ որ մեղաց շատիկը Ադամ Եւային հազցրուց,

Փախցրուց՝ կոխեց ծառայ տակ, Աստուծոյ աչքից թաքցրուց,

1 և 2. Մենայն քանց վերջումն կրկնեմ՝ զայստսիկ քողոս:

Արարչին ընդ արարածին թշնամոյ տէս ներհակցրուց,
Փափկութեան մէջիցը հանեց՝ դւերին երկրպագցրուց,
Արդարութեան հուրը մարեց՝ մեղսական ջուրը տաքցրուց,
Դժոխք դնալոյ մեզ համար բացեց ճանապարհ աշխարհն:

Մարդկան ազգից բազում անձինք ընտրեց՝ արեց նախագուշակ.
Անթիւ մարդկան գլխին դրաւ արքայական մարգարտէ թագ.
Հատերին՝ փորձութիւն ձգեց՝ հնարներով տեսակ տեսակ,
Հատերի դէմքին մուր քսեց՝ արար խաւարած արեգակ,
Մարդ չի՛ թողեց, որ չի՛ շինեց միմեանց ատելի՝ ներհակ,
Կախանձի սերմը մեր միջին ցանեց այս վատթար աշխարհն:

Քանի մարդկան ձեռից բռնեց՝ բաղդաւորեց՝ առաջ տարաւ,
Մէկին սրով, մէկին գրով, մէկին զօրով, մէկին փարաւ,
Մէկին թողեց սովալլուկ՝ մէկին խեղդեց պառքեալ ծարաւ.
Արեւմտից մինչի Հիւսիս՝ Արեւելից մինչի Հարաւ,
Ինչ արարած որ մէջը կար՝ ամէնին իւր գերի արաւ,
Խօսածն սուտ՝ գործն անօգուտ՝ է սահեցման քար աշխարհն:

Հատ վարդերես սիրուններին փթացրուց՝ սեւ հող շինեց,
Հատ անուանի և քաջ մարդիկ աղքատացրուց՝ գող շինեց,
Հատ աստուածաբան քարոզիչք մուլի և շնացողք շինեց,
Հատ փելիսփայլից վերջը որկրամուլ՝ արբեցող շինեց,
Հատ արժանիք քցեց փառքից՝ անարժանիք դատող շինեց,
Ձի բարի գործից հեռու է չարութեան յօժար աշխարհն:

Ձկնի ամէն չարութեանց պատրաստեց մեզ համար մահն.
Երնակ չէր՝ որ իրան նասիբ լինէր մեզ տուած մատթահն.
Գիշեր՝ ցերեկ սրտներիցս չի՛ ելանում նորա ահն,
Ելի աշխարհքին սիրումենք՝ շիմանալով ի՛նչ է շահն,
Յանկարծ տեսնումենք ժամհարին՝ բերաւ առ մեզ ձեռին բահն
Ձի՛ թողում՝ որ բարի գործեր գանենք մեզ պաշար աշխարհն:

Սէյեադ թէև քոյ անուներդ նմանացրել էս որսորդի,
Աշխարհքի հեան մի՛ կուլիր, անօգնական էս՝ անորդի,
Թէ խելք ունիս ամէն գործդ նորա գործերին լծորդի,
Թէ ո՛չ, նա է մէկ անիրաւ և անողորմ խաղաղուրդի,

Յանկարծ կու կապի ստները՝ զասարի նման կըմորթի,
Որովհետև շատ է քերթել քեզ նման ոչխար աշխարհն:

18⁷/₇ 53. Ներհան:

ԳԵՓ.

Քոյ հոգւոյդ մեռնեմ, Բարբարէ,
Չայնդ հրեշտակի բարբառ է,
Դեր բերանուժս՝ զովանամ,
Գիտեմ՝ շրթունքդ սառ սառ է,
Քոյ հոգւոյդ մեռնեմ, Բարբարէ ւ:

Ճակատդ արքայական զարդ,
Աչքիդ չի՛ կարող հայել մարդ,
Թուշերըդ է նոր բացուած վարդ,
Բուխաղըդ սպիտակ մարմար է:

Ազուիդ խօսքերն ճշմարիտ,
Առամըդ ինչի՛ մարգարիտ,
Լաւ խնացի՛ր չարըդ՝ բարիդ,
Ստինքդ առ իս կարկառէ:

Էդ ծոցիդ լոյս զամբիւղեցը,
Փոքր ինձ էլ տուր եռւղեցը,
Թերթերուկիդ երկիւղեցը
Իլխիս մազերը ծառ ծառ է:

Դօշըդ է սատափի տախտակ,
Փորըդ կապուտագոյն սպիտակ,
Դէմքիդ խալերը փայլունակ,
Հանդերձդ փուչ փուչ՝ թառ թառ է:

Մատաղ ես, բնութիւնդ փոխի՛ր,
Ոտերըդ երեսիս կոխի՛ր,
Սէյեադին արա՛ սև մոխիր
Քանի կրակդ վառ վառ է:

1. Մեծայն ասուց վերջու-ն կրկնէմ զայս ասուց:

Ժ Լ Գ Գ :

Բարով տեսնեք, աղա ժլատ,
Ընդէր այդչափ սիրես փողն,
Դու նրան լաւ ես՝ նա քեզ վատ,
Կա է քեզ կեանքից զրկողն:

Կ'սպանի քեզ նորա շահն,
Կա է կտրել քոյ իշտահն,
Նորա ճիւղքին է քոյ մահն,
Քոյ աղադ է սուտ խօսողն:

Ցանկանալով շատ փող կուտել,
Մին կուշտ փորով հաց չես ուտել,
Քոյ կամաւ զնդան ես մտել,
Չես սիրել ուտող՝ խրմողն:

Լաւ ապրողին թշնամի ես,
Խասիտներին խնամի ես,
Իմացի՛ր, դարտակ քամի ես,
Քեզնից լաւ է խածանողն:

Ժլատ բաւը շատ եմ լսած,
Բայց քոյ նմանը չեմ տեսած,
Ճննդեան օրից ըսկսած —
Թշնամիդ է փող խարջողն:

Ո՛վ որ եղև քեզ բարեկամ,
Տանըդ չի՛ տեսնալ հացի համ,
Թէ զափուլ կերաւ մէկ անգամ,
Ջանըդ կընկնի մահուան դողն:

Տալը կ'ատես՝ առը կուղես:
Հաւի ճուղից մազ կուխուղես,
Դու մէկ տակը ծակ հաւուղ ես,
Բայց կու սիրես փող պահողն:

Քեզնից կակող է սև քարն,
Փակ է սրտիդ ճանապարհն,

Չես սիրել զաղքատ օտարն,
Կուփասցնես հաց ուղողն:

Կու մեռնես՝ քեզ կրպատանեն,
Պատիւըդ քեզ կուլի շանէն,
Կինըդ՝ փողըդ այլք կ'տանեն,
Կուտեն՝ կու քըֆրեն դատողն:

Այս խրատս լաւ ահանջ աւ,
Աւանց դիր արս՝ տառ առ տառ,
Թող ժլատութիւնը մուրտառ,
Օրհնէ՛ զայս խրատ գրողն:

Լսի՛ր Սէյեադի խօսքերըն
Ընարեա՛ առատութեան սէրըն,
Թէ՛ ս'չ, երբ մեռար՝ տէրտէրըն
Լաւ կ'անիծի քոյ ծնողն:

Մ.ՉԳ Երեւն:

Պատահմամբ յԱղեքսանդրապօլ
Տեսայ Շիրին երգեցողին.

Լազզաթ առի նրանից բօլ,
Փառք տալով շնորհք տուողին:

Բերանումն չ'կայ կոշտ բառ,
Խօսալն է հրեշտակի բարբառ,
Իմաստութեան պաղատու ծառ,
Էրնակ նրա հեռեողին:

Որքան հիմա կան աշուղներ,
Սա է նրանց գլուխ և տէր,
Համ՝ ցաւակից է, համ՝ տէրտէր,
Շատփառք սորա ստեղծողին:

Զուլթաին՝ Գաբրիէլեան փող,
Սազն՝ մարդոյ հողի տուող,
Կեզուն՝ ճարտար, քաղցր խօսող,

Աստուած ողորմի ծնողին:

Աշակերտքն մօտին շարուած՝
Ընդ վարժապետին յարմարուած,
Կերբողական անիւ լարուած,
Զոր մուղայքն մարդկանց թողին:

Սէրն սրտիցս թափանցաւ,
Չիմացայ վակժն ո՞նց անցաւ,
Մին հաւատի էինք անցաւ
Աշխատանօք հողացողին:

Գիշեր էր՝ Լալայեվանց տան,
Որ ունէր հարսանեաց խրախճան,
Բազմեալ կային քանի իշխան,
Յիշեց դովլաթ բաժանողին:

Աւատներին դովաւանեց,
Ո՛վ ժլատ էր՝ ձայն չի՛ հանեց,
Իւր էնտեղ դալն փոշմանեց,
Բամբասեց հիւրք կանչողին:

Ե՛կ՝ խորհուրդդ մի՛ տալ ետդին,
Կամիս՝ տո՛ւր քոյ պէս ուսթադին,
Շամախեցի Հայ Սէյեադին,
Ազգի պատիւ որոնողին:

18⁶/₁₀ 53:



Հայաստան:

Ի՞նչ որդի՛ որ իւր հօր քաշած վատ օրերը լաց կուլի,
Երանի՛ այն արգանդին՝ որ կնակէսին ծնած կուլի.
Հայաստանի աւերակքը ի՞նչ աչք տեսնի՛ թաց կուլի,
Վատ բաներից ուրախանող սիրտն անիծած կուլի,
Դժոխային ժառանգ մարդն միշտ չարախնդաց կուլի:

Հազար ութ հարիւր յիսուհի և երեք Փրկչական Թուին,
Երեւանու երկրումը ինձ Մովսէսի պաշտօն տուին,
Տեսի Անի, Թաւրի, Գառնի, Թաւրիշ, Արտաշատ, Դվին,
Վաղարշապատ, Երուանդաշատ, Մօզ, Արմաւիր և Աւին,
Ո՛վ Աստուած իմ, սրանց նման արդեօք էլ շինուած կուլի:
Էջմիածին, Գայեանէ, Հռիփսիմէ, Շողակաթ,
Աճընկաւ, Մուղնի, Եղվարդ, սուրբ Գեորգ 'ի Կորկաւաթ,
Սուրբ Կարապետ, սուրբ Քրիստափոր, Կախավկայ անապատ,
Խոր Վերապն ու սուրբ Գեղարդը ո՛վ տեսնի՝ կու լինի մաթ,
Ո՛վ որ սրանց արժանանայ՝ մեղքերից փրկուած կուլի:

Ո՛վ Հայկազունք, էս շինուածոց մին անպիտան սև քարին —
Լաւ Հայն ո՞նց մինչև մահ կը փոխի ողջ աշխարհին.
Հայաստանում անց կացրած մէկ օրիս չ'արժիլ տարին,
Թէև քանդուածքը տեսնալիս՝ սրտէս կաթուամէր արին,
Հաւաքանքս մարդ չիմացել՝ Տէրն ինքն լած կուլի:

Հայաստանն չի՛ նորոգվիլ, Սէյեա՛դ, դու էդքան լալով.
Այս նշաններն էլ կը կորչին՝ փոքր ինչ առաջ գնալով,
Տան հիմն ո՞նց չի՛ քայքայվիլ՝ տանուտէրն շնալով,
Հայ չի՛ տեսայ՝ որ հաւաքէ՛ այս բաները տեսնալով,
Որի աչքերը թաց տեսի, ասամ, թուք քսած կուլի:



Աղանդաւորի գեղեցկութիւն:

Կազ ու զամզէդ թանգ մի ծախիլ՝ բազարն էժան է հիմա 1,
Կրան առաջ շատ գին ունէր՝ աչքից ընկած բան է հիմա 2:

Էն աղջիկն, որ դուրս գալիս տանից՝ հազար արիւն կանէր,
Ոմանց յոյս և կեանք կընծայէր՝ ոմանց յուսահատ կըսպանէր,
Համարեա՛ թէ մարդկան համար մէկ ամենազօր իշխան էր,

1 և 2. Մեծաւոր աստուծոյ վերջումն կընէնէ՛ս պայտասիկ պտղո՛ւ:

Կնալէս էր կարծում շրջանը հանապազ այնպէս կուբանէր,
Երբ որ էհաս քառսուն ամաց՝ ասացին, անբան է հիմա:

Էն սիրունն՝ որ նա իրան գեղեցկութեամբը հարուստ էր,
Չէր մտածում, որ նա իրան վերայ կարած մէկ հողուստ էր,
Մինչ դեռ հաս էր, ամէն տեսնող նրան սիրահար էր, դուստ էր,
Երբ ծերացաւ՝ ասին, սրան այս պատիժը՝ ի վերուստ էր,
Թէ որ տեսնաս կերպը՝ կասես, այլանդակ դաղան է հիմա:

Էն նազելին՝ որ անդադար մարդ խորովելով ման կուգար,
Եթէ սիրոյ աչօք հայէր, մեռեալ մարմնոյն նոր հոգի կուգար,
Ո՛վ մօտը գնար անարատ՝ էն տեղից անհաւատ կուգար:

Թէ կամենար՝ սուրբ Յովսէփն էն կեանքից անգիւման կուգար,
Թէ հարցանես նորա գործը՝ ջաղցի պահապան է հիմա:

Այն գովելին՝ որ միշտ նրան կու գովէին աշուղները,
Ոմանք ունքը, ոմանք աչքը, ոմանք թուշը, ոմանք սէրը,
Որ կամենար՝ մէկ բոպէում դե կու շինէր մարդոյ ծերը,
Սիրա որսալոյ թօռ էր շինել փայլուն ծամերի մաղերը,
Քուրսուռ տակին վեր շքնթունած՝ մէկ աղա մարջան՝ է հիմա:

Սէյեա՛դ, քոյ էս ասածներով սիրուններին առ չի՛ լինիլ.
Տատասկի ծառը ջրելով՝ քաղցրապտուղ ծառ. չի՛ լինիլ,
Ոչխարի մարթ հագցնելով՝ գայլի ճուտն դառ չի՛ լինիլ,
Հաւատացի՛ր, որ ամէն կին բնութեամբ վաւճառ չի՛ լինիլ,
Կորա համար այս աշխարհս, համարեան, զընտան է հիմա:

Տըրոււնջ :

Չէիր իսկ նաւավար, այլ անբան տաւար,
Քեզ միշտ հարկաւոր էր հմուտ ղեկավար,
Դու ո՛չ հողմից տեղեակ էիր՝ ո՛չ կողմից,
Ի զուր դու զնաւդ կործանման տուար:

* Աղա մարջանն՝ է Տարգմէտոյ Կապէէն:

Ծառերի միջին քոյ ծաղրդ էր հանդարտ,
Նաւերին քոյ նաւըդ էր շոքեղ և զարդ,
Բայց դու արբեցեալ մոլութեան գինով,
Զվիճակ խեղճ նաւիդ ձգար 'ի թակարթ:

Թէ խելօք նաւաւար չունենայ նաւըն,
Շուտով կ'տարածվի անշահ համբաւըն,
Աս' տի ինքն իրան 'ի կորուստ կուտայ,
Որ դու քեզ ետուր քոյ յիմար կամաւըն:

Այլազանց նաւերն մնացին անփորձ,
Բայց քոյ նաւըդ եղև քայքայեալ՝ անգործ,
Ամէն ոք գիտէ, զի մարդն աստանդական
Կենաց մէջ չի տեսնալ իւր վերայ լաւ ձորձ:

Վայ քեզ, խեղճ Հայաստան, նաւ անկառաւար,
Բաղդն միշտ տուաւ քեզ օտարաց յաւար,
Երբ էանց շառաւիղ տան Լուսաւորչեան,
Մերկացար 'ի լուսոյ՝ մնացիր խաւար:

Որդեք քոյ խորթացեալք և ո՛չ հարազատք,
Ամէն կերպ չարութեանց ծառայք անազատք,
Ընդ առաքինութեանց երբէք չեն ծանօթ
Ո՛չ ռամիկք, ո՛չ իշխանք և ո՛չ սրայազատք:

Չգեն զմիմեանս 'ի թշուառ վիճակ,
Յորոգայթ մահու և դատաստանի տակ
Ի կորուստ միմեանց սուտ վկայելով,
Աւաջի այլազգեաց լինին խայտառակ:

Ճաշակը չեն առած երբէք բարութեան,
Անդադար որոնեն զնիւթ չարութեան.
Մինչև չի հեռանան բնութեան ցաւերից,
Պիտի մնան անշուշտ 'ի վատթարութեան:

Հայ չ'կայ՝ որ իրան կորստին վայ տայ,
Իւր աշխատակցին ճշմարիտ փայ տայ,
Եթէ որ մէկ Հայու՛մ լաւ վիճակ տեսնի,
Սգալով կուտրամի՝ ո՛չ թէ կու խայտայ:

Արդեօք, ո՞վ տուաւ մեզ զայս վատ բնութիւն,
Փոխանակ հեղութեան չար յանդգնութիւն,
Ես ս'նց հաւատամ՝ թէ Հայք ունեցել են
Ընտիր ընտիր դործեր, կամ դիւցազնութիւն:

Չկայէն սիրեն միշտ՝ ս'չ թէ զԱբէլն.

Չսչխարն ատեն և պատուեն զգէլն,

Այս է պատճառն՝ որ դլուխ պատճառն
Բարկութեամբ խղելայ մեր բաղդի թեւն:

Չասէք՝ սուտ է սա, կամ անտեղի անաղ,
Իմ խօսքերիս միջնն սուտն է յոյժ նուաղ,
Սէյեանդ, ասա՝ մի՞թէ ունիս ցանկութիւն
Գանդատել ազգիցըդ միշտ և հանապաղ:

1 և 2: Լ' Եւան Արդայ:

Հայաստան լայն, աւեր ունայն, ես միմիայն,
Դրամոցս թիւ, կարէր հազիւ, պտուտել զանիւ,
Թշնամւոյն ձայն ասէր՝ զՀայն միանգամայն
Կամիմ՝ 'ի վաղիւ, զօրօք անթիւ, բրդել լրիւ.
Հազար աւանդ, որ անսուաղ թալկացայ վաղ,¹
Դէմքիս ծիծաղ, երգելով տաղ, մտի 'ի դադաղ²:

Չար նախարարք չեղեն սատարք, եղեն անկարդ,
Ուր չկայ սէր, անդ անվաւեր է սուրբ պատուէր,
Աղուծ արարք, յոյժ բազմաշարք, թողին անարդ
Հարուստ հանքեր, սիրուն վանքեր աւեր՝ անտէր:

Վատ հպատակք, աննպատակք, ծաղր և կատակք,
Աւազոյ նման եղեն ցիրուցան, շուտ մուացան
Նախնեաց կտակք, եղեն վտակք առանց դտակք,
Չեա ջրոյ ձեան, շուտ չորացան, զիս դերի տուան:

1 և 2: Լ' Եւանայն արտնց վերջու-մն կրկնէն՝ զայստսիկ արդս:

Եղսնկ ակունք, էր չառնէք սուգ, յեղուք արտասունք,
Մի՞թէ այս ցաւ վատահամբաւ է դեռ սակաւ,
Քանի՞ որդունք և անասունք եղեն արթունք,
Ո՛վ ափսոսաւ, երբ լսաւ՝ թէ Սէյեադն անկաւ:

Լ. — ազգասէր եղբարս Տ. Գեորգ — Տ. Յովնանէ
Թէոփոսեանի Հովնաթանի Տէրեղի:

Հայոց ազգն՝ եթէ վերին կամօք անտէր չի մնար,
Նրան Չեզ պէս բազմահանձար հաւատարիմ ո՛վ կ'տար.
Չեր սրտի մեծ ցանկուլթիւնն ազգի լաւ վիճակն է,
Յետին Հայն Չեզ համար է հարազատ ազգ և եղբայր.
Թո՛ղ պարծենայ հսկայն մեր Հայկ, որ Չեզ պէս սերունդք ունի,
Չեզ պէս որդւովք է կարող նա լինիլ միշտ գերամեծար.
Ի շխանք շատ ունի ազգը, բայց ձեզ նմանը սակաւ է,
Ձի ցաւումէք դուք տեսնալիս Հային անբաղդ, կամ տկար.
Պատրաստ էք դուք 'ի շահ ազգիս տալ Չեր ամէն կայքը,
Եթէ նորա փրկուլթեանը կարէր լինիլ մէկ հնար.
Հայ անունը ո՛չ թէ դրամօք, այլ խնամօք կու ձարվի,
Հայ չի՛ տեսի, որ Չեզ նման սիրէ զազգը անդադար.
Երանի՛ Չեր ծնողացը, որ Չեզ պէս իսկ Հայ են ծնել,
Նրանց հոգւոյ բնակարանն է երկնից լուսեղէն կամար.
Տուն Չեր է իսկ Տուն Այ, իսկ դուք նորա զարդն էք,
Տանն Այ սուրբ սիրտ պիտի՛ ո՛չ թէ փիլն, կամ վեղար.
Չեր տան ամէն անդամներն վերին շնորհաց որդիք են,
Աճ Չեր փառքն ու պատիւը արացէ երկնից հաւասար.
Եթէ Չեզանուամ չի՛ տեսնէր այս պատմած յատկուլթիւնը
Սէյեադի պէս Հայն՝ ընդէ՛ր կ'ընարէր Չեզ իւր բարերար:

Հոնէլուհ :

Պատմութեանս առարկայից մէկն Մէն տառն է, միւսն՝ Նուհ,
 Այնչափ սիրահար են միմեանց՝ որչափ սիրէ մուկն զկատուն.
 Մէնի կամքն նա է, որ այս աշխարհիս մէջ Նու տառ չի լինի,
 Որ ամէն տեղ իրան գուլեն, Նուի համար մէկ բառ չի լինի.
 Սրանց երկուսի կամքն է Հոյ տառի բերնին դնել սանձ,
 Յետոյ գրպանը դարտակել՝ իրանց համար շինել մեծ գանձ.
 Թէ Հոն գրպանին նեղուի տայ, կու գանի շատ Մէներ՝ Նուեր,
 Սոքա յափշտակել կամին, և ո՛չ թէ կամաւոր նուէր.
 Հոյի գլխին երկար միջոց փորձութեան քարեր է կըպել,
 Վասն որոյ ո՛չ Մէնն՝ ո՛չ Նուն չեն կարենալ նրան խաբել.
 Մինչ նրանց շահը չի տեսնի՝ Հոն իւր քսակը չի բանալ,
 Խոստմանց չի հաւատալ, յետոյ խաբուիլ՝ յիմարանալ.
 Քանզի Հոյին, սրանց նման, Վէնն ու Այնն էլ խոստացան,
 Խուստմունքը չի կատարուեց, բայց բաւական փող ստացան.
 Բարեգործ Հոյ, ինչ լաւուի ունիս՝ ցոյց տուր դու քո Քէն,
 Կու փոշմանիս, թէ չի լսես քո խոնարհ՝ հարազատ Սէյն :

Նու չարալէզուս :

Ո՛վ կեղծաւոր ազգ մարդկան,
 Է՛ր միշտ թափես թոյն լեզուիդ.
 Ինչ որ ասեն, է արժան —
 Քո չարութեան բոյն լեզուիդ.
 Ի սէր մարդացեալ Փրկչին —
 Փոփոխեա՛ զգոյն լեզուիդ:
 Ո՞նց գուլեմ, որ ճանաչեն,
 Էդ բնութեամբ Յոյն լեզուիդ:
 Սէյեադ, փոքր ինչ խրատ տուր —
 Քո էլ մի և նոյն լեզուիդ:

Ե ր 4:

Չի դիտեմ, թէ սև հանդերձն ընդէր է խաբուամ աշխարհին՝,
 Թէ սև հագուսան լաւ բան է, դեք մն էր միշտ սև նկարին 2:

Հարսնեաց տան մի մարդ տեսի՝ մօրուքի երկայնքին չափ չուներ,
 Հինդ մարդից աւելի հաց կերաւ, խմացայ՝ որ ինտափ չուներ,
 Նորա լայնատարած փորին Ուլկեանու պէս ափ չուներ,
 Պատառներիցն հասկացայ, որ նա մահուան սարսափ չուներ,
 Որքան որ աւելի ուտէ՝ էշին ի՞նչ վնաս է դարին:

Մէկ թուենգանոց շինն դինեաւ լըցրած՝ դրած է մօտին,
 Բազմահանքն կերին՝ յարեան, նա՛ ՚ի նորոյ թուլացոյց դօտին.
 Թէ անծանօթ տեսներ՝ կասէր, ուտտի՞ է եկել այս լօթին,
 Մէկ մարդ չեղև, որ փախցներ խնճոյքից այն անամօթին.
 Հարցրի. դուք ո՞նց պիտի յագեցուցանէք այդ տաւարին:

Մեր դոված պտուելին ուներ հաստ ու պինդ թիկն ու լանջ,
 Հացից յետոյ փող պահանջեց՝ զետ տէրուէ հարկապահանջ.
 Փողը սակաւ տեսաւ՝ չառաւ, վերաւորեալ՝ արաւ զանջ զանջ,
 Յետոյ սկսեց անիծել չարաչար, որ չի՛ լըսի ականջ.
 Որքան խնդրեցին, չի՛ նայեց, այդ ոչխարամիտ յիմարին:

Երկու մանէթի հաց կերաւ, հինդ մանէթ էլ ստացաւ նազդ,
 Երեքը եցոյց իւր մեծին՝ երկուսը ինքն կերաւ գաղտ.
 Ո՛վ սևի սյուպէս պաշտօնեայ՝ նրան պիտի կոչած անբաղդ,
 Նորա աղօթքն չի՛ կարող լուանալ՝ սրբել հոգւոյ անտ.
 Միայն մարդիկ կուրացել են, չեն յարմարում չարն ու բարին:

Անուամբ՝ թէև համանուն էր երեքսասան առաքելոյն,
 Միայն դործով ո՛չ Ջհուա էր, ո՛չ Թուրք, ո՛չ Մօլթանի,
ո՛չ Յոյն.
 Սագայէլն հայր էր կոչում նորա ծնող շուն դոյն,
 Սևերես լինի յաւիտեան առաջն Հօր, Որդւոյ, Հոգւոյն.
 Որ տաճարում որ նա լինի՝ չի՛ մնալ քար ՚ի վեր արին:

1 և 2. Միայն տանց վերջումն էրէնէմ էլ տաղս :

Ես Սէյեադն եմ հեռաքրքիր, նրանում լաւ բան չեմ տեսել,
Միշտ չարութեան մտքեր տեսի, բարութեան նշան չեմ տեսել,
Նորա ամէն արարմունքը իւր կարգին արժան չեմ տեսել,
Միով բանիւ նորա խեղճն մեռած էր, կենդան չեմ տեսել.
Չարմանք է, թէ ո՞վ է դասել այս գաղանը մարդկան շարին:

18³/₈ 58. 'է Այսպէս Չորն Հայոց:



Մ. Գ. Կ. Ե.

Գիւղացին ունէր մին հեղ աւանակ,
Որոյ բնութիւնից էր նա դոհունակ.
Միայն մէշումը կորչելից վախեց,
Նորա շլինքէն զանգուլակ կախեց.
Էջն սրանով շատ հպարտացաւ,
Չանգուլակին նա նշան հասկացաւ.
Կարծեց՝ թէ հիմա զօրական եղւ.
Բայց խեղճի համար ինաս բան եղւ:

Միայն վաղ օրօք ձեզ տամ իմանալ,
Որ էջն գիտէր պատիւ հասկանալ.
Մինչի զանկուլան բաղդը կու բանէր,
Հաճար, թէ գարի, թէ բաղ մտանէր,
Կու կշտանար և՛ կելանէր թաքուն,
Այժմ գործերը եղեն այլ հանգոյն.
Ուր որ մտանէր մեր նոր իշխանն,
Միշտ ձայն կու հանէր վիզի նշանն:

Կու լիւր տէրն, կառնէր մահալն,
Կու հանէր ծեծով խեղճ աւանակն.
Նորոգին՝ զանկուլի ձայնը իսկ լուեալ,
Ինչպէս որ իւր արտն է մեալ.
Փայտ զոքր կառնէր անգութ՝ անսէրը,

Կու քակէր նորա կողքաճաղերը —
 Ինչափ, որ մեր այս հզօր զօրական
 Ճէրք ընկաւ, մինչ հասնիլը աշնան:
 Ինչպէս չարաչար անդամքը մաշին,
 Որ միայն մնաց սակերքն ու կաշին:

Մարդկանց մէջ էլ միշտ աստիճաններն
 Փոքր լինելիս՝ իւր պլուտ տէրն,
 Ինչպէս որ լինի, անյայտ է մնում
 Եւ ինքն էլ մին ձեւ եօլայ է դնում:
 Իսկ երբ որ էհաս գերագոյն փառաց,
 Իմացէք, ձայնը խիստ հեռու գնաց:

Ողջոյն հրաշարահան:

1

Որբ լերինք, Վայոց Չորոյ,
 Ռ՛ւր են ձեր ծաղիկներըն.
 Դուք մերկացայք, վասն որոյ
 Խոցուեց իմ աղիքներըն:

4

Ընտիր ուխտ Յաղաց քարի,
 Կշան Պաօշայ իշխանին,
 Ընդէ՛ր դու այսքան տարի
 Որբ Թողեր Հայաստանին:

2

Ամենահրաշ սուրբ սենեակ,
 Խորան Արկաղեան խաչին,
 Արեամբ զարդարեալ մանեակ
 Դու յետին և առաջին:

5

Դիւափարատ Հաղին վանք,
 Աւաջնորդաց մենաստան,
 Կիսամեռին կ'տաս կեանք,
 Թէ լինին քեզ ապաստան:

3

Նորավանից պայծառ ուխտ,
 Յիշատակ Տանն Օրպէլեանց,
 Որդեքդ եղեն պանդուխտ,
 Փառքդ զեա ստուեր կանց:

6

Ստեփանոսեան Տապան,
 Որ 'ի Մօղ խողխողեցաւ.
 Քե դաւառն յաւիտեան
 Վայոց Չոր անուանեցաւ:

7

Ապառաժ լեռնից կտիած,
Մարտիրոսեան ուխտատեղ,
Անմիաբան, մոռացուած,
Ո՛չ փառք ունիս, ո՛չ շքեղ:

8

Աքանջելիդ Գինդուանդ,
Ընդ սախլք Կապուտ լերին,
Արփա գետն վաղէվազ
Քալուամէ քս ոտներին:

9

Քարկոփայ սիրուն տաճար,
Քարերըդ սրբատաշ են.
Չկայ շէնք շէնքիդ յարմար,
Կոչվումես Սմբատաշէն:

10

Հեր-Հեր դիւղի սուրբ Սիօն,
Վանորէից թանգ ակրն,
Դու քարոզչաց ամբիսն,
Քանդեց քեզ չար Վասակն:

11

Շատ տեսի ձեզ՝ լիացայ,
Ատ գաւառապետ գոլով.
Ձեր հրաշքին հիացայ,
Տեսնելով յոլով յոլով:

12

Այժմ կամաւ Տէրութեան
Ես 'ի ձենջ հեռանումեմ,
Գուցէ՛ ցաւօք ծերութեան
Օտար տեղ մեռանումեմ:

13

Օրհասն ո՛ւր որ տանի,
Դուք էք իմ պահապանս,
Չեզ նման օղնականի
Մատաղն է միշտ իմ կեանս:

14

Դուք էք հաւատոյ թաղն
Ե՛ւ փառք հաւատացելոց,
Դուք էք կենաց մուրհակն
Ե՛ւ յոյս հիւանդացելոց:

15

Հայոց ազգի ճրագն էք,
Թշնամեաց համար սուր տէգ.
Դուք նոցա վառ կրակն էք,
Ի ձենջ լինին ահաբեկ:

16

Բաղդաւոր է Սէյեադն,
Չեզ պէս հովանիք ունի.
Նորա ամէն դանդաան,
Դու էլ լինի, կընդունի:

18 ⁵/₈ 58. 'ե Ալայոյ Չորն Հայոց:



Փարսապար անուանե՛լ Աղգասէր Տէաբոյ, որք ըն՛ բանիւ և
ըն՛ արդէամբք խրատաւեցին զնշ ցայս գործ աղգօգուս:

Ամենապատիւ Սրբազան Տէր Սարգիս Արքեպիսկոպոս Զա-
լալեանց, Առաջնորդ Վրաստանի և Իմէրէթի Հայոց,
'ի Տփլիս:

Ամենապատիւ Սրբազան Տէր Թադէոս Արքեպիսկոպոս Բէկ-
նազարեանց, Առաջնորդ Հնդկաստանի և Պարսկաս-
տանի Հայոց, 'ի Կորն-Զուղայ:

Արժանապատիւ Տէր Գաբրիէլ Ժայրադոյն վարդապետ Այ-
վազեանց, Առաջնորդ Բեսարաբիոց և Կորն-Վախ-
իջլեանի Հայոց, 'ի Թէոդոսիա:

Արժանապատիւ Տէր Ստեփանոս Ժայրադոյն վարդապետ
Գէորգեան, Առաջնորդ Երևանու նահանգին Հայոց,
Երևան:

Արժանապատիւ Տէր Ստեփանոս քահանայ Մանգլինեանց,
Խմբադիր Մէղս-Հայաստանի պատուականադոյն
լրագրին, 'ի Տփլիս:

Արժանապատիւ Տէր Մովսէս աւագ քահանայ Մայեարէնեանց,
Նախանգամ Կանոնաորիայի և Ապետ, 'ի Տփլիս:

Արժանապատիւ Տէր Աբրահամ քահանայ Տէր Թովմասեան,
'ի Մարտիրոս գեղջ:

Արժանապատիւ Տէր Մսեր Գրիգորեան Մսերեանց Զմիւռ-
նացի, Գերընաիր Մաղխաորոս Աստուածաբանութեան,
Հայկաբանութեան Ուսուցչապետ, Կայսերական Եղանաց
Ապետ, և Խմբադիր Ճոռտաղ բաղմարդիւն ամսագրին,
'ի Մոսկուա:

Այվազովսկի՝ Տ. Յովհաննէս Կասամիդինեան, Առաիճանաւոր
և երևելի նկարիչ, 'ի Թէոդոսիա:

Աղագաթեանց՝ Տ. Նիկողայոս Յովհաննիսեան Տփլիսեցի,
Ուսանող, 'ի Մոսկուա:

- Ակիմեանց՝ Տ. Նիկողայոս Ագաթանեան, 'ի Ս. Պ. Բուրդ:
— — — — Տ. Իսահակ Սողոմոնեան, Ուսանող, 'ի Մասկուա:
Արարատեանց՝ Տ. Յովսէփ Իսահակեան, Ատիճանաւոր,
'ի Տփլիս:
Արղուժեանց՝ Տ. Նիկողայոս Աղբէասեան, Իշխան, 'ի
Տփլիս:
Ատուածատրեանց՝ Տ. Մելիք-Սարգիս, 'ի Կնիշի:
— — — — Տ. Աւաքեալ Հուշեցի, 'ի Բաքու:
— — — — Տ. Ատուածատուր Յովհաննիսեան Երևանեցի,
'ի Մասկուա:
Արաղեանց՝ Տ. Գեորգ, Տիառւեարնի Սովեանիկ, Երևան:
Աղբէկեանց՝ Տ. Գրիգոր, Կօլլէժսիկ Բէգիտարատօր, Երևան:
Աղբէսեանց՝ Տ. Յակոբ Իսահակեան Հուշեցի, 'ի Բաքու:
Աթաբէգեանց՝ Տ. Բաբայ Սիմէօնեան, 'ի Հուշի:
Այվազեանց՝ Տ. Գրիգոր Թովմայեան, 'ի Բաքու:
Ադամեանց՝ Տ. Աբդար Իսահակեան, 'ի Բաքու:
Ադամջանեանց՝ Տ. Յարութիւն Յովհաննէսեան, 'ի Բաքու:
Ամատունի՝ Տ. Նապօլէօն Յովհաննէսեան Տփլիսեցի, Ուսանող, 'ի Ս. Պ. Բուրդ:
Բերայեանց՝ Տ. Մկրտիչ Ղազարոսեան, Ուսուցչատեա և Դատաքննիչ մատենից, 'ի Ս. Պ. Բուրդ:
Բուզաղեանց՝ Տ. Մովսէս Զաքարեան, Ատիճանաւոր, 'ի Ս. Պ. Բուրդ:
Բաղդասարեանց՝ Տ. Սպիրիդօն Աղեքսանդրեան, վաճառական, 'ի Մասկուա:
Բաբաջանեանց՝ Տ. Վահան Արտէնեան, Գուբերնսիկ Սեւրեաար, Երևան:
Գուլամիրեանց՝ Տ. Ստեփանոս Մնացականեան, վաճառական, Երևան:
Գուրգէնբէգեանց՝ Տ. Յովհաննէս Յովսէփեան Տփլիսեցի, Ուսանող, 'ի Մասկուա:

Գեղամեանց՝ Տ. Գեղամ, Աղնուահան, յԵրևան:

Գեղեանեանց՝ Տ. Յովհաննէս Դաւթեան, Աւանձին Խորհրդական, Դրան ԿՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Մեծութեան Սենեկապետ և Հոգաբարձու ընդհանուր Ուսումնարանաց Ս. Պ. Բուրդայ Շրջանակի, 'ի Ս. Պ. Բուրդ:

— — — — Տ. Նիկողայոս Դաւթեան, Կարգադիր Ճեմարանի Արևելեան Լեզուաց Տեարց Կազարեանց, 'ի Մասկուա:

Դիւլորիէ՝ Տ. Եղուարդ, Ուսուցչապետ Արևելեան Լեզուաց, 'ի Փարիզ:

Դաւրիշեանց՝ Տ. Դաւիթ Ստեփանոսեան Տիփսիսեցի, վաճառական, 'ի Մասկուա:

Եսթուլեանց՝ Տ. Յարութիւն Մակարեան, Ատիճանաւոր և երեցփոխան երկց եկեղեցեացն Հայոց, 'ի Մասկուա:

Եարալեանց՝ Տ. Գեորգ Դաւթեան Սըղնասիսեցի, վաճառական, 'ի Ս. Պ. Բուրդ:

Եղիազարեանց՝ Տ. Գեորգ Գրիգորեան, Կօլլէժսկի Սեկրետար, յԵրևան:

— — — — Տ. Ստեփանոս Իրիգորեան, Ատիճանաւոր, յԵրևան:

— — — — Դաւիթ-Բէդ Զաքարեան Խօյեցի, Աղնուահան, յԵրևան:

— — — — Տ. Աղաջան, Կօլլէժսկի Սեկրետար, յԵրևան:

Եարամիշեանց՝ Տ. Մարգարայ Մահաթի-Յովհաննէսեան, 'ի Շուշի:

Եղեանց՝ Տ. Կարապետ Յարութիւնեան, Ատիճանաւոր, 'ի Ս. Պ. Բուրդ:

Զօհրաբեանց՝ Տիկին Մարգարիտ Պեարոսեան, 'ի Համախի:

— — — — Տ. Մովսէս Սրապիոնեան Արցախեցի, Աղնուազարմ և Ապետ, 'ի Համախի:

— — — — Տ. Կոստանդիանոս Յարութիւնեան, 'ի Մասկուա:

Զառափեանց՝ Տ. Յակովբ Հայրապետեան, 'ի Շուշի:

Ինֆիալեանց՝ Տ. Աւետիք Մկրտչեան, Գրաւաճառ, 'ի Տփլիս:

Թամամչեանց՝ Տ. Իսահակ Սողոմոնեան Տփլիսեցի, Ուսանող, 'ի Մոսկուա:

Թաւրիզեանց՝ Տ. Աղաջան Մարտիրոսեան Շուշեցի, 'ի Բաքու:

Թէմուրեանց՝ Տ. Աղեքոսանդր Տէր-Յովհաննիսեան Տփլիսեցի, Ուսանող, 'ի Մոսկուա:

Թարխանեանց՝ Տ. Գրիգոր Մատթէոսեան, Տիտուլեարնի Սովեանիկ և Ազգեա, յԵրևան:

Ժամհարեանց՝ Տ. Կարապետ Յովհաննիսեան, 'ի Շուշի:

Իզմիրեանց՝ Տ. Յովսէփ Աստուածատրեան Ղզլարեցի, վաճառական, 'ի Ս. Պ. Բուրդ:

Իւզբաշեանց՝ Տ. Կոստանդիանոս Յարութիւնեան Տփլիսեցի, 'ի Մոսկուա:

Լազարեանց՝ Վէհաղն Խաչատուր Յովակիմեան, Աւանձին Խորհրդական, Դրան ԿՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Մեծութեան Սենեկապետ, Հոգաբարձու Ճեմարանի Արևելեան Ազգուաց Տեարց Լազարեանց և՛ եկեղեցեացն Հայոց Ս. Պ. Բուրդայ և Մոսկուայ, 'ի Ս. Պ. Բ:

Խաչիպեանց՝ Տ. Յարութիւն Պողոսեան, Ատիճանաւոր, 'ի Կորն-Նախիջևան:

Խաչաթեանց՝ Տ. Բախչի Կիրախանեան Տփլիսեցի, վաճառական, 'ի Մոսկուա:

Խօջանեաթեանց՝ Տ. Ռսկան Տէր-Յարութիւնեան, Կօլլէժսկի Սեկրետար, յԵրևան:

Խաչատրեանց՝ Տ. Գէորդ Յարութիւնեան Ղբիմեցի, 'ի Մոսկուա:

Կրասիլնիկեանց՝ Տ. Ներսէս Մկրտչեան Շուշեցի, 'ի Բաքու:

Հակվերդեանց՝ Տ. Գէորդ Թէոդորոսեան, Բժիշկ, 'ի Տփլիս:

— — — — Տ. Յովհաննէս Թէոդորոսեան, Ատիճանաւոր, 'ի Տփլիս:

- — — — — S. Կնիսդայոս Աւետիքեան Տփխիսեցի, Աստի-
ճանաւոր, 'ի Հուշի:
- Հէջուբեանց՝ S. Գաբրիէլ Յովհաննիսեան Տփխիսեցի, Ու-
սանաղ, 'ի Մոսկուա:
- Հասան-Չալալեանց՝ S. Ռուբէն Մնացականեան Երևանեցի,
'ի Մոսկուա:
- Ղորղանեանց՝ S. Զօհրաբ Բարսեղեան, Կօլլէժսիկ Սեկրե-
տար, Երևան:
- Ղասաբեանց՝ S. Յովհաննէս Անդրէասեան Գօրեցի, 'ի Բաքու:
- Ղուլիեանց՝ S. Մկրտիչ Հուշեցի, 'ի Ղուբա:
- Մսերեանց՝ S. Զարմայր Մսերեան, Ուսուցիչ և Աերակացու-
Ճեմարանի Արևելեան լեզուաց Տեարց Կաշարեանց,
'ի Մոսկուա:
- Մադաթեանց՝ Տիկին Ռսիկ Յովսէփեան, Երևան:
- — — — — S. Պետրոս-Բէգ Տէր-Յովսէփեան Համախե-
ցի, Կապիտան 'ի կարգէ հեծեւազօրաց և՛ Ազգային
քաջահամբաւ Երգիչ, Երևան:
- Միանասրեանց՝ S. Մեքայէլ Մեորովեան Ըշտաբո-Կապի-
տան, 'ի Տփխիս:
- — — — — S. Արշակ Մեորովեան Տփխիսեցի, Ուս-
նաղ, 'ի Մոսկուա:
- Մէլիք-Յովհաննէս, Տանուտէր, 'ի Փաշալու:
- Մազիրեանց՝ S. Կերոսէս Գեորգեան Ղըրիմեցի, 'ի Մոսկուա:
- Մելիք-Մուրադեանց՝ S. Գեորգ Հին-Նախիջևանեցի, Գու-
բէրնսիկ Սեկրետար:
- Մալենցեանց՝ S. Գրիգոր Տէր-Մկրտչեան, Գուբերնսիկ
Սեկրետար, 'ի Վաղարշապատ:
- Մարկոսեանց՝ S. Յովհաննէս Յարութիւնեան Տփխիսեցի,
Բժիշկ, 'ի Մոսկուա:
- — — — — S. Սողովման Յարութիւնեան Տփխիսեցի, Ու-
սանաղ, 'ի Մոսկուա:
- Մերզա-Աւագեանց՝ S. Յովհաննէս, 'ի Հուշի:

Մխիթարեանց՝ Տ. Մկրտիչ Կարապետեան, 'ի Բաքու:

Մելիքեանց՝ Տ. Մատթէոս, 'ի Բաքու:

Մէհրաբեանց՝ Տ. Յակովբ Յարուժիւնեան, 'ի Բաքու:

Մարագրեանց՝ Տ. Յովհաննէս Գրիգորեան Տփլիսեցի, 'ի
Բաքու:

Մակեդոնեանց՝ Տ. Յարուժիւն Խաչատրեան, 'ի Նուխի:

Յարուժիւնեանց՝ Տ. Մովսէս Մահտեսի-Մարկոսեան Երևա-
նեցի, վաճառական, 'ի Տփլիս:

— — — — Տ. Մելիք-Բաբա, 'ի Բաշքեանդ:

Յօնանեանց՝ Տ. Յովհաննէս Ստեփանոսեան Տփլիսեցի, վա-
ճառականաց Խորհրդական և Աջակտ, 'ի Մոսկուա:

Յովհաննիսեանց՝ Տ. Յարուժիւն Յովհաննէսեան, Բժիշկ, 'ի
Տփլիս:

— — — — Տ. Ներսէս Տէր-Գէորգեան, Ատիճանաւոր,
Երևան:

— — — — Տ. Վաղարշակ Ներսիսեան, Երևան:

— — — — Տ. Սարգիս Վահրամանեան Արցախեցի, Ռուս-
նոց, 'ի Փարիզ:

— — — — Տ. Գէորգ Յովհաննէսեան, Ղուբերնսկի Սեկրե-
տար, Երևան:

Յովսէփեանց՝ Տ. Պետրոս Պօղոսեան, 'ի Բաքու:

Յովսաթանեանց՝ Տ. Յովհաննէս, Երևան:

Ներսէսեանց՝ Տ. Մովսէս Ղազարոսեան, վաճառական, 'ի Շա-
մախի:

— — — — Տ. Գէորգ Պետրոսեան Շամախեցի, 'ի Մոս-
կուա:

Հանչիեանց՝ Տ. Նիկողայոս Սամուէլեան Տփլիսեցի, Ատի-
ճանաւոր, 'ի Ս. Պ. Բուրգ:

— — — — Տ. Պետրոս Սամուէլեան Տփլիսեցի, Ատիճա-
նաւոր, 'ի Ս. Պ. Բուրգ:

Հիսիեանց՝ Տ. Յարուժիւն Յօհանջանեան, վաճառական, 'ի
Հուշի:

- — — — — S. Հուկաս Յօհաննանեան Հուշեցի, վաճառա-
կան, 'ի Կ. Պօլիս:
- Հահնաղարեանց՝ S. Պետրոս-Բէդ Կերսէս-Բէդեան Արցա-
խեցի, վաճառական, 'ի Թէհրան:
- Հահարուհեանց՝ S. Միքայէլ Սարգսեան Դանձակեցի, Ու-
սանող, 'ի Մոսկուա:
- Հահադետանեանց՝ S. Միքայէլ Դանիէլեան Արցախեցի,
'ի Բաքու:
- Հադինեանց՝ S. Աստուածատուր Գրիգորեան Տփլիսեցի, 'ի
Մոսկուա:
- Պատկանեանց՝ S. Քերովբէ Տէր-Պետրոսեան Սաւրոպօ-
լեցի, Ատիճանաւոր, 'ի Ս. Պ. Բուրգ:
- — — — — S. Սերովբէ Տէր-Պետրոսեան Սաւրոպօլեցի,
Ուսանող, 'ի Ս. Պ. Բուրգ:
- — — — — S. Պօղոս Տէր-Պետրոսեան Սաւրոպօլեցի,
Ուսանող, 'ի Մոսկուա:
- Պօպովեանց՝ S. Ռափայէլ Դաբրիէլեան, Դուբերնակի Սեկ-
րետար, 'ի Բաքու:
- Զալալեանց՝ S. Յովհաննէս Ստեփանոսեան, Տիտուլեարնի
Սովետնիկ, յԵրևան:
- Սուլթան-Հահեանց՝ S. Սիմէօն Գրիգորեան Կոր-Կախիջե-
լանեցի, Ատիճանաւոր և Ապետ, 'ի Ս. Պ. Բուրգ:
- Սանասարանց՝ S. Մկրտիչ Սարգսեան Վանեցի, Ատիճա-
նաւոր, 'ի Մոսկուա:
- Սամուէլեանց՝ S. Ստեփանոս Սամուէլեան, Ատիճանաւոր,
'ի Վաղարշապատ:
- Սահակեանց՝ S. Երեմիա Մարգարեան, Ուսանող, 'ի Մոս-
կուա:
- Ստեփանեանց՝ S. Միքայէլ Յարութիւնեան Տփլիսեցի, վա-
ճառական, 'ի Մոսկուա:
- — — — — S. Ստեփանոս Յարութիւնեան Տփլիսեցի, Ու-
սանող, 'ի Մոսկուա:

— — — — — **Տ. Բեգլար Մարտիրոսեան, Ատիճանաւոր, 'ի Բաքու:**

Ստամբուլեանց՝ Տ. Մարտիրոս Յարութիւնեան, Տիտուլեարնի Սովետնիկ, յԵրևան:

Սողոմոնեան՝ Տ. Մկրտիչ, յԵրևան:

Վարդանեանց՝ Տ. Սողոմոն Յարութիւնեան, Ատիճանաւոր, 'ի Ս. Պ. Բուրգ:

Վասակեանց՝ Տ. Կարապետ Յովսէփեան, Բժիշկ, 'ի Տփլիս:

Վարչամեանց՝ Տ. Սարգիս Տէր-Միքայէլեան, Գուբերնսկի Սեկրետար, 'ի Բաքու:

Տէր-Մկրտչեանց՝ Տ. Իրիգոր Մկրտչեան, Ուսանող, 'ի Մոսկուա:

— — — — — **Տ. Նեկողայոս Մարգարեան, 'ի Շուշի:**

Տէր-Յովսէփեանց՝ Տ. Յովհաննէս Ստեփանոսեան, Ուսուցիչ և Վերահացու, 'ի Տփլիս:

Տէր-Ատուլաժատրեանց՝ Տ. Բաղդասար Պապանեան, վաճառական, յԵրևան:

Տէր-Մարտիրոսեանց՝ Տ. Մարտիրոս Տէր-Կարապետեան, Ատիճանաւոր, 'ի Դարալագեաղ:

— — — — — **Տ. Գալուստ Սովսիսեան Երևանեցի, 'ի Մոսկուա:**

Տէր-Մինասեանց՝ Տ. Մէլիք-Հակոբերդի, 'ի Փաշալու:

Տէր-Ղուկասեանց՝ Տ. Ալէքսի Տէր Յարութիւնեան, Ազնիւ և Ասպետ, 'ի Բաքու:

Տէր-Իրիգորեանց՝ Տ. Սարգիս Տէր-Յովհաննիսեան Շուշեցի, 'ի Բաքու:

Տէր-Անտոնեանց՝ Տ. Կարապետ Տէր-Յովհաննէսեան, Գուբերնսկի Սեկրետար, յԵրևան:

— — — — — **Տ. Իրիգոր Տէր-Յովհաննէսեան, յԵրևան:**

Տէր-Մարուզեանց՝ Տ. Յովսէփ Աղբէասեան, յԵրևան:

Տէր-Խաչատրեանց՝ Տ. Ատուլաժատուր, Կօլլէժսկի Բեգլատարատոր, յԵրևան:

Փուղինեանց՝ Տ. Նեկողայոս Մկրտչեան Տփխիսեցի, Ռուս-
նոզ, 'ի Մոսկուա:

— — — — Տ. Գրիգոր Արսէնեան Տփխիսեցի, վաճառա-
կան, 'ի Դաւրէժ:

Քաթանեանց՝ Տ. Յովհաննէս Բաբայեան, Փորագիր, 'ի Տփխիս:

Քանանեանց՝ Տ. Գէորգ Եղիեան Ղզլարեցի, Կանգիտաւ լե-
զուաբանութեան, 'ի Մոսկուա:

— — — — Տ. Խաչատուր Եղիեան Ղզլարեցի, Ռուսնոյ,
'ի Մոսկուա:

Քեալեանց՝ Տ. Մկրտիչ Պետրոսեան, Գուբերնսկի Սեկրե-
տար, յերևան:

Քիչմիշեանց՝ Տ. Աղեքսանդր Յովսէփեան Տփխիսեցի, 'ի
Մոսկուա:

Օրպէլեանց՝ Տ. Աղբրէաս Պետրոսեան, Կօլլէժսկի Բեգիս-
տրատօր, 'ի Դարալագեաղ:

— — — — Տ. Գէորգ Պետրոսեան, Գուբերնսկի Սեկրե-
տար, 'ի Հինն-Ջուղայ:

Օհաննէսեան՝ Տ. Աղեքսանդր, 'ի Կնիշիկ:

Ֆուանգուլեանց՝ Տ. Սահակ Գրիգորեան, վաճառական, յե-
րևան:



17163

2013

